Իսլամը հասկանալու բանալին

Հեղինակ – Աբդուլ-Ռահման Աշ-Շիհա

The Key to Understanding Islam

Իսլամը հասկանալու բանալին

المفتاح لفهم الإسلام باللغة الأرمينية

Հեղինակ – Աբդուլ-Ռահման Աշ-Շիհա

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيحة

Թարգմանությունը

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Արմեն Նալբանդյան

المركز الأوروبي للدراسات الإسلامية

The Key To Understanding Islam

Հեղինակ – Աբդուլ-Ռահման Աշ-Շիհա

Թարգմանությունը.

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Արմեն Նալբանդյան

Ստուգող հանձնաժողով.

- Ահմադ Ալ-Ամիր

Հիմնական հրատարակիչներ.

- Դասախոս Kamal Hassan Ali, World Language Multicultural and Gender Studies ֆակուլտետի դեկան:
- Դոկտոր Ahmad.Turkistani (Ալ-Իմամ համալսարանի դասախոս, օգնական):
- Դոկտոր Khider alshibani (Բյուրեղային վիճակի ֆիզիկա)
- Դոկտոր Ibrahim bin Sa'ad Abu Nayyan
- Դոկտոր Om Hssan AL Shreef (Գրականություն)
- DAUWD Abu Sulaiman Mavins
- Khalid Walter Denston
- Abdulsalaam Abdullateef Al-Britani
- Abdussalam Schalabi
- Annie Torres

© Հոգևոր իրավունքները. Abdul-Rahman Abdul Kareem Al-Sheha:
Հոգեբանական իրավունքները պատկանում են հեղինակին, միայն անվճար տարածման համար, առանց գրքում ոչ մի փոփոխություն կատարելու դեպքում:
http://www.thekeytoislam.com

Ներածություն

l Նախաբան
ll Ընթերցողների համար
lll Ի՞նչ է Իսլամը

- Ի՞նչ է Իսլամը
- Ինչ է ասվել Իսլամի մասին
- Իսլամի սյուները
- Ալլահի առաքյալ Մուհամեդը
- Ի՞նչ են ասում Մուհամեդի մասին
- Հավատքի սյուները
- Ի՞նչ է Ղուրանը
- Ի՞նչ է ասվել Ղուրանի մասին

lV. Իսլամի հիմնական նպատակները
V. Վարվելակարգը եւ բարոյական սկզբունքները Իսլամում
Vl. Իրավունքները Իսլամում
Vl. Ի՞նչ տեղեկություններ ունեք հետևյալների մասին

- Քաաբայի
- Սև Քարի
- Աբրահամի (Իբրահիմի) Մաքամի
- Զամզամ ջրհորի
- Աս-Դաքայի և Ալ-Մարվայի
- Զամատրների (Սատանայի պատերի)
- Իսլամական տոների (Էիդ)
- Մարգարեի մզկիթի
- Խիրայի Քարանձավի
- Ժայռի գագաթի մզկիթի
- Ալ-Ակսա մզկիթի

Vlll. Իսլամն ու ...

- Իսլամն ու հարստությունը
- Իսլամն ու կանայք
- Իսլամն ու ոչ մուսուլմանները
- Իսլամն ու մյուս Աստվածային Կրոնները
- Իսլամն ու Ջիհադը
- Իսլամը խաղաղության կրոն է
- Իսլամն ու հասարակությունը
- Իսլամ-մաքրության կրոն
- Իսլամն ու գիտելիքները

lX. Իսլամական աշխարհայացքը սեռական հարաբերություններին
X. Մուսուլմանները սիրում են Իսային (Հիսուս) ու նրա մորը

Xl. Իսլամական քաղաքակրթությունը
Xll. Գիտական բացատրություններ Ղուրանում
- Գիտական բացատրություն Ղուրանի որոշ բանաստեղծություններում
- Ինչ է ասում Ղուրանը Աշխարհի սկզբի մասին
- Ինչ է ասում Ղուրանը տիեզերքի տարածման մասին
- Ինչ է ասում Ղուրանը երկնային մարմինների մասին
- Ինչ է ասում Ղուրանը մթնոլորտային ճնշման մասին
- Ինչ է ասում Ղուրանը խավարի և տիեզերքի հեռավոր մակարդակների մասին
- Ինչ է ասում Ղուրանը ատոմի մասին
- Ինչ է ասում Ղուրանը մարդկային սաղմի փուլերի մասին
- Ինչ է ասում Ղուրանը օվկիանոսների մասին
- Ինչ է ասում Ղուրանը ամպերի և անձրևի առաջացման մասին
- Ինչ է ասում Ղուրանը կենդանիների մասին
- Ինչ է ասում Ղուրանը լեռների մասին
- Ինչ է ասում Ղուրանը ջրի և կյանքի մասին

Xlll. Ովքեր են թշնամություն անում Իսլամին
XlV. Իսլամ ընդունողի առավելությունը
XV. Ինչպես դառնալ մուսուլման
XVl. Եզրակացություններ
XVll. Տեղեկատվական աղբյուրներ
XVlll. Օգտակար ինտերնետային կայքեր

﴾ Ասե՛ք (Ով մուսուլմաննե՛ր). «Ճշմարիտ, հավատում ենք Ալլահին և ամեն մեզ, Աբրահամին, Իսմայիլին, Իսահակին, Հակոբին և Ալ-Ասբատներին (Հակոբի տասերկու որդիների հետնորդներին) ուղարկվածին, Մովսեսին ու Հիսուսին ամեն ուղարկվածին, և ամեն ինչին, որ ուղարկվել է մարգարեներին նրանց Տիրոջից: Նրանց մեջ ոչ մի տարբերություն չենք դնում, և մենք Նրա (Ալլահի) համար մուսուլմաններ ենք: ﴿
(Ղուրան 2:136)

Նախաբան

Սկսում եմ Բարեսիրտ, Ողորմած Աստծո (Ալլահի) Անունով:

Փառք աշխարհների Աստված Ալլահին: Խաղաղություն ու օրհնություն Նրա մարգարե Մուհամեդին, նրա ընտանիքին ու հետևորդներին մինչ Դատաստանի Օրը:

Այս աշխատանքը հակիրճորեն բացատրում է կրոնի էությունը, որը համարվելով վերջին աստվածային ուխտը, անհրաժեշտ է վերափոխում բոլոր անցյալ կրոնները: Ժամանակակից հետազոտությունների համաձայն Իսլամի հետևորդների քանակը անցել է միլիարդից: Ամեն օր մարկանց հսկայական քանակ մտնում է այդ կրոնի տաքության մեջ, չնայած որ մուսուլման քարոզիչները չեն ստանում բավարար նյութական ու հոգեբանական աջակցություն, սակայն մուսուլմանի սիրտը շատ հազվադեպ կարող է ժխտել Իսլամը, այն ընդունելուց հետո:

Մինչ այս գրքի կարդալը դուք պետք է իմանաք, որ Ղուրանը չի հանդիսանում գիտական գիրք: Իսլամում գիտելիքը մեծ հարգանք ունի և շատ է օգտագործվում հասարակությունում: Ղուրանը դա հիմնական օրենքն է, որի վրա հիմնված են մուսուլմանի կյանքի գործողությունները: Այնտեղ կան մեջբերումներ քաղաքական, հասարակական, տնտեսագիտական, էթիկական և այլ թեմաներ:

Տվյալ աշխատանքը գրելիս, ես իմ առջեւ չեմ դրել նպատակ կապել յուրաքանչյուր գիտական բացահայտումը Ղուրանի որևէ այաթի հետ: Եւ մեջբերելով որոշ գիտական փաստեր, ձգտել եմ ընդամենը ցույց տալ, որ գոյություն ունեն այաթներ, որ նշում են որոշ գիտական տեղեկություններ, որի հաստատումը հնարավոր է դարձել ի շնորհիվ ժամանակակից գիտության ու տեխնիկական մտքի ձեռքբերումների:

Ձեզ բոլորիդ խնդրում եմ կարդալ այս գիրքը, տեսնեք Ալլահի նշաններն ու աշխատեք հնարավորինս շատ իմանալ Ալլահի ճշմարիտ կրոնի մասին:

Ընթերցողների համար

Փառք Ալլահին, խաղաղություն ու օրհնանք մարգարե Մուհամեդին, նրա ընտանիքին ու հետևորդներին մինչ Դատաստանի Օրը:

Հարգելի կարդացո՛ղ: Ես հաճույքով ձեր ուշադրությանն եմ ներկայացնում շեյխ և հետազոտող Աբդուլ-Ռահման Աշ-Շիհայի այս նոր գիրքը, որը շատ է տարբերվում նմանատիպ թեմա ունեցող մյուս աշխատանքներից: Չնայած նրան, որ այս գիրքը Իսլամի մասին է, հետաքրքրասեր կարդացողը կգտնի ամենատարբեր ինֆորմացիաներն ու տվյալները, որոնք էլ իհարկե կհետաքրքրեն նրան: Ձեզ հարկավոր չէ կարդալ այն ամբողջությամբ, քանի որ կարող եք վայելել հատուկ փաստեր, պատկերներն ու մտքերը, որ կան այս գրքում:

Նույնիսկ ես չգիտեի, թե ինչ կերպով Դոկտոր Աշ-Շիհան նպատակ ունի կարդացողների ուշադրությանը մատնել իր գիրքը, սակայն բացահայտ զգում էի նրա չտատանվող համոզվածությունը, որ այս գիրքը աստծո կամքով կդյութի նմանատիպ թեմաների ուսումնասիրման համար քիչ ժամանակ ունեցող ընթերցողին իր նոր անսովոր ոճով, փայլերի բազմությամբ և իր կարևորությամբ:

Ամենազոր Ալլահի ճշմարիտ կրոնը պարզ ու անփոփոխ է իր աղբյուրներում (Ղուրան, մարգարե Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը նրան) խոսքերը): Չնայած դրան շատ մարդիկ Իսլամին չեն մոտեցել մաքուր սրտով ու ճիշտ ընկալումով: Եվ էլ ինչու՞մ չեն դատապարտում այդ կրոնը: Որոշները կարծում են, որ եթե մուսուլմանը ինչ-որ անպատիվ բան է անում, ուրեմն Իսլամն է կոչում դրան: Սու՛տ: Մեծն Ալլահը չի պահանջում մարդկանցից չարիքներ և անարդարություններ գործել:

Մենք հիմնավորվելով հավաստի աղբյուրներին պետք է ուսումնասիրենք ու հասկանանք Իսլամը նրա ողջ մաքրությամբ և ամբողջականությամբ:

Հարգելի կարդացող, ես հրավիրում եմ ձեզ կատարել մի հրապուրիչ ճամփորդություն այն աշխարհ, որը բացում է մեր առջև այս գիրքը: Աշխարհ՝ որում դուք կգտնեք անդորր և կկարողանաք հագեցնել գիտելիքի ծարավը:

Խոսքը գնում է իմ կարծիքով մի հրապուրիչ ճամփորդության մասին Իսլամի այգում, որի դարպասները բացում է մի հետազոտող, որն իր ամբողջ կյանքը նվիրել է իսլամական հետազոտություններին:

Ի՞նչ է Իսլամը:

 Իսլամ նշանակում է երկրպագել Ալլահին, հավատ Նրա Յուրօրինակությանը (միակ), Նրան հնազանդ լինելը և Նրան Հավասար ոչինչին չհամարելը: Այն տանելիության ու հեշտության կրոն է: Ալլահն ասում է.

«Ալլահը ձեզ ցանկանում է թեթեւություն եւ չի ցանկանում դժվարություններ»: (Ղուրան 2:185)

 Իսլամը դա կրոն է, որի միջոցով հասնում են հոգական հանգստության եւ խաղաղության:

Ալլահն ասում է.

«Հավատացողների սրտերը հանգստանում են Դիկր Էլլահի (Ալլահի անվանման արտասանությունը) հետ: Այո, անկասկած, (միայն) Դիկր Էլլահի մոտ են հանգստանում սրտերը»:

(Ղուրան 13:28)

 Իսլամը դա գթասրտության եւ կարեկցանքի կրոն է: Ալլահի առաքյալը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Գթասիրտ Ալլահը պարգեւատրում է իր ողորմությամբ նրանց, ով գթասիրտ է: Եղիր ողորմած երկրային էակների հանդեպ եւ դուք անպայման կպարգևատրվեք Նրա գթասրտությամբ, Ով երկնքում է»:

(Տիրմիդի):

 Իսլամը դա սիրո և մարդկայնության կրոն է: Ալլահի առաքյալն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ալլահի մեծ սերը վայելում են այն մարդիկ, ովքեր ավելի օգտակար են մյուսների համար»:

(Աե-Տաբարանի)

 Իսլամը դա պարզ կրոն է, հեռու ցանկացած հակասություններից եւ սխալներից: Ալլահն ասում է.

«Եվ չենք ուղարկել քեզանից առաջ (ով Մուհամեդ) ոչ տղամարդկանց (մարգարեներ), որոնց հոգեշնչել ենք: Եթե չգիտեք դա (ով Մեքքայի անհավատներ, որ ասել եք, թե Ալլահը անհնար է մարդ ուղարկի որպես մարգարե), հարցրեք գրերը ունեցողներին (քրիստոնյաներին ու հրեաներին, որ աստվածաշունչ ունեն, թե արդյո՞ք Իմ ուղարկած արաքյալները ձեզանից առաջ մարդիկ էին, թե՞ հրեշտակներ)»:

(Ղուրան 16:43)

 Իսլամը դա համընդհանուր կրոն է: Դա կոչ է, որը չի սահմանափակվում մարդկանց որոշակի տեսակով, այլ ուղղված է ողջ մարդկությանը: Ալլահն ասում է.

«Մենք քեզ ուղարկել (ով Մուհամեդ) ենք բոլոր մարդկանց համար որպես (Դրախտի) ավետաբեր եւ (դժոխքի կրակների մասին) նախազգուշացնող լրատու, սակայն մարդկանց մեծ մասը դա չգիտի (քանի որ հեռանում են ճշմարտությունից)»:

(Ղուրան 34:28)

 Իսլամը դա կրոն է, որը տալիս է Իսլամ մտնող մարդուն, նոր կյանք սկսելու հնարավորություն, քանզի Ալլահը ներում է նրա նախկին մեղքերը: Ալլահի առաքյալն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Իսլամը մաքրում է մարդու մինչ իսլամ մտնելը բոլոր կատարած մեղքերը»:
(Մուսլիմ)

 Իսլամը դա լիակատար, իդեալական կրոն է, որը հանդիսանում է վերջին եւ վերջնական Աստվածային Պատվիրանը: Նա փոխարինում է բոլոր նախկին կրոնները: Ալլահն ասում է.

«Այսօր իդեալականացրեցի եմ ձեզ համար ձեր կրոնը և ավարտել եմ ձեց ուղղված իմ օրհնությունը և ընտրել եմ ձեր համար Իսլամը որպես կրոն»:

(Ղուրան 5:3)

Ալլահին երկրպագման բոլոր գործողությունները իրենց ձեւով բաժանված են երեք տիպի. խոսքեր, ֆիզիկական գործողություններ, համոզմունքներ:

Նրանք հանդիսանում են մուսուլմանական համայնքի միասնության, ընդհանրության երաշխիք եւ մեծ դեր են խաղում անձի դաստիարակությունում, որը օժտված կլինի մեծ բարոյական հատկանիշներով, մաքուր եւ պարզ սրտով:

Քաաբայի դարպասները: Քաաբայի հանդեպ հարգանքի տուրքի համար դարպասները պատրաստված են ոսկուց: Բացվում են տարին մի ամգամ, հաջի ժամանակաշրջանից առաջ՝ երբ Քաաբան լվանում են ու ծածկվում Քիսուայով (հատուկ ծածկոց):

Ինչ է ասվել Իսլամի մասին

W. Montgomery Watt-ը իր «Ի՞նչ է Իսլամը» գրքում գրել է.

«նախնական համոզմունքը միայն մեկն է այն շատ խոչընդոտներից, որ Եվրոպացին կամ Ամերիկացին հանդիպում է Իսլամի ուսումնասիրության ճանապարհին: Զգտելով սահմանել Իսլամը, որպես «Ղուրանի Կրոն» կամ «այսօր չորս հարյուր միլիոն մուսուլմանների կրոն», նա ի հայտի է բերում մի տերմին, որը իր էությամբ բավարար չէ եւ անընդունակ է նկարագրել նման մեծ հասկացությունը, ինչպիսին է Իսլամը:

Իսկ ի՞նչ իմաստ է թաքցնում իր մեջ «կրոն» բառը արեւմուտքի բնակչի համար:

Լավագույն դեպքում, դա մեկ կամ երկու ժամ հանգստյան օրերին որոշակի ծիսակատարություններին նվիրելն է, որը արթնացնում է մարդու մեջ բարությունը մյուսների հանդեպ, քաջալերում է հետեւել չափորոշված նորմերի հարաբերությունները տղամարդու եւ կնոջ միջեւ, տալիս է ինչ-որ հոգեբանական աջակցություն, որը օգնում է մարդուն պայքարել ամենօրյա դժվարությունների դեմ:

Նման կրոնի ազդեցությունը առեւտրի, տնտեսության, հարաբերությունների, ինչպես նաեւ քաղաքականության վրա շատ աննշան է կամ ընդհանրապես բացակայում է:

Վատագույն դեպքում կրոնը (որևմտյան հասկացությամբ) դաստիարակում է հասարակության ավելի հաջողակ անդամների սրտերում ինքնահավանություն եւ ունայնություն: Եվրոպացիների մի մասն ընդհանրապես համարում է կրոնը որպես Ափիոն, որը թույլատրում է շահագործողներին պահել մյուս մարդկանց հնազանդության տակ:

Եւ որքան շատ է տարբերվում այս ամենից կրոնի մուսուլմանական հասկացությունը, Ղուրանում արտահայտված հետևյալ պարզ այաթում.

«Ալլահի ճշմարիտ կրոնը (որ ընդունելի է Ալլահի համար) դա Իսլամն է»:

(3:19)

Ղուրանում օգտագործված «Կրոն» բառի արաբական համարժեքը «դին» բառն է: Լեզվաբանորեն, դա նշանակում է մարդու կենսակերպը իր բոլոր բազմազանությամբ: Եվ այս հասկացությունը չի սահմանափակվում միայն եզակի մարդկանց անձնական կյանքով, այլ նաև ներառում է ինչպես անձնական, այնպես էլ մարդկային կյանքի հանրային կողմերը: Այն իր մեջ ներառում է ողջ հանրային համակարգը, իր մեջ առնելով աստվածաբանական դոգմաները, երկրպագման տարբեր ձեւերը, քաղաքական տեսությունը եւ վարվելակերպի մանրամասն բնութագիրը: Սրան է վերաբերում նաեւ այն, որ եվրոպացիներն անվանում են «անձնական հիգիենայի եւ էթիկայի օրենքներ»:

Իսլամի սյուները

Երկրպագման որոշ գործողություններ, որոնք իրագործվում են խոսքերի արտահայտման ձեւով կամ էլ ֆիզիկական գործողություններով, ստացել են «Իսլամի սյուներ» անվանումը իրենց կարեւորության շնորհիվ: Իսլամի սյուները հինգն են.

1. Հավատքի խոստովանությունը (Աս-Շահադատայն)

Դա հետևյալ խոստովանությունն է. **«Ասխանդու Ալա Իլախա Իլա Ալլահ Օա Ասխանդու Ան Մոհամմադան Ռոսուլու Ալլահ - Չկա աստվածություն երկրպագության արժանի, բացի միակ Ալլահից և Մուհամեդը Նրա Առաքյալն է»:** Սա մուսուլման դառնալու համար բանալի համարվող խոստովանությունն է: Առաջին մասը, որում ասվում էր. **«Չկա աստվածություն երկրպագության արժանի, բացի միակ Ալլահից»** նշանակում է.

1. Ալլահը Միակ Արարիչն է այն ամենի, ինչ գոյություն ունի:

2. Ալլահն է բոլոր արարածների Տերն ու ղեկավարը:

3. Ալլահն է այն միակը՝ ով պերք է երկրպագվի:

Չկա երկրպագելու արժանի որևէ աստվածություն բացի Ալլահից և Մուհամմադը Նրա առաքյալն է:

Վկայության երկրորդ մասի նշանակությունը «Մուհամեդը Ալլահի մարգարեն է» պարունակում է հետևյալ իմաստները.

1. Հնազանդություն մարգարեի պատվիրաններին:

2. Հավատք նրա ասածներին:

3. հրաժարվել նրանից, ինչ որ նա արգելել է եւ խուսափել գործողություններից, որոնց մասին նա զգուշացրել է:

4. Երկրպագել Ալլահին միայն այնպես, ինչպես դա սովորեցրել է մարգարեն:

Ո՞վ է Ալլահի առաքյալը:

Նրա լրիվ անունն է Մուհամեդ (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) իբն Աբդուլլահ իբն Աբդուլ Մութթալիբ իբն Հաշիմ: Նա նաեւ հայտնի է որպես Աբուլ-Կասիմ: Նա պատկանում է արաբական Քուրայշ ցեղին, որը սկիզբ է առել Ադնանից՝ Իսմայիլի որդիներից մեկից: Իսմայիլը Ալլահի մարգարե Իբրահիմի (Աբրահամի) որդին էր:

Ալլահի մարգարե Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ծնվել է 571 թվականին Մեքքա քաղաքում, որը հանդիսանում է Արաբական թերակղզու կրոնական կենտրոն, քանի որ նրա տարածքում էր գտնվում սուրբ Կաաբան, կառուցված Իբրահիմի եւ նրա որդու Իսմայիլի կողմից:

Դեռ մինչ նրա առաջին Հայտնությունը, նա իր ժողովրդում հայտնի էր որպես «Ալ-Ամին»՝ «վստահության արժանի, հուսալի»: Ճանապարհորդությունից առաջ, Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ցեղակիցները, առանց վարանելու նրան էին թողնում թանկարժեք իրերը պահպանման հուսալի պահպանության համար: Նրան նաեւ անվանում էին «Աս-Սադիկ»՝ «ազնիվ», իր բացառիկ ազնվության համար: Նա երբեք չէր ստում, չէր գործում անհավատի պես եւ տարբերվում էր անսովոր բարյացակամությամբ: Լինելով քառասուն տարեկան, Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ստանում է առաջին Հայտնությունը: Այդ մասին նա մեծ անհանգստությունով տեղեկացնում է իր կնոջը՝ Խադիջային (թող Ալլահը գոհ լինի նրանից).

«Ես վախում եմ իմ համար», սակայն Խադիջան պատասխանեց.

«Ո՛չ: Երդվում եմ Ալլահով, որ նա երբեք քեզ չի հիասթափեցնի: Չէ որ պահպանում ես լավ կապերը քո բարեկամների հետ, օգնում ես նեղն ընկածներին, տալիս ես ունեցվածքդ խեղճերին ու որբերին, հարգում ու հյուրասիրում ես հյուրերին և օգնում ես նրանց՝ ովքեր դժվար պահեր են ապրում»:

(Ալ-Բուխարի)

Եւ տասներեք տարիների ընթացքում նա մնաց Մեքքայում, քարոզելով միաստվածություն: Հետո

Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) տեղափոխվեց Մեդինա քաղաք, կոչ անելով տեղի մարդկանց դեպի Իսլամ եւ նրանք պատասխանեցին այդ կոչին: Այնտեղ՝ Մեդինայում Մարգարեն ստացավ կրոնի մյուս օրենքներն ու կանոնները:

Ութ տարի անց, Ալլահի առաքյալը (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) որպես հաղթող վերադարձավ ու մտավ Մեքքա: Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) մահացավ վաթսուներեք տարեկան տարիքում, այն բանից հետո, երբ Ալլահն ավարտեց ուղարկել Ղուրանը լիովին: Այդ ժամանակ կրոնական օրենսդրության կազմավորումը ավարտված էր: Իսլամը ամբողջովին ավարտված էր եւ արաբական ազգի մեծամասնությունն ընդունել էր այդ կրոնը:

Ի՞նչ են ասում Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) մասին

George Bernard Shaw-ն իր «Իրական Իսլամը» գրքում գրել է.

«Միշտ բարձր եմ գնահատել Մուհամեդի կրոնն իր հրաշալի ապրունակության համար: Դա միակ կրոնն է, որը ցույց է տալիս, որ ունի ընդունվող ունակություն բոլոր ժամանակների ու տեղերի համար: Մուհամեդի կրոնի հետ կապված կանխագուշակել էի, որ այն կնդունվի ապագայում, ինչպես արդեն դառնում է ժամանակակից Եվրոպայում: Միջնադարի աստվածաբանները կամ չիմանալուց, կամ էլ թշնամությունից, Մահմեդականությունը նկարեցին ամենագորշ գույներով: Ճշմարիտ, որ ուսուցանված էին, այնպես, որ ատեին Մուհամեդ մարդուն ու նրա կրոնը: Նրանց համար Մուհամեդը հավասար էր նեռին: Ես ուսումնասիրել եմ Մուհամեդին՝ հրաշալի մարդուն, և իմ կարծիքով նա պետք է անվանվի ոչ թե նեռ (Անտիխրիստ), այլ մարդկության փրկիչ»:

Annie Besant-ը «Մուհամեդի կյանքն ու ուսումը» գրքում ասում է.

«Հնարավոր չի, որ Արաբիայի մեծ մարգարեի կյանքն ու բնավորությունը ուսումնասիրողն ու իմացողը, նրա ուսմունքն ու ապրելակերպը ճանաչողը անհարգալից վերաբերվի Աստծո ամենախոշոր առաքյալին: Հնարավոր է, որ իմ գրածից շատ բաներ ձեզ արդեն հայտնի ու ծանոթ են, սակայն երբ ես ինքս վերընթերցում եմ իմ գրածները, ինձ կրկին ու կրկին գերում է մի նոր հարգանքի ու սխանչացման զգացում Արաբիայից այդ տղամարդկային ու հզոր ուսուցչի հանդեպ»:

2.Աղոթքը (Սալա)

Աղոտքը դա ստրուկին իր Աստծո հետ կապող ճանապարհն է: Աղոթելով մուսուլմանը կոչ է անում դեպի իր Աստվածը, խնդրելով Նրանից ներում և ճիշտ ճանապարհ, օգնություն ու պաշտպանություն:

Մուսուլմանը պարտավոր է կատարել հինգ ամենօրյա աղոտք: Տղամարդը կատարում է դրանք մզկիթում, մյուսների հետ միասին, բացառությամբ այն լուրջ պատճառները, երբ իսլամական օրենքը թույլատում է տղամարդկանց աղոթել մզկիթից դուրս:

Միասնական աղոտքի շնորհիվ մուսուլմանները ծանոթանում են միմյանց հետ, ընկերանում և միանալով ամրացնում սիրային կապերն: Ինչպես նաև իմանում են իրենց մուսուլման եղբայրների ամենօրյա կյանքն ու իրավիճակը, որում նրանք գտնվում են:

Եթե նրանցից ինչ-որ մեկը բացակայում է, ապա հավանաբար հիվանդ է, և նարնք գնում են նրա մոտ այցի, իսկ եթե մեկը չի կարողանում կատարել իր պարտավորությունները, ապա խորհուրդներ են տալիս ու օգնում:

Աղոտքի ժամանակ բոլոր սոցյալական դասակարգումները՝ ինչպիսիք են շրջապատի պատկանելիությունը, սեռը, ազգային պատկանելիությունն ու ծագումը մոռացվում են մուսուլմանների կողմից, որոնք այդ ժամին աղոթում են մեկը մյուսի կողքին խիտ դասավորվածությամբ և բոլորն էլ ուղղված մի ուղղության վրա (դեպի Մեքքա):

Բոլորն ուղղված են հավասար, հրամանի վիճակով Ալլահի դիմաց:

3.Պարտադիր վճարումը (Զակա)

Դա ունեցվածքի փոքր մաս է, որը հարուստ մուսուլմանը զոհաբերում է ի օգուտ իր աղքատ եղբայրներին՝ որոնք կարիքի մեջ են: Այդ ողորմությունը պետք է տրվի պահպանելով հատուկ կանոններ ու լինի հատուկ պայմաններում: Մուսուլմանը տալիս է դա կատարելով Ալլահի պատվիրանը:

Զակայի իրական նպատակն է մուսուլմանական հասարակությունում փոխոգնության ոգու և կարեկցանքի դաստիարակությունը, ինչպես նաև աղքատության վերացումը, աղքատության ու նրանց ցուգահեռ գնացող սոցիալական հիվանդությունների կանխարգելումը: Զաքյաթը մաքրում է հարուստների սրտերը ժլատությունից, իսկ աղքատների սրտերը ատելությունից ու նրանց հաջողակ եղբայրների հանդեպ նախանձից:



Զակա արաբական բառի լեզվաբանական նշանակություններից մեկը դա շատացումն է: Այսինքն շատացնում է հարստությունն ու պահպանում դժբախտություններից: Բարեգործությունների դիմաց վճարումը կատարվում է Ալլահի առատաձեռնությունից:

4.Ռամադանի պահքը (Միյամ)

Տարին մի անգամ՝ Ռամադանի ամսվա ընթացքում, մուսուլմանները հետևում են պարտադիր պահքի: Արևածագից մինչև մայրամուտ նրանք ձեռնպահ են մնում բոլոր գործողություններից, որոնք խախտում են պահքը, ինչպիսիք են ուտելը, խմելն ու սեռական հարաբերությունները: Պահքը հանդիսանալով երկրպագման ամենակարևոր գործողություններից մեկը, նույնպես պարտադիր են այլ կրոններում:

Ալլահն ասում է.

«Ով դուք, ովքեր հավատացողներդ: Ձեզ պահք է պատվիրված, նախորդ ազգերի(նրանցից առաջ եղածներին՝ քրիստոնյաներին, հրեաներին և այլերին) պատվիրված նմա ն, գուցե և աստվածավախ լինեք»: (Ղուրան 2:183)

Մուսուլմանները օգտագործում են լուսնային օրացույցը, որպեսզի որոշեն ամսվա սկիզբն ու վերջը: Մուսուլմանների համար որոշ կարևոր իրադարձություններ, ինչպիսինն է Ռամադան ամիսը կամ հաջի ժամանակաշրջանը նույնպես որոշվում են համաձայն լուսնային օրացույցին:

5.Մեծ ուխտագնացությունը (Հաջ)

Յուրաքանչյուր մուսուլման, տղամարդ թե կին, հասուն տարիքի եւ մտքի տեր լինելով, գոնե մեկ անգամ կյանքում պարտավոր է կատարել հաջ, եթե դա նրան թույլատրում է իր ֆինանսական վիճակը: Հաջը ուխտագնացություն է Ալլահի սուրբ տուն՝ Քաաբա, որպեսզի որոշ ժամանակահատվածում որոշակի վայրերում իրականացվեն երկրպագության որոշ ծիսակատարություններ:

Ալլահն ասում է.

«Մարդիկ պարտավոր են Ալլահի առաջ կատարել հաջ դեպի Սուրբ Տուն (Քաաբա, Մեքքա), եթե նրանք ի վիճակի են կատարել դա: Եվ ինչ վերաբերվում է չհավատացողներին (հաջը ժխտողներին ու Ալլահին չհավատացողներին), ապա Ալլահն իր արարածների կարիքը չունի»:

(Ղուրան 3:97)

Հաջը մուսուլմանների ամենամեծ հավաքույթն է: Հաջի ժամանակ ողջ աշխարհից եկած ուխտագնացները նույնատիպ հագուստով հագնված հավաքվում են նույն վայրում, կոչ են անում մեկ Աստծո, կատարում են նույն ծեսերը:

Այդ ժամանակ ջնջվում են տարբեր մաշկի գույնով մարդկանց, հարուստների եւ աղքատների, հայտնիների եւ սովորական մարդկանց, արաբների եւ ոչ արաբների միջև տարբերությունները՝ բոլորը հավասար են Ալլահի առաջ, եւ Ալլահը նրանց տարբերում է միայն ըստ աստվածավախության (տակուա): Հաջը դա մեծ իրադարձություն է, որն ընդգծում է մուսուլմանական համայնքի եղբայրական հիմքը, նրանց նպատակների եւ ձգտումների միասնությունը:

Ուխտագնացները Քաաբայի շուրջ կատարում են ծիսական անցում: Մեքքայի մզկիթը կարող է միաժամանակ տեղավորել երկու միլիոն մարդ:

Հավատքի սյուները

Իսլամի հիմնարար համոզմունքները անվանվում են Հավատքի (Իման) սյուներ և դրանք հետևյալներն են.

1. Ալլահին հավատալը

Ալլահին հավատալը սկվում է Նրա գոյությանը հավատալուց, որ Նա Միակն ու Յուրօրինակ է՝ որին էլ պետք է երկրպագել, որ նա չունի իրեն հավասարի, համակցի, ոչ էլ հակառակորդների իր Ռուբուբիյայում (տիրակալություն), իր Ուլուհիյաում (աստվածություն), Իր գեղեցիկ անուններում և Իր հատկություններում: Նա է ամեն ինչի ստեղծողը, Տերն ու այս աշխարհում կատարվող ամեն ինչի ղեկավարը: Միայն կրա կամքը կկատարվի և Նա Միակն է՝ ում պետք է երկրպագենք:

Ալլահն ասում է.

«Ասա (ով Մուհամեդ). Նա է Ալլահը՝ Միակն ու Յուրօրինակը՝ Ալլահ Աս-Սամադը (Տիրակալը, որ Իր էակներից ոչինչի կարիքը չունի, սակայն նրանք ունեն կարիքներ Նրանից, և Նա ոչ ուտում է, ոչ խմում և ոչ էլ մահանում) ոչ ծնել է, ոչ էլ ծնվել, և ոչ ոք նրան հավասար չէ կամ Նրա հետ համեմատվող»

(Ղուրան 112: 1-4):



Այս նկարում տեսնում եք Ղուրանի 112-րդ սուրայի տեքստը: Այն տրվեց Մուհամեդին ի պատասխան բազմաստվածների Ալլահի նկարագրության պահանջին:

2. Ալլահի հրեշտակներին հավատալը

Այս սյունը նշանակում է հավատք հրեշտակների գոյությանը: Ոչ ոք չգիտի նրանց հավաստի քանակը բացի Նրանից (Ալլահից): Եւ Նա է արարել նրանց, որպեսզի նրանք երկրպագեն Իրեն:

Ալլահն ասում է.

«Քրիստոսը երբեք չէր ժխտի բարձր ինքնագնահատումի կամ ինքնագովաբանումի պատճառով լինել Ալլահի ծառան, ոչ էլ հրեշտակները, (Ալլահի) մոտ են»

(Ղուրան 4:172):

Ոչ մի հրեշտակ օժտված չէ Ալլահի որեւէ հատկությունով: Նրանք չեն հանդիսանում Նրա զավակները: Ալլահը նրանց ստեղծել է որոշ գործերի ուղարկելու համար:

Ալլահն ասում է.

«Եվ ասում են. «Ողորմածը (Ալլահը) որդի է ձեռք բերել, փա՛ռք Նրան (Նա ավելի մեծ է, քան Նրա մասին ասում են): Եվ սակայն նրանք (հրեշտակները, որ անհավատները նրանց անվանում են Ալլահի դուստրեր), նրանք միայն (Նրա) հարգված ծառաներն են: Նրանք չեն խոսում Նրանից առաջ եւ գործում են համաձայն Նրա հրամանի»

(Ղուրան 21:26-27)

3. Հավատք Սուրբ Գրերին

Այս սյունը պահանջում է հավատք դեպի այն, որ Ամենակարող Ալլահը Աստվածային Գրեր է ուղարկել Իր մարգարեներին, որ նրանք էլ փոխանցեն մարդկությունը: Այդ գրերը պարունակում են միայն ճշմարտություն այն ուղարկվելու պահին, մինչ մարդիկ այն փոխեն և աղավաղեն: Այդ բոլոր գրերը կոչ են անում մարդկանց դեպի Ալլահի Յուրօրինակությունը, և հավատքին, որ Նա է Արարիչը, Տերն ու Տիրակալը և Նրան են պատկանում գեղեցիկ անուններն ու բարձր հատկությունները:

Սուրբ Ղուրանը:

Ահա որոշները Սուրբ Գրերից.

- Իբրահիմի (Աբրահամի) գրերը (Սուխոֆները)՝ սուրբ գրությունը, որ ուղարկվել էր նրան:
- Թորան : Սուրբ գրություն ուղարկված Մովսես Մարգարեին:
- Զաբուր (Սաղմոսներ): Սուրբ գրություն ուղարկված մարգարե Դաուդին (Դավիթին):
- Ինջիլը (Ավետարան): Սուրբ գրեր ուղարկված մարգարե Իսային (Հիսուսին):
- Սուրբ Ղուրանը: Բոլորը պարտավոր են հավատալ, որ Ղուրանը դա Ալլահի խոսքն է, որը Փոխանցվել է **Մուհամեդին** Գաբրիել հրեշտակի միջոցով և վերջին Աստվածային գիրն է, որ փոխարինել է բոլոր նախորդ Գրերը:

Ի՞նչ է Ղուրանը:

Ղուրանը մուսուլմանների օրենսգիրքն է, որը կառավարում և կարգավորում է նրանց կյանքի ինչպես հոգեւոր, այնպես էլ ամենօրյա գործերը: Այն տարբերվում է նախկին Սուրբ Գրերից հետևյալ պատճառներով.

 Ղուրանը վերջին Աստվածային Գիրն է, որ ուղարկվել է, և այդ պատճառով Մեծն Ալլահը խոստացել է պահպանել ամեն փորձությունից մինչ Դատաստանի Օրը:

Ալլահն ասել է.

«Մենք ցած (Երկիր) ուղարկեցինք Ղուրանը և կպահպանենք այն (փոփոխություններից կամ կորստից)»:

(Ղուրան 15:9)

 Ղուրանը պարունակում է բոլոր օրենքները, որ վերափոխում են հասարակությունը և որոնց կատարումը երաշխավորում է հաջողություն բոլորի համար:

 Ղուրանում գրված են մարգարեների ու առաքյալների պատմությունները, և նրանց ու նրանց ժողովրդի միջև տեղի ունեցածները, Ադամից մինչև Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան):

 Այն ուղարկվել է բոլոր մարդկանց համար, որպեսզի կարողանան ապրեն մի կյանք՝ հարուստ խաղաղությունով ու հաջողությունով և նրանց խավարից հանելու և դեպի լույս տանելու համար:

 Ղուրանի ընթերցումը, անգիր սովորելն ու դասավանդելը հանդիսանում են երկրպագման գործողություններ:

Ի՞նչ է ասվել Ղուրանի մասին

Maurice Bucaille իր «Ղուրանն ու ժամանակակից գիտությունը» գրքում գրել է.

«Ղուրանի մի իսկապես մանրամասն հետազոտությունը, ժամանակակից գիտություն լույսի տակ, մեզ կհամոզի, որ ճանաչենք այն համաձայնությունը, որ գոյություն ունիամանակակից գիտության և Ղուրանի միջև, ինչպես արդեն ասվել է տարբեր դեպքերում: Միաժամանակ մեզ ստիպում է դատել որպես անհավատալի, հաշվի առնելով Մուհամեդի ժամանակաշրջանի գիտելիքների մակարդակը, որ մի մարդ կարող էր լինել այդ գիտելիքների ու մեջբերումների հեղինակը: Այդ մտքերը ցույց են տալիս ղուրանյան հայտնության յուրօրինակությունն ու ստիպում են գիտնականին, որ խոստովանի, ու չի կարող որևէ բացատրություն տա հիմնվելով միայն ոչ հոգևորական մոտեցումների վրա»:

4. Հավատք Ալլահի առաքյալներին

Նշանակում է հավատալ, որ Ալլահը հավաքել է մարդկության լավագույն ներկայացուցիչներին որպես իր առաքյալներ, եւ ուղարկել է նրանց Իր էակների մոտ որոշ օրենքներով՝ Երկրպագեն Նրան, լսեն Նրան ու հիմնադրեն Նրա կրոնն ու Նրա Յուրօրինակությունը՝ տաուխիդը (միաստվածությունը): Ալլահը հրամայեց Իր առաքյալներին, որ փոխանցեն նրա Հայտնությունը մարդկանց, այնպես որ մարդիկ չկարողանան վիճաբանել Նրա դեմ, այն պահից, երբ Նա ուղարկեց Իր առաքյալներին:

Ալլահն ասում է.

«Եվ ասում են. «Ողորմածը (Ալլահը) որդի է ձեռք բերել, փա՛ռք Նրան (Նա ավելի մեծ է, քան Նրա մասին ասում են): Եվ սակայն նրանք (հրեշտակները, որ անհավատները նրանց անվանում են Ալլահի դուստրեր), նրանք միայն (Նրա) հարգված ծառաներն են: Նրանք չեն խոսում Նրանից առաջ եւ գործում են համաձայն Նրա հրամանի»

(Ղուրան 21:26-27)

Առաջին մարգարեն Նոյն էր (խաղաղություն նրան) և վերջինը՝ Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան):

5. Դատաստանի օրվա հավատը

Այդ սյունը պահանջում է հավատալ, որ այս աշխարհի կյանքը ունի վերջ:

Ալլահն ասում է.

«Նրա (երկրի) վրա ամեն ինչն մահանալու է և (անմահ) կմնա միայն Տիրոջդ դեմքը, Փառքի և Պատվի Տիրակալը»:

(Ղուրան 55:26-27)

Դրանից հետո Ալլահը կհամբարձի Իր բոլոր էակները, կանչելով արդարացման և կնվիրատրի բարիք կատարողներին, հիմնվելով նրանց արդար արարքներին, նրանց Ալլահին հավատալու ու Մարգարեներին ու Նրա Առաքյալներին նվիրվելու համար, դարավոր դրախտային (Ջաննա) կյանքով:

Ընդհակառակ՝ կպատժի վատ արարքներ կատարողներին, որ չհավատացին ու չլսեցին Նրա Առաքյալներին, դարավոր դժոխային կյանքով:

6. Հավատալ Կադային և Կադարին (Ճակատագիր)

Նշանակում է հավատալ, որ Ալլահը գիտեր ամեն ինչի մասին, մինչ նրանց գոյությունը, ինչպես նաև ինչ կլինի Արարումից հետո: Հետո ստեղծեց դրանք համաձայն Իր Իմաստությանն ու Դատին:

Ալլահն ասել է.

«...և (Ալլահը) ստեղծեց ամեն ինչ և չափեց համապատասխան չափանիշներով (առանց անլիակատարության)»:

(Ղուրան 25:2)

Կադային ու Կադարին հավատալը չի անիմաստացնում այն ջանքերը, որ պետք է թափվեն մարդկանցից, որ ինչ-որ բանի հասնեն: Ճակատագրին հավատալը հասցնում է հետևյալներին.

- Մաքուր ընկալման ու արտաքին հանգստի: Բացառում է որոշ բաների չիարակնանալու ափսոսանքը:
- Գիտելիքների առաջադիմումին և Այս տիեզերքում Ալլահի կողմից արարված ամեն ինչի հետազոտությանը: Տխրություններն, ինչպիսիք են հիվանդությունները, դրդում են մարդկանց, որ մի բուժում փնտրեն, որն էլ սկիզբ է առնում բժշկության աղբյուրներից, որ Ալլահը՝ Ամենազորը, ստեղծել է այս տիեզերքում:
- Որ մարդը ավելի շատ է հույս դնում Ալլահի վրա, սահմանափակելով յուր վախերը:

Իբն Աբբասն ասել է.

«Մի օր Ալլահի առաքյալի մոտ էի և նա ասաց. «Երիտասա՛րդ, քեզ որոշ արտահայտություններ կսովորեցնեմ: Պահպանիր Ալլահի պատվիրանները և Նա էլ քեզ կպահպանի: Պահպանիր Ալլահի պատվիրանները և Նրան քո կողքին կգտնես: Եթե խնդրել է պետք, ապա Ալլահից խնդրի, և եթե օգնություն ես խնդրելու, խնդրի Ալլահից և իմացիր, որ նույնիսկ ամբողջ աշխարհը հավաքվեր քեզ օգնելու համար, չէր կարողանա անել ավելին Ալլահի կողմից քո համար նախապես որոշվածից: Եվ նույնիսկ, եթե ամբողջ աշխարհը հավաքվեր, որ վնասի, չի կարող անել դա այն ամենից դուրս, որ քո համար նախապես որոշել է Ալլահը: Գրիչները կանգնել են ու գրերն էլ չորացել են»:

(Ատ-Տիրմիդի)

Իսլամի հիմնական նպատակները

Իսլամի հիմնական նպատակներն են.

1. **Կրոնի պահպանությունը:**
2. **Կյանքի պահպանությունը:**
3. **Ունեցվածքի պահպանությունը:**
4. **Համոզվածության պահպանությունը:**
5. **Ծագման խնդրականության պահպանությունը:**
6. **Պատվի պահպանությունը:**

Իսլամի Մարգարե Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ալլահը ձեր կյանքը, ձեր ունեցվածքն ու պատիվ անձեռնամխելի է արել, ինչպես որ անձեռնամխելի է արել այս օրը (Առաֆա կոչվող օրը, հաջի ընթացքում), ինչպես և անձեռնամխելի է արել այս ամիսը (Դուլ-Խիջա, իսլամական տարվա 12-րդ ամիսը) այս (անձեռնամխելի) վայրում (Մեքքան):

(Ալ-Բուխարի)

Ասել է նաև.

«Ասե՞մ ձեզ, թե ով է (իրական) հավատացյալը: Նա է՝ ում մարդիկ վստահում են իրենց փողերն ու կյանքը: Մուսուլմանը նա է՝ ում ձեռքերից ու լեզվից մարդիկ անվտանգության մեջ են: Ալլահի ճանապարհի իրական մարտնչողը դա սեփական կրքերի դեմ պայքարողն է, որ լսի Ալլահին և իրական Արտագաղթածը (Մուհամեդը իր Մեքքայի հետևորդների հետ ստիպված է եղել լքել քաղաքն ու գնալ Մեդինա, քանի որ Մեքքայի անհավատները պատերազմում էին նրանց դեմ ու վնասում նրանց) նա է՝ ով լքում է մեղքերն ու վատ արարքները»:

(Իբն Հիբան)

Դաստիարակությունն ու բարոյականությունը Իսլամում

Իսլամն արգելում է չարիքն ու անբարոյականությունը դրանց ցանկացած դրսևորումներում:

Ալլահն ասել է.

«Ասա (ով Մուհամեդ). «Իմ Տերն արգելել է Ալ-Ֆաուահիշ (լողկալի գործեր) կատարել, ոչ բացահայտ, ոչ էլ թաքուն, մեղքեր, անարդար հարձակումները, Ալլահին (երկրպագման մեջ) գործընկեր տալը, որի համար Ալլահը լիազորություն չի տվել և ասեք Ալլահի մասին այն՝ ինչի մասին չգիտեք»:

(Ղուրան 7:33)

Իսլամը որոշել եւ խրախուսում է բարձր բարոյականությունը եւ լավ վարվելակերպը:

Իսլամի մարգարեն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ուղարկվել եմ, որ լիակատարացնեմ ամենաբարձր մակարդակի բարոյականությունը» :

(Ալ-Հակիմ)

Ամենազոր Ալլահը Սուրբ Ղուրանում ասել է.

«Ասա. «Եկեք ձեզ կարդամ այն, ինչ արգելել է ձեզ ձեր Տերը. Մի՛ կապեք Նրան ոչնչի հետ, վերաբերվեք ձեր ծնողներին լավագու՛յն կերպով՝ լի բարությամբ, մի սպանեք ձեր երեխաներին, վախենալով աղքատությունից, քանի որ Մենք կապահովենք ձեր և ձեր երեխաներին սննդով: Մի մոտեցեք Ալ-Ֆաուահիշին (լոխկալի արարքներին), ոչ բացահայտ, ոչ էլ թաքուն, մի սպանեք ոչ մի հոգի (բացի այն դեպքից, երբ դա մի անհավատ է և հարձակում է մուսուլմանների վրա), եթե դրա իրավունքը չունեք (եթե չի պահանջում արդարությունը): Դա ձեզ պարտադրել է Ալլահը, միգուցե դուք հասկանաք»:

(Ղուրան 6:151)

Մուհամեդ մարգարեն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը) լինի նրան) ասել է.

«Ձեզանից ոչ ոք չի հավատա մինչեւ իր եղբորը չի ցանկանա նույնը, ինչ որ կցանկանար իրեն»:

(Ալ-Բուխարի)

Իրավունքները Իսլամում

Իսլամը կարգադրում է իր հետեւորդներին հարգանքով վերաբերվել մյուսների իրավունքներին: Ծնողներ, ամուսիններ, երեխաներ, հարեւաններ՝ այս մարդկանց

բոլոր խմբերը ունեն իրավունքներ՝ ըստ այս աշխարհում ունեցած իրենց դերի: Մարդու իրավունքների եւ արժանապատվության հանդեպ հարգանքի սկզբունքը թույլատրում է համախմբել բոլոր մուսուլմանական համայնքները, ամրացնել կապերը նրանց տարբեր անդամների միջեւ, եւ խոչընդոտել նրանց միջեւ հակասություններին:

Ալլահն ասում է.

«Երկրպագեք Ալլահին, եւ Նրան գործընկեր մի տվեք (երկրպագությունում): Բարություն արեք ծնողներին, բարեկամներին, որբերին, աղքատներին, ձեր բարեկամ-հարևաններին եւ հարեւաններին, որոնք ձեր բարեկամները չեն, ձեր կողքի ընկերներին (ամուսիններին ու ճամփորդության հետևորդներին), ճանապարհորդներին և բոլոր ձեր աջ ձեռքի տակ եղածներին (ստրուկներին): Ճշմարիտ, Ալլահը չի սիրում հպարտներին եւ պարծենկոտներին»:

(Ղուրան 4:36)

Մարգարեն ասել է.

«Ձեզանից յուրաքանչյուրը պահապան է և պատասխանատվություն է կրում իր կողմից պահպանվողների համար: Ղեկավարը պահապանն է իր նվիրյալների ու պատասխանատու է նրանց համար, տղամարդը ընտանիքի պահապանն է իր ընտանիքի և պատասխանատու է նրա համար, կինը օջախի ու ամուսնու երեխաների պահապանն է ու պատասխանատու է նրանց համար, և ծառան պահապանն է տիրոջ ունեցվածքի և պատասխանատու է դրանց համար: Ուրեմն դուք բոլորդ պահապաններ ու պատասխանատուներ եք ձեր ենթանկության տակ եղածների համար»:

(Ալ-Բուխարի)

Իսլամում նույնիսկ ճանապարհը, որից օգտվում են մարդիկ, ունի իր իրավունքները: Մարգարեն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ձեռնպահ մնացեք ճանապարհներին նստելուց»: Մարդիկ ասացին.«Ով Ալլահի առաքյալ, մենք միայն այնտեղ կարող ենք հավաքվել ու խոսել»: Եվ նա պատասխանեց. «Եթե պետք է անեք դա, ապա հարգեք ճանապարհի իրավունքները»: Նրանք հարցրեցին, «Եվ ո՞րն է ճանապարհի իրավունքը»: Նա պատասխանեց. «Թող իջացնի

(այնտեղ նստածն) իր հայացքը(այսինքն խորամանկորեն չնայի մյուս սեռի ներկայացուցիչներին), պատասխանի ողջույններին, բարիքն անի ու չարիքը արգելի»:

(Ալ-Բուխարի)

Կենդանիները նույնպես ունեն իրավունքներ: Նրանց ցավակցելն ու լավ օգտագործելը մի ճանապարհ է մեր մեղքերի համար Ալլահի ներումը վաստակելու համար:

Իսլամի առաքյալն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է. **«Մի անգամ մի ճամփորդին սկսեց ուժեղ տանջել ծարավը: Նա մի ջրհոր գտավ, իջավ ու ջուր խմեց այնտեղից, իսկ երբ դուրս եկավ մի շուն տեսավ, որը մռութը հողի մեջ էր մցնում (ջուր էր որոնում) ծարավի պատճառով: Այդ ժամանակ այդ մարդն ասաց. «Ծարավը այս շանը նույնպես տանջում է, ինչպես ինձ էր տանջում»: Ինչից հետո նա կրկին իջավ ջրհորը, ջրով լցրեց իր կոշիկն ու տվեց շանը, որ խմի: (Դրա համար) Ալլահը նվիրատրեց նրան մեղքերի ներումով»:**

(Այդ ժամանակ նրան լսող մարդիկ) հարցրեցին. «Ով Ալլահի առաքյալ, մի՞թե մեզ տրվում է պարգև կենդանիներին լավ օգտագործելու համար»: Նա պատասխանեց. «Իհարկե: Պարգև տրվում է ամեն շնչավորի համար»

(Ալ-Բուխարի)

Իսլամը համարում է, որ կենդանիների վատ օգտագործումը՝ առանց սնունդի ու ջրի պահելը, տանջելը, Դժողք ընկնելու պատճառներ են:

Իսլամի առաքյալ Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Մի կին պատժվել է մի կատվի պատճառով: Նա փակել էր կատվին մինչ շունչը փչելը (կատվի), և դրա համար պատժվել է Դժողքով: Ինչքան պահել էր, չէր կերակրել, ոչ ջուր էր տվել, ոչ էլ թույլ էր տվել, որ կատուն ինքն իրեն սնունդ հայթայթի»:

(Ալ-Բուխարի)

Եթե այդպիսինն է Իսլամի վերաբերմունքը կենդանիների հետ, ապա ի՞նչ կարելի է ասել մարդկանց մասին, որ Ալլահն ընտրեց ու գնահատեց բոլոր մնացածներից ավելի բարձր:

Ի՞նչ տեղեկություններ ունեք հետևյալների մասին

Քաաբա

Երբ ծնվեց Աբրահամի և Ագարի որդի Իսմաիլը, նրա մյուս կինը՝ Սառան խանդեց ու խնդրեց Աբրահամին, որ նրանց իրենից հեռու ուղարկի: Այդ ժամանակ Ամենազոր Ալլահը լուսավորեց Իբրահիմին, որ նա տանի նրանց Մեքքա: Նրանց այնտեղ թողնելուց հետո Աբրահամը ժամանակ առ ժամանակ այցելում էր նրանց: Որոշ ժամանակ անց Աբրահամը այցելուցյան գնաց այնտեղ և տեսավ Իսմաիլին, որ նետեր էր կրակում Զամզամ աղբյուրի մոտ: Նրան տեսնելիս Աբրահամը փաթաթվեց նրան հարազատ հոր պես ու ասաց.

«Ով Իսմաիլ, Ալլահը հրամայել է, որ այստեղ մի Տուն կառուցեմ»:

Միասին կառուցեցին Ալլահի Տան պատերը: Իսմաիլը քարեր էր հավաքում և Աբրահամը կառուցում դրանցով պատերը: Երբ պատը հասավ որոշ բարձրության, Աբրահամը իր կանգնած տեղը մի քար տեղադրեց, և իր որդու հետ միասին Աղաչեցին Ալլահին ասելով.

«Տե՛ր մեր: Ընդունիր (այս տունը) մեզանից: Քանի որ Դու ես Ալ-Սամեին (ամեն ինչ լսողը) ու Ալ-Ալիմը (Ամենագետը)»:

(Ղուրան 2:127)

Ողջ աշխարհի մուսուլմանները աղոթելիս ուղղվում են դեպի Քաաբա: Քաաբան Ալլահի առաջին Տունն է:

Ալլահն ասում է.

«Ճշմարիտ, մարդկանց համար կառուցված առաջին (երկրպագության) Տունը հանդիսանում է այն, որ գտնվում է Բաքքայում (Մեքքայում), օրհնված ուղղություն ամբողջ աշխարհի համար»:

(Ղուրան 3:96)

Քաաբան խորհրդանշում է մուսուլմանների միասնությունը և մուսուլմանները դեպի Մեքքա են ուղղում իրենց սրտերն ու մարմինները:



Ալլահն ասում է.

«Ալլահին են պատկանում արևելքն ու արևմուտքը՝ որ կողմ էլ ուղղվեք այնտեղ է Ալլահի երեսը: Ալլահը Ուասեն է (Անծայրածիրը՝ ով պարունակում է ամեն ինչը) և Ալիմը (Ամենագետը)»:

(Ղուրան 2:115)

Ալլահն ասում է.

«Թող երկրպագեն այդ Տան (Քաբբայի) Տիրոջը (Աստծուն), որ կերակրեց (նրանց փրկելով) քաղցից և ազատեց նրանց վախից»:

(Ղուրան 106:3-4)

Սև քարը

Քաաբայի կառուցման ավարտից քիչ առաջ Աբրահամը հայտնաբերեց, որ նրա անկյուններից մեկում մի քար է բացակայում: Նա ուղարկեց Իսմաիլին համապատասխանող քարի որոնման, և երբ նա (Իսմաիլը) որոնումներից վերադարձավ, տեսավ, որ Աբրահամը այդ դատարկ տեղում մի քար է տեղադրել ու արդեն ամրացրել է: Այդ ժամանակ Իսմաիլը հարցրեց.

«Ով հայր: Որտե՞ղից ես գտել այդ քարը»: (Աբրահամը) պատասխանեց. «(հրեշտակ) Ջիբրիլն է բերել ինձ դա դրախտից»»: Այդպիսով Քաաբայի կանգնացումը ավարտվեց:



Նույնպես փոխանցվում է, որ սկզբից այդ քարը կաթից սպիտակ էր: Տիրմիդին մեջբերում է մարգարեի (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) հետևյալ խոսքերը.

«Սև քարը ուղարկված էր դրախտից և (այն) կաթից էլ սպիտակ էր, և սևացավ մարդկային մեղքերից»:

Աբրահամի Մաքամը

Մարգարեն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Եմենի անկյունն ու Աբրահամի Մաքամը դա Ջաննայի (Դրախտի Այգիների) շափյուղաներից երկուսն են, և եթե Ալլահը դրանց սկզբնական լույսը հանած չլիներ, կլուսավորեին ամբողջ աշխարհը՝ արևելքից արևմուտք»:

(Իբն Հիբան)

Աբրահամի Մաքամը դա մի քար է, որի վրա նա կանգնած էր Աբրահամը Քաաբան կառուցելիս: Նրա որդի Իսմաիլը օգնում էր նրան քարեր տալով:

Աբրահամի (մաքամը) տեղը: Իբրահիմ մարգարեի հրաշքներից մեկը հանդիսանում է այն, որ այն քարը, որի վրա նա կանգնում էր, Քաաբան կառուցելիս, փափկեց և նրա վրա պարզ տպվեցին մեծ մարգարեի հետքերը, որոնք կարելի է տեսնել մինչ օրս:

Խիրա քարանձավը:

Մարգարե Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) հաճախ որոշ գիշերներ էր անց կացնում Խիրա քարանձավում: Եվ հենց այդ քարանձավում էր գտնվում մարգարեն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան), երբ Ալլահը նրան ուղարկեց իր առաջին հայտնությունը, Գաբրիել հրեշտակի միջոցով:

Խիրա քարանձավը գտնվում է Մեքքայից արևելքի ճանապարհին գտնվող մի փոքր լեռան՝ (634մ) «Ջաբալ Ան-Նուռ» (լույսի սար) գագաթին: Այն գտնվում է Խառամից 4 կմ. հեռավորության վրա: Ան-Նուռ լեռը դա Մեքքայի (Ֆարան) այն լեռներից է, որ մեջբերված է Թորայում (Գլուխ 23, մաս 2):

Զամզամ ջրհորը



Զամզամ ջրհորը գտնվում է Քաաբայից 21մ հեռավորության վրա: Փորվել է ձեռքերով և նրա խորությունը 30մ է, իսկ լայնքը տատանվում է 1,08-2,66մ:

Իբրահիմը Ագարի և իր որդի Իսմաիլի հետ գնաց Քաաբայի մոտակայքում գտնվող մի տեղ և այնտեղ մի ծառի տակ թողեց նրանց (Զամզամի մոտ, որը դեռ չէր հայտնաբերված): Մինչ այդ Մեքքան անբնակելի վայր էր, սակայն Աբրահամը ընտրեց այն որպես կացարան Ագարի և Իսմաիլի համար: Եվ (Իբրահիմը) նրանց այնտեղ թողեց, տալով նրանց սնունդ ու ջրով լի մորթյա տարան, որից հետո նա շարժվեց (դեպի տուն), իսկ Իսմաիլի մայրը հետևում էր նրան ասելով.

«Ով Իբրահիմ, ու՞ր ես գնում: Այստեղ ոչ ոք չկա, որ մեր հետ լինի և ոչինչ օգտակար չկա»:

Եվ նա շատ անգամ կրկնեց (այդ խոսքերը), սակայն Աբրահամը նույնիսկ չշրջվեց նրա կողմը: Հետո Իբրահիմի կինը հարցրեց նրան. «Ալլա՞հն է հրամայել քեզ անել դա»: Նա պատասխանեց. «Այո»: Ագարն ասաց. «Ուրեմն նա չի թողնի մեզ»: Դրանից հետո վերադարձավ (Իսմաիլի մոտ), իսկ Աբրահամը գնաց (շարունակեց ճանապատհը), հասնելով լեռնանցքին, որտեղ չէին կարող տեսնել նրան, ուղղվեց Քաաբայի կողմը և խնդրեց Ալլահին հետևյալ խոսքերով.

«Տե՛ր մեր, ես իմ հետնորդներից որոշներին բնակեցրեցի հովտում, որտեղ ոչինչ չի աճում, քո անձեռնամխելի Տանը, Տեր մեր: Որպեսզի նրանք աղոթք անեն (կամ որպես կոչ ի Ալլահ՝ Տեր մեր, թող կատարեն աղոթքը): Եվ լցրու որոշ մարդկանց սրտերը սիրով և մոտեցրու նրանց, և Տուր նրանց պտուղներ, գուցե երախտապարտ լինեն»:

(Ղուրան 14:37)

Ագարը կերակրում էր Իսմաիլին կրծքով և (նրանց մոր եղած) ջուր էր խմում: Երբ ջուրը վերջացավ, նա և նրա որդին մնացին ծարավ: Եվ նա տեսնում էր, թե իր մահամերձ որդին լաց լինում ծարավից: Այդ ժամանակ նա վազեց ամենամոտ բլուրը, որն էլ Աս-Սաֆան էր: Բարձրացավ բլրի վրա, շրջվեց հարթավայրի կողմը և սկսեց

նայել այնտեղ (հույս ունենալով) տեսնել ինչ-որ մեկին, սակայն չտեսավ: Այդ ժամանակ նա վայր իջավ Աս-Սաֆայից, և երբ հարթավայր հասավ, բարձրացրեց իր շորերի ծայրերն ու սկսեց վազել (ինչպես կարող էր) հուսահատված մարդու պես: Նա անցավ այդ հարթավայրն ու հասավ Ալ-Մարվա: Բարձրանալով նրա վրա սկսեց նայել (չորս կողմը, հույս ունենալով) տեսնել ինչ-որ մեկին, սակայն ոչ մեկին չտեսավ: Նա յոթ անցամ բարձրությունից բարձրություն վազեց:

Իբն Աբբասն ասել է.

«Մարգարեն ասել է. «Ահա թե ինչպես սկսվեց Սաի-ի (քայլք ու վազք) սովորույթը Աս-Սաֆա և Ալ-Մարվա բլուրների միջև: Երբ (Ագարը) հասավ Ալ-Մարվա (վերջին անգամ) մի ձայն լսեց, այդ ժամանակ հանգստացավ ու սկսեց ուշադիր լսել: Կրկին լսեց ձայնն ու ասաց. «Դու (ով էլ լինես), որ լսել եմ ձայնդ, կարո՞ղ ես օգնել ինձ»: Եվ այդ ժամանակ, այդ նույն տեղում (որտել այժմ գտնվում է Զամզամ ջրհորը), նա մի հրեշտակ տեսավ, որը խփում էր գետնին իր թևերով, մինչ այդտեղից ջուր դուրս եկավ: Ագարը անմիջապես մի փոքր թումբ պատրաստեց հողից, որ պահի աղբյուրն ու ջուր լցրեց մորթյա տարանը»:

-Մարգարեն ավելացրեց նաև. «Ալլահը ողորմի Իսմաիլի մորը: Եթե թողեր, որ ջուրը գնա և չհավաքեր այն կամ չլցներ տարանը, Զամզամը կարող էր լինել մի առվակ, որ հոսում է երկրի վրա»:

(Ալ-Բուխարի)

Աս-Սաֆան ու Ալ-Մարվան:

Դա երկու բլուրներ են, որոնց միջև վազել էր Իսմաիլի մայրը, ջուր ու սնունդ որոնելով: Մարգարեի Սուննային (ծիսակատարություն) հետևելով, ուխտագնացները քայլում ու վազում են վազք այդ բլուրների միջև:



Աս-Սաֆայի ու ալ-Մարվանի միջև հեռավորությունը կազմում է մոտ 450մ, այդպիսով նրանց միջև յոթ ծիսական վազքերի ժամանակ ուխտագնացը վազում է 3,15կմ:

Ջամարատը (Սատանային քարկոծումը)

Կան երեք Ջամարատներ և բոլորն էլ գտնվում են Մինայի հարթավայրում: Մեծ Ջամարատը (Ալ-Ակաբա), Միջին Ջամարատն (Էլ-Ուստա) ու Փոքր Ջամարատը (Աս-Սուգրա): Փոքր ու Միջին Ջամարատների միջև հեռավորությունը 150մ է և Միջինի ու Մեծի միջև՝ 225մ:

Դա այն տեղերն են, ուր շայտանը (սատանան) մոտեցել էր Աբրահամին (Երբ նա թողնելով Ագարին ու Իսմաիլին վերադառնում էր տուն), և փորձեց կասկած ներշնչել նրա սիրտը: Աբրահամը մի քանի քար հավաքեց և դրանցով հեռացրեց շայտանին (նետելով դրանք նրա ուղղությամբ): Միլիոնավոր մուսուլմաններ ամեն անգամ հաջի կատարման ժամանակ, քարեր են նետում Ջամարատի սյուներին, հետևելով Աբրահամ մեծ մարգարեի Սուննային: Այդ սյուները չեն հանդիսանում շայտան կամ նրա վերափոխում, ինչպես սովորաբար կարծում են որոշ մարդիկ: Դա հաջի հատուկ ծիսակատարություն է, որը կատարելով մուսուլմանները ապացուցում են, որ սատանան իրենց բացահայտ թշնամին է, որի դեմ պետք է պայքարել: Եվ այդ պայքարի

իմաստը դա գայթակղություններին ընդդիմանալն է, Ալլահի հրամանները կատարելն ու արգելվածներից զերծ մնալը:

Մուսուլմանական տոները (Էիդ)

Այս գրությունը հանդիսանում է արաբների սովորույթների շնորհավորանք և ունի իր մեջ բարեկեցության ցանկությունը: Այն արված է հատուկ գեղեցիկ գրելու ոճով՝ տագրա, որը օգտագործվում է մուսուլմանական սուլթանների որպես կնիք, Իսլամական Կիլաֆֆայի ընթացքում:

Ամեն տարի մուսուլմանները նշում են երկու մեծ տոն՝ Իյդուլ ֆիտրը, որը նշվում է Ռամադանից հետո և ցույց է տալիս պահքի ավարտը: Եվ Իյ Էիդ Ալ-Ադխան (զոհաբերությանը), որը անվանվում է այդպես քանի որ մուսուլմանները ձգտում են ավելի մոտենալ Ալլահին կենդանի զոհաբերելով, այդպիսով հետևելով այդ ճանապարհով Աբրահամի սովորույթին (Սուննային):

Աբրահամը երազում տեսել է, թե ինչպես է զոհաբերում իր որդի Իսմաիլին, և մարգարեների երազները ճշմարտություն են: Սակայն երբ գնաց, որ զոհաբերի իր որդուն Ալլահն ասաց.

«Եվ ուրախացրեցինք նրան համբերատար երեխայի գալուստի ավետով: Երբ նա հասավ այն տարիքին, որ կարողանա քայլել ու օգնել նրան (հորը), նա (Աբրահամը) ասաց. «Որդի՛ս: Ես երազումս տեսնա, թե ինչպես եմ քեզ մորթում (զոհաբերում հանուն Ալլահի): Տե՛ս, ի՞նչ ես հավատում (ի՞նչ ես մտածում)»: Նա ասաց. «Հա՛յր իմ: Արա այն՝ ինչ հրամայված է քեզ (Ալլահից): Եթե Ալլահը ցանկանա, դու ինձ ամենահամբերատարներից մեկը կճանաչես»: Երբ նրանք երկուսն էլ ենթարկվեցին Ալլահի ցանկությանը, և (Աբրահամը) նա դրեց նրա ճակատը գետնին, Մենք կանչեցինք. «Ով Աբրահա՛մ: Դու ապացուցեցիր երազի իսկությունը»: Ճշմարիտ, մենք այդպես ենք պարգևատրում բարեգործներին՝ Ալ-Մուխսենիններին (Մեր հրամանները կատարողներին)»:

(Ղուրան 37:101-111)

Մարգարեի մզկիթը:

Դա Իսլամում կառուցված առաջին մզկիթն է: Մարգարեն թաղվել էր իր կացարանում, որ մզկիթի կողքին էր, քանի որ մարգարեներին թաղում են այնտեղ՝ ուր մահանում են: Պատվավոր արարք է նրա գերեզմանի դիմացով անցնողի համար, եթե ողջունի նրան:

Մարգարեի Մեդինայում գտնվող մզկիթը կարող է տեղավորել միաժամանակ երկու միլիոնից ավելի մարդկանց: Մուսուլմանները ձգտում են աղոթել հենց այս մզկիթում, քանի որ դրա համար մեծ նվիրատրություն է խոստացված:

Ժայռի գմբեթի մզկիթը (Երուսաղեմ):

Դա այն տեղն է, որն ընտրել է Աբրահամը աղոթք կատարելու համար՝ ուր էլ նա զոհաբերում էր կենդանիներին: Յակուբը (Հակոբ), որը կանգնած էր այդ տեղի մոտ, տեսավ թե ինչպես է մի լույսի սյուն դուրս գալիս այդ տեղից: Մովսեսը իր ժողովրդի հետ այդտեղ էր տեղակալվել եկել Տաիխի (երբ հրեաները կորել էին) ժամանակ:

Դավիթն այնտեղ աղոթարանն էր կառուցել և այդտեղ էլ կառուցվեց Սողոմոնի Տաճարը: Գիշերային ճամփորդության ժամանակ (Ալ-Իսրա Ուա Ալ-Մըռաջ) այդտեղից Մուհամեդ (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) Մարգարեն երկինք բարձրացավ:

Ալ-Ակսա մզկիթը (Երուսաղեմ)

Դա երկրում կառուցված երկրորդ մզկիթն է:

Աբու Դառն ասել է.

«Հարցրեցի. «Ով Ալլահի առաքյալ: Ո՞րն է առաջին մզկիթը, որ կառուցվել է երկրի վրա»: Նա պատասխանեց. «Ալ-Հարամ մզկիթը (Մեքքայի Սուրբ Տունը)»: Այնուհետև ես հարցրեցի. «Իսկ դրանից հետո ո'ր մզկիթն է կառուցվել»: Նա պատասխանեց. «Ալ-Ակսա մզկիթը»: Կրկին հարցրեցի. «Իսկ դրանց հայտնվելու միջև ինչքա՞ն ժամանակ է անցել»: Նա պատասխանեց. «Քառասուն տարի և երբ էլ աղոթես, արա դա ուր էլ լինես, քանի որ ամբողջ աշխարհը աղոթավայր է»»:

(Մուսլիմ)

Այդ մզկիթը կառուցեց մարգարե Սողոմոնը՝ Դավիթի որդին: Աբդուլլա իբն Ամր իբն Ալ-Ասը ասել է, որ Ամր իբն Ալ-Ասն ասել է մարգարե Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) հետևյալ խոսքերը. «Դավիթի որդի Սողոմոնի որոք Ալ-ակսայի կառուցվելուց հետո, նա դիմեց Ալլահին, խնդրելով Նրանից երեք բան, և Ալլահը նրան տվեց դրանցից երկուսը, և մենք հուսում ենք, որ Ալլահը մեզ տա նաև երրորդը: Նրանից կառավարություն և թագավորություն խնդրեց, որ տրված չէր նախկիններից ոչ մեկին և չի տրվի նրանից հետո, և Ալլահը նրան տվեց այդ երկուսը: Նաև խնդրեց բոլոր տնից դուրս եկողները, որ գալիս են այդ մզկիթում աղոթելու համար, առանց մեղք դուրս գալու համար (մզկիթից, աղոթքից հետո), լինի նորածնի պես անմեղ: Եվ մենք հուսում ենք, որ Ալլահը մեզ տվել է այդ ցանկությունը»»:

(Իբն Հուզայմա)

Ալ-Ակսա մզկիթը մուսուլմանների առաջին քիբլան (աղոթքի ուղղություն) է: Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ու նրա հետևորդները առաքելության սկզբում աղոթում էին Ալ-Ակսա մզկիթի ուղղությամբ մինչև, որ Արարիչը նրանց հրամայեց աղոթել Քաաբայի ուղղությամբ:

Մարգարե Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) Ալ-Ակսա մզկիթում կանգ առավ ոչ երկար, մինչ նրա յոթերորդ երկինք բարձրանալը՝ «գիշերային ճանապարհորդության» ժամանակ: Այնտեղ էլ կատարեց միասնական աղոթք բոլոր նախկին մարգարեների հետ: Այդ մզկիթը երրորդ Խարամն (Կրոնի Սրբավայր) է Մեքքայից ու Մեդինայից հետո:

Ալլահն ասում է.

«Փառք Նրան (Ալլահին), Ով վերցրեց Իր ծառային (Մուհամեդին) գիշերվա ընթացքում Ալ-Մասջիդ Ալ-Խարամից (Մեքքայի Սուրբ Տնից) դեպի Ալ-Մասջիդ Ալ-Ակսա (Երուսաղեմ), որ օրհնեցինք նրա շրջապատը, որ նրան ցույց տանք Մեր Այաթներից (փաստաթղթեր, ցուցադրումներ, դասեր, նշաններ): Ճշմարիտ, նա Աս-Սամի (ամեն ինչ լսող) է, Ալ-Բասիր (ամեն ինչ տեսնող):

(Ղուրան 17:1)

Իսլամն ու...

Իսլամն ու հարստությունը

Իսլամում բոլոր հարստությունները պատկանում են միայն Ալլահին, և նա վստահել է դա մարդկանց: Հարստություն ունենալը մարդու համար պատասխանատվություն է: Այն պետք է ձեռք բերվի Իսլամում թույլատրված միջոցներով և ծախսվի թույլատրված միջոցներով, ընդ որում այն իր անձի կամ իր անձից կախվածություն ունեցողների համար մուսուլմանը պետք է ձեռնպահ մնա ավելնորդություններից և վատնելուց:

Մարգարե Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Դատաստանի օրը Ալլահի ոչ մի ստրուկ չի կարող քայլ անել մինչ հարցված չլինի չորս բաներ. թե թե ինչպես է օգտագործել իր ժամանակը, թե ինչպես է անց

կացրել իր երիտասարդությունը, թե ինչպես է ստացել իր հարստությունները և ինչպես է ծախսել, թե ինչպես է օգտագործել իր գիտելիքները»:

(Ատ-Տիրմիդի)

Հարստությունը պետք է ճիշտ ծախսվի:

Ալլահն ասել է.

«Բարեպաշտությունը չի կայանում նրանում, որ ուղղեք ձեր երեսները արևելք ու արևմուտք: Սակայն բարեպաշտություն է Ալլահին, Դատաստանի Օրվանը, Հրեշտակներին, Գրքին, մարգարեներին հավատալը, իր ունեցվածքից տալը՝ բարեկամներին, որբերին, աղքատներին, օտարական ճամփորդներին, խնդրողներին և հանուն ստրուկների ազատման, չնայելով սիրուն դեպի ունեցվածքը»:

(Ղուրան 2:177)

Իսլամն ու կինը

Համաձայն իսլամական մոտեցման տղամարդն ու կինը տարբեր են իրար նկատմամբ և յուրաքանչյուրը խաղում է իր հատուկ դերը կյանքում: Կնոջ հանդեպ հարգալից վերաբերմունքը դա այն չափումն է, որը որոշում է տղամարդու ներքին մաքրության բարեպաշտության մակարդակն ու կարգապահությունը: Ալլահի առաքյալն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ձեզանից լավագույնը նա է՝ ով բոլորից առավել լավ է վերաբերվում իրենց ընտանիքին (կանանց), և ես ձեր մեջ լավագույնն եմ իմ ընտանիքի (կանանց) հանդեպ»:

(Ատ-Տիրմիդի)

Կինը դա առաջին մարդն է, ում հետ տղամարդը պետք է արդար լինի, պահպանի կապերն ու լավ վերաբերվի: Մի անգամ մի մարդ մարգարեին (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) հարցրեց.

«Ո՞վ է բոլորից շատ արժանի իմ կապվածությանը բարությանն ու լավ վերաբերմունքին»: Նա պատասխանեց. «Քո մայրը»: Տղամարդը հարցրեց. «Իսկ այնուհետև ո՞վ»: Պատասխանեց. «Քո մայրը»: Տղամարդը հարցրեց. «Իսկ այնուհետև ո՞վ»: Առաքյալը պատասխանեց. «Քո մայրը»: Տղամարդը հարցրեց. «Իսկ այնուհետև ո՞վ»: Առաքյալը պատասխանեց. «Քո հայրը»:

(Ալ-Բուխարի)

Ալլահի առաքյալ Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Կանայք տղամարդկանց զույգերն են»:

(Աբու Դաուդ)

 Կինը ունի այնպիսի մարդկային բնություն ինչպիսինն ունի տղամարդը, և դրանում Իսլամը նրանց միջև ոչ մի տարբերություն չի դնում: Իսլամը կնոջը չի համարում մեղքերի աղբյուր, և չի զննում նրան որպես մեղավոր Ադամին դրախտից վտարման համար:

 Կինը ինչպես և տղամարդը հավասար են անձին վերաբերվող թեմաներում: Իսլամում կինը պահպանում է իր անունն ու ազգանունը ամուսնությունից հետո՝ չեն ընդունում տղամարդկանց ազգանունները:

 Կնոջը ինչպես և տղամարդուն սպասում է պարգև այս և հաջորդ կյանքում Ալլահի օրենքները կատարելու համար, և նա ինչպես և տղամարդը կպատժվի Ալլահին ենթարկվելուց հրաժարվելու դեպքում:

 Իսլամում կնոջ պատիվը հավասար է տղամարդունը, այն փաստում, որ Իսլամը ձգտում է պահպանել և բարձրացնել նրանց պատիվը:

 Կինը ինչպես և տղամարդը ունի ժառանգություն ստանալու իրավունք:

 Կինը տղամարդուն հավասար կարող է անել ինչ ուզում է իր ունեցվածքի հետ:

 Կինը ինչպես և տղամարդը պատասխանատու են հասարության հանդեպ:

 Կինը ինչպես և տղամարդը ունի կրթություն և ճիշտ դաստիարակություն ստանալու իրավունք:

 Լավ դաստիարակություն ստանալու, լավ մանկության ու հոգ տանելու թեմաներում կանայք տղամարդկանց հետ ունեն հավասար իրավունքներ: Իսլամը հաստատում է, որ եթե կատարվեն այդ ամենը, ապա կանանց վիճակը զգալիորեն կլավանա:

 Կանայք իրավունք ունեն իրենց ամուսիններից ստանալ այն ամենը՝ ինչի կարիքն ունեն, և նույնիսկ ավելի շատ: Եթե նա ամուսնացած չի, ապա նրան ապահովում է նրա հայրը, իսկ նրա մահվանից հետո, նրա եղբայրները, իսկ հայր ու եղբայրներ չունենալու դեպքում ապահովում են նրա մոտ բարեկամները:

 Կինը իրավունք ունի պահել բոլոր գումարներն իր մոտ: Նա պատասխանատու չէ ընտանիքի տնտեսական ապահովության համար:

 Կանայք իրավունք ունեն սեքսուալ բավարարություն ստանալ իրենց տղամարդկանցից:

 Կինը իրավունք ունի ապահարձանից հետո իրենց մոտ պահել երեխաներին, բացի այն դեպքերից, եթե նրա ի վիճակի չեն խնամել և ճիշտ դաստիարակություն տալ երեխաներին կամ այլ լուրջ պատճառների դեպքերում:

 Կինը իրավունք ունի բաժանվելուց կամ ամուսնու մահից հետո կրկին ամուսնանալ:

Ալլահի առաքյալն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

««Նա ով ունի երեք դուստր կամ երեք քույր, և ապահովելով է նրանց արժանապատիվ խնամք, վախենալով Ալլահից, իմ հետ այսպես կլինի՝ Դրախտում»: Եվ նա ցույց տվեց իրար կպցված յուր չորս մատերը»:

(Ահմադ և ուրիշներ)

Իսլամական աշխարհայացքը սեռական հարաբերություններին

Իսլամը կանանց ու տղամարդկանց միջև սեռական հարաբերությունները համարում է մարդկային հիմնական բնական կարիք, որը ոչ թե պետք է խթանել, այլ ընդհակառակը՝ անհրաժեշտ է հոգալ թույլատրված և արժանապատիվ միջոցով: Տղանարդու և կնոջ միջև ինտիմ հարաբերությունները Իսլամում չեն համարվում անբնական կամ ամոթալի և չի համարվում, որ պետք է ձեռնպահ մնալ դրանից:

Իսլամը ունի հատուկ օրենքներ, որին էլ համաձայն կարելի է բավարարել այդ կարիքը: Չպետք է իհարկե բավարարի վայրի կամ անենթարկելի կերպով, այլ կարող է անել դա ամուսնության շնորհիվ:

Իսլամում ամուսնության վերջնական նպատակն է զույգի հոգեկան և զգացմունքային հավասարակշռմանը հասնելը:

Ալլահն ասում է.

«Նրանք (ձեր կանայք) ձեր լիբասներն (ծածկոցը, հագուստը, պաշտպաններ, Սականները (այսինքն՝ վայելեք համակեցության ուրախությունը նրանց հետ)) են և դուք էլ նրանց լիբասը»:

(Ղուրան 2:187)

Որպեսզի պահպանվի հասարակության ու նրա անդամների մաքրությունը Իսլամը արգելում է այն ամենը՝ ինչ կարող է բերել մարդու մոտ անկառավարելի տանջանք, որը որպես կանոն սեռական խեղաթյուրումների ու անձի նկատմամբ բռնության պատճառ է դառնում: Այդ ամենը տանում է հասարակությունում վեներական հիվանդությունների տարածմանը, ընտանիքների անկման, որը ձևավորում են ապօրինի երեխաները, որոնք չեն ստացել ճիշտ դաստիարակություն և զրկվել են ծնիշական սիրուց...

Ալլահն ասում է.

«Մի մոտեցեք ամուսնական հավատարմության խախտմանը, քանի որ այն Ֆախիսա (մեծ մեղք ու զզվելի արարք) է ու վատ ճանապարհ»:

(Ղուրան 17:32)

Իսլամն ու ոչ մուսուլմանները

Իսլամը պաշտպանում է մուսուլմաններին թշնամություն չանող ոչ մուսուլմանների կյանքը, ունեցվածքն ու պատիվը: Արգելվում է նրանց նեղել ու փնովել, անօրինական է նրանց երաշխավորված իրավունքները խլելը, անարդար է նրանց շահագործելը:

Ալլահն ասում է.

«Ալլահը չի արգելում ձեզ լինել բարի և արդար նրանց հետ՝ ովքեր չեն պատերազմում ձեր դեմ կրոնի պատճառով և ձեզ չեն աքսորում ձեր օջախներից: Քանի որ, Ալլահը սիրում է արդարներին»:

(Ղուրան 60:8)

Ալլաքի առաքյալն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ճշմարիտ, նրան՝ ով մարդ է նեղում, որը պայմանագիր է կնքել մեր հետ, խախտում է նրա իրավունքները, նրա վրա անտանելի բեռ է դնում կամ առանց նրա թույլտվության որևէ բան է վերցնում նրանից, ես հայտարարում եմ իմ հակառակորդ

Դատաստանի Օրը»: Դա ասելուց հետո մատով ցույց տվեց իր կուրծքն ու ավելացրեց. «Ճշմարիտ, նրան՝ ով մարդ է սպանել, որի հետ կնքել ենք պայմանագիր և որը գտնվել է Ալլահի ու նրա առաքյալի պահպանության ներքո, չի վիճակվի զգալ դրախտի հոտերը, իսկ այդ հոտերը զգացվում են յոթանասուն տարի հեռավորությունից»:

(Ալ-Բայհակի)

Իսլամն ու մյուս Աստվածային կրոնները

Իսլամը կարգադրում է իր հետևորդներին պարտադիր հավատալ նախկին Աստվածային կրոններին իրենց բոլոր առաքյալներով ու մարգարեներով: Մուսուլմանները պետք է սիրեն ու հարգեն նրանց բոլորին:

Ալլահն ասում է.

«Այդպիսինն է մեր փաստարկը, որը տվեցինք Աբրահամին նրա ժողովրդի դեմ: Մենք բարձրացնում ենք բարձր տեղերի ում ցանկանում ենք և քո Տերը Խակիմ (ամենաիմաստուն) ու Ալիմ (ամենագետ) է: Մենք նվիրեցինք նրան (Աբրահամին) Իսահակին ու Հակոբին և տարանք նրանց (երկուսին էլ) հարթ ճանապարհով: Եվ նրանից (Աբրահամից) առաջ տարանք Նոյին, իսկ նրա հետնորդներից՝ Դավիթին, Սողոմոնին, Հոբին, Հովսեփին, Մովսեսին և Ահարոնին, և այդպես Ենք նվիրատրում Ալ-Մուխսենիններին (բարեգործներին): Ինչպես նաև Զաքարիային, Հովհաննեսին, Հիսուսին և Իլիասին, որ բոլորն էլ բարեգործնից են: Ինչպես նաև Իսմայելին, Ելիսանին, Իոնին ու Լոթարին, նրանց բոլորին նախընտրեցինք բոլոր մարդկանցից բարձր: Ինչպես նաև նրանց հայրերից, հետնորդներից ու եղբայրներից որոշներին: Մենք նախընտրեցինք (ընտրեցինք) նրանց և տարանք հարթ ճանապարհով»:

(Ղուրան 6:83-87)

Ինչ է ասվում Ղուրանում Մովսեսի մասին

Ալլահն ասում է.

«Եվ պատմես, կարդալով Գրքում (Ղուրանում) Մովսեսի մասին (պատմությունը): Ճշմարիտ, նա ընտրյալ էր և առաքյալ էր ու մարգարե»:

(Ղուրան 19:51)

Ալլահն ասել է.

«Նա (Ալլահն) ասել է. «Ո՛վ Մովսես: Ես քեզ նախընտրեցի մարդկանից բարձր իմ առաքելություններով (որ Ես քեզ տվեցի) և Իմ խոսքերով (որ Ես քեզ ասացի): Վերցրու այն՝ ինչ տվել Եմ քեզ և եղիր շնորհակալներից մեկը»:

(Ղուրան 7:144)

Ալլահն ասել է.

«Մենք նույնպես տվեցինք Մովսեսին գիրքը (Տորան) որպես (Մեր պարգևատրման) լրացում նրան՝ ով բարեգործ էր, և որպես ամեն բանի մանրամասն բացատրություն և որպես ուղղություն ու ողորմություն, այնպես որ նրանք միգուցե հավատան, որ հանդիպելու են իրենց Տիրոջը»:

(Ղուրան 6:154)

Ալլահն ասել է.

«Մենք ուղարկեցինք Մուսային (Մովսեսին) մեր Այաթների (խորհրդանիշների, փաստերի, տվյալների) հետ (նրան ասելով). «Հանիր քո ժողովուրդը խավարի խորքից դեպի լույս և հիշացրու նրանց Ալլահի Օրերը (Աստվածային փաստերն ու Ալլահի պարգևները)»: Ճշմարիտ, կան դրանցում Աստվածային Նշեր ամեն համբերատար ու երախտապարտ մարդու համար»:

(Ղուրան 14:5)

Ինչ է ասում Ղուրանը մարգարե Հիսուսի և նրա մոր՝ Մարիամի (Մարիա) մասին

Ալլահն ասել է.

«Երբ հրեշտակները ասացին. «Ով Մարիամ: Ճշմարիտ, Ալլահն ընտրեց քեզ, մաքրեց ու բարձրացրեց աշխարհի բոլոր կանանց միջից»»:

(Ղուրան 3:42)

Ալլահն ասել է.

«Եվ Իսան (Հիսուսը) Ալլահի համար նման է Ադամին: Նա ստեղծեց նրան հողից, իսկ այնուհետև նրան ասաց. «Եղի՛ր»: Եվ նա եղավ»:

(Ղուրան 3:59)

Ալլահն ասել է.

«Ով Աստվածաշնչի երկրպագուներ: Ավելորդություն մի ցուցաբերեք ձեր կրոնում և ասեք Ալլահի մասին միայն ճշմարտությունը: Հիսուս Քրիստոսը՝ Մարիամի որդին միայն Ալլահի առաքյալ է, և Նրա Խոսքը («Եղի՛ր» –ու եղավ), որ ուղղված էր Մարիամին, և մի ոգի (որ ստեղծվեց) Նրանից (Ալլահից) (Գաբրիելը փոխանցել է Ալլահի խոսքը Մարիամին և նրեշնչել է Հիսուսի հոգին նրա արգանդը): Հավատացեք Ալլահին ու նրա առաքյալներին և մի ասեք. «Երրորդություն»: Դադարեք, քանի որ այդպես ավելի լավ կլինի ձեր համար: Քանի որ Ալլահը Միակն ու Յուրօրինակն է, շատ Փառավոր ու Բարձր, որ երեխա ունենա: Նրան է պատկանում այն՝ ինչ երկնքում է և այն՝ ինչ երկրի վրա է: Բավական է, որ Ալլահն է ամեն ինչի կարգավորողը»:

(Ղուրան 4:171)

Մուսուլմանները սիրում են Հիսուսին ու նրա մորը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրանց)

Հիսուսը (Արաբերեն Իսա), (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) մեջբերվում է Սուրբ Ղուրանում տասնվեց տարբեր հատվածներում: Մի դեպքում՝ «Ալ-Մաիդա» (5) սուրայի 110-րդ այաթում Ալլահն ասել է.

«Այդ ժամանակ Ալլահը կասի (Դատաստանի Օրը). «Ով Հիսուս, Մարիամի որդի: Հիշիր այն պարգևը, որ ես տվեցի քեզ ու քո մորը, երբ աջակցեցի քեզ Ռուխ-Էլ-Կուդուսով (Սուրբ Ոգով (Ջիբրիլով)), և երբ խոսում էիր մարդկանց հետ օրրանում (նորածին տարիքում) և երբ մեծացար (որ նրանց Ալլահի կրոն հրավիրեց): Ես քեզ սովորեցրեցի գրությունը, իմաստությունը, Թաուրան (Թոր) և Ինջիլը (Ավետարան), և Իմ թույլտվությամբ դու կավից պատրաստեցիր մի թռչնի արձանիկ և փչեցիր դրա վրա, և իմ թույլտվությամբ այն թռչուն դառավ, և բուժեցիր բնածին կույրերին ու բորոտներին, իմ թույլտվությամբ համբարձեցիր մահացածներին, խանգառեցի Իսրայելի որդիներին (երբ որոշել էին սպանել քեզ), երբ դու հայտնվել էիր նրանց մոտ պարզ ապացույցներով, իսկ նրանց մեջի անհավատները ասացին, որ դա ընդամենը բացահայտ կախարդություն է»»:

(Ղուրան 5:110)

Մյուս կողմից Մարգարե Մուհամեդ (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) անունը Ղուրանում մեջբերվում է ընդամենը չորս անգամ, իսկ Մարիամինը՝ Հիսուսի մորը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան), մեջբերվում է ութ անգամ և գոյություն ունի մի ամբողջ սուրա (Ղուրանի մաս (գլուխ)), որը կրում է նրա անունը:

Ալ-Իմրան (3) սուրայի 45-րդ այաթում (բանաստեղծություն) Ամենազոր Ալլահն ասել է.

«Երբ հրեշտակները ասացին. «Ով Մարիամ, Ալլահը ուրախացնում է քեզ Իր մի Խոսքով («Եղի՛ր» և նա եղավ: այսինքն ով Հիսուս, Մարիամի որդի), որի անունը կլինի Մեսսիա Իսա (Հիսուս), Մարիամի (Մարիայի) որդի, պատվավոր այս աշխարհում և մյուսում, և նա կլինի նրանց մեջ՝ ովքեր ամենամոտն են Ալլահին»:

(Ղուրան 3:45)

Որպես ընտանիք Հիսուսն ու Մարիամը մեջբերվում են Ղուրանում երեք անցամ, և մի ամբողջ սուրա այդպես էլ կոչված է՝ (Ալ-Իմրան=Իմրանի ընտանիքը), որը փորագրվել է մուսուլմանների սրտերում և ուղեղներում:

Իսլամն ու Ջիհադը

Իսլամի սխալ հասկացված բառերից մեկը դա *Ջիհադ* բառն է: Դժբախտաբար այդ բառը օգտագործվել է սխալ ճանապարհով և դրա արդյունքում շատ մարդիկ կապում են այդ բառի հասկացությունը պատերազմի և հանցագործության հետ: Բառացիորեն ջիհադ նշանակում է պայքար բարու կամ չարի համար: Բառի հիմնական նշանակությունը դա ինքն իր դեմ, տիրանի և նեղվածության դեմ հակամարտությունն ու դիմադրությունն է:

Ջիհադ բառը կարող է նշանակել նաև պատերազմական գործողություն: Օգտագործվում է որպես վերջնական գործողություն մարդու իրավունքները պաշտպանելու և այլ անարդարությունների դեմ: Նույնիսկ պատերազմային ժամանակներում մուսուլմանները կոչ են արվում իրենց պատիվը բարձր պահելուն: Տանջարանները շատ խստորեն արգելվում են: Նաև արգելվում է նույնպես խստորեն վատ վերաբերմունքը անզենների, կանանց, երեխաների և տարիքավորների հետ պատերազմային ժամանակներում:

Ալլահի առաքյալ Մուհամեդն ասել է.

«Պատերազմեք հանուն Ալլահի և Նրա համար... մի՛ անցեք ձեր չափերը, մի՛ շահագործեք դրությունները, մի դավադրեք և հարգեք զոհվածների մարմինները, և մի սպանեք փոքր երեխաներ»

(Մուսլիմ):

Իսլամը նաև արգելում է սրբավայրերի պղծումն ու վերացումը, սպանությունը կամ կենդանիներին վնասելն ու ծառերի վերացումը:

Մուսուլմանների և անհավատների միջև պատերազմի ժամանակ Աբու Բակրը՝ մարգարեի մահից հետո առաջին խալիֆը, նախազգուշացրեց իր հրամանատարներին, ասելով նրանց.

«Ով մարդի՛կ: Ձեզ տաս բան եմ հրամայում և անգիր իմացեք դրանք. Մի՛ դավաճանեք, մի՛ անցեք ձեր չափերը, մի՛ խախտեք համաձայնությունները, մի դավադրեք և հարգեք զոհվածների մարմինները, և մի սպանեք փոքր երեխաներ, ծերերին ու կանանց: Մի՛ կտրեքեք և ոչ էլ այրեք ծառերը: Մի կտրեք բերքատու ծառեր, մի մորթեք ոչխարներ, կովեր կամ ուղտեր մի՛ մորթեք, եթե չեք ուտելու: Կանցնեք այնպիսի վայրերով, որտեղ վանքերում փակված մարդիկ են ապրում. Մի՛ անհանգստացրեք նրանց, այլ թողեք մնան իրենց վայրում՝ որտեղ նվիրվել են:

(Ատ-Տաբարի, գ. 3)

Մարգարեն իր հետևորդներին ասել է, որ մեծագույն ջիհադը դա մարդու ինքն իր դեմ պայքարն է:

Իսլամը խաղաղության կրոն է

Իսլամը խաղաղության կրոն է:

Ինչպես արդեն գիտեք Իսլամը դա Ալլահին ենթարկվելն է, նրա հրամաններին առանց վեճի ենթարկվելն ու բազմաստվածությունը ժխտելն է: Չկան այնպիսի բարի գործեր որոնց չի կոչում Իսլամը, ինչպես նաև չկան այնպիսի մեղքեր ու չարագործություններ որ Իսլամը չի արգելում անել: Իսլամը ամեն մարդու տալիս է խաղաղություն ու հանգստություն, երաշխավորում է հասարակության մեջ յուրաքանչյուրի իրավունքների պաշտպանությունը:

Ալլահը Ղուրանում ասում է.

«Ասա. «Եկեք ձեզ կարդամ այն, ինչ արգելել է ձեզ ձեր Տերը. Մի՛ կապեք Նրան ոչնչի հետ, վերաբերվեք ձեր ծնողներին լավագու՛յն կերպով՝ լի բարությամբ, մի սպանեք ձեր երեխաներին, վախենալով աղքատությունից, քանի որ Մենք կապահովենք ձեր և ձեր երեխաներին սննդով: Մի մոտեցեք Ալ-Ֆաուահիշին (լոխկալի արարքներին), ոչ բացահայտ, ոչ էլ թաքուն, մի սպանեք ոչ մի հոգի (բացի այն դեպքից, երբ դա մի անհավատ է և հարձակում է մուսուլմանների վրա), եթե դրա իրավունքը չունեք (եթե չի պահանջում արդարությունը): Դա ձեզ պարտադրել է Ալլահը, միգուցե դուք հասկանաք:Մի՛ մոտեցեք որբի ունեցվածքին, եթե չեք մոտենում

լավ ճանապարհով (և լավ մտքով, որ բարեկարգացնելու համար), մինչ նա չհասնի հասուն տարիքի: Հաշվեք ու կշռեք (լիովին) արդար: Մենք մարդուն իր հնարավորությունները գերազանցող դժվարություններով չենք ծանրաբեռնում: Երբ դուք խոսում եք, արդար եղեք, նույնիսկ եթե դա վերաբերվում է ձեր բարեկամին: Կատարեք Ալլահի համաձայնությունը: Դրանք է ձեզ ստիպում Ալլահը, որպեսզի լրջորեն ի նկատի ունենաք»:

(Ղուրան 6:151-152)

Ալլահը նաև ասել է.

«Ալլահը հրամայում է Ալ-Ադլ (արդարություն) և Ալ.Իխսան (Ալլահի դիմաց ծառայության կատարում լավագույն ձևով) և Իտա-դի Էլ-Կոռբա (բարեկամներին իրենց իրավունքները տալ, նրանց լավ վերաբերվելով ու սերտ կապեր պահպանելով) և արգելում է Ալ-Ֆախսա (ամեն լոխկալի արարք) և Ալ-Մունկառ (ամեն ինչ, որ արգելվում է Իսլամական Օրենքի կողմից) և Ալ-Բազի (վատ վարվելու և անարդարության ամեն տեսակ): Ձեզ պատվիրում է, որ լրջորեն ի նկատի ունենաք»:

(Ղուրան 16:90)

Հետևաբար Իսլամը դա խաղաղության ընդհանրացված կրոն է, այդ բառերի լրիվ իմաստով: Այդ ամենը իրագործվում են իսլամական հասարակության մեջ, ինչպես ասել է Ալլահը.

«Իսկ նրանք՝ ովքեր անարդարորեն կցածրացնեն (խոսքերով կամ արարքներով) հավատացյալ տղամարդկանց ու կանանց, ապա վերցնում են իրանց վրա ամենավատ ստորացումը և մի բացահայտ մեղք»:

(Ղուրան 33:58)

Մարգարե Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Մուսուլմանը նա է ում լեզուն ու ձեռքերը չեն վնասում մյուս մարդկանց, իսկ Մուհաջիրը (հանուն Ալլահի տեղափոխվածը) դա այն մարդն է, որը ձեռնպահ է մնում Ալլահի կողմից արգելվածներից»:

Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան ասել է նաև.

«Հավատացյալը այն մարդն է, որը վայելում է աշխարհի վստահությունը»:

Իսլամը միջազգային մակարդակի վրա կոչ է անում արդար համակեցության սկզբունքների վրա հիմնավորված պայմանագրային պարտավորությունների խիստ պահպանմանը: Ինչպես նաև դա լինում է, երբ մի իսլամական հասարակությունը չի

անցնում իր սահմանները (չափերը) այլ հասարակության նկատմամբ, նույն կերպով է վերաբերվում այն հասարակություններին, որոնք թշնամություն չեն անում մուսուլմաններին: Դրանք աստվածային խոսքերին են համաձայնում.

«Ով դուք, հավատացյալներդ: Մտեք Իսլամ ամբողջությամբ ու լավագույն կերպով (պահպանելով Իսլամի օրենքներն ու կանոնները): Եվ մի հետևեք Սատանայի քայլերին: Նա ձեր համար մի բացահայտ թշնամի է»:

(Ղուրան 2:208)

Իսլամը հրամայում է արդարությանը ու մեղադրում անարդարությունը, նույնիսկ նրանց համար, ովքեր նրան թշնամություն են անում:

Ալլահն ասել է.

«Ով դուք, հավատացողներդ: Կանգուն եղեք հանուն Ալլահի, որպես արդարության վկաներ, և մարդկանց ատելությունը թող ձեզ չդրդի անարդարության: Արդար եղեք: Դա է բարեպաշտության ամենամոտ բանն է: Եվ վախեցեք Ալլահից, քանի որ Նա շատ լավ գիտի ձեր արարքները»:

(Ղուրան 5:8)

Աս-Սալամը (Խաղաղը), Ալլահի փառավոր անուններից մեկն է:

Ալլահն ասել է.

«Նա Ալլահն է, և բացի նրանից աստվածություն չկա: Ալ-Մալեկը (Թագավոր), Ալ-Կուդուսը (Ամենասուրբ և Ամենաբարձր), Աս-Սալամը (ոչ մի անկատարություն չունեցող, Խաղաղություն), Ալ-Մումինը (Իր մարգարեներին հրաշքներով ու նշաններով հաստատող ու պահապան), Ալ-Մուհայմենը (Իր ստեղծածներին հետևող), Ալ-Ազիզը (Անհաղթ, Ամենազոր), Ալ-Ջաբարը (Ում որոշումը միշտ գործում է, բոլոր էակները կատարում են Նրա հրամանը), Ալ-Մուտակաբերը (Իր Վեհությունով Տպավորող), Ալլահը բարձր է բոլոր նրան որպես գործընկեր տրվածներից»:

(Ղուրան 59:23)

Աս-Սալամը դա Ալլահի այգու անվանումներից մեկն է:

Ալլահն ասել է.

«Դար Էս-Սալամ (դրախտ) կունենան իրենց Տիրոջից: Եվ նա Ուալի (Պահապան ու Հոգատար) է նրանց համար իրենց արածների համար (անցյալ կյանքի)»:

(Ղուրան 6:127)

Աս-Սալամ դա դրախտի բնակիչների ողջույնն է:

Ալլահն ասել է.

«Այն օրը՝ երբ նրանք կհանդիպեն Նրան, նրանց ողջույնը կլինի «Սալամ» բառը: Նա նրանց համար մեծ պարգև է պատրաստել (Դրախտը)»:

(Ղուրան 33:44)

Աս-Սալամը դա այն արտահայտությունն է, որով ողջունում են իրար մուսուլմանները, ասելով. «Աս-Սալամու ալեյկում»: Դա տալիս է հանգստության, հանգստության զգացմունք ողջունողին ու ողջույնն ընդունողին: Այն ասես իր մեջ պարունակում է անվտանգություն ու պահպանություն:

Այդ ողջույնը համաձայն մարգարեի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) խոսքերին հանդիսանում է լավագույն արարքներից մեկը հավատացյալների համար:

Նա ասել է.

«Հանուն Ալլահի, չեք մտնի դրախտ մինչև չհավատաք, և չեք հավատա, մինչև չսիրեք իրար: Ձեզ կհղեմ մի բանի, որը կատարելիս դուք կսիրեք իրար: Տարածեք Սալամը: Ողջունեք իրար»:

(Մուսլիմ)

Մարգարեն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) այդ ողջույնը նշանակեց որպես լավագույն արարքներից մեկը, քանի որ այն հանգստացնում է մարդկանց սրտերը և իրար է մոտեցնում մարդկանց, երբ ողջունում են մեկը մյուսին: Ինչպես նաև վերացնում է անհավասարություններն ու տարբերությունները:

Մարգարեին (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) հարցրեցին Իսլամի լավագույն արարքների մասին նա պատասխանեց. **«Կերակրել մարդկանց ու ասել. «Սալամ»: Ողջունի՛ր ծանոթներին ու անծանոթներին»**

(Բուխարի և Մուսլիմ)

Այդպիսով այս Իսլամ կրոնը բերեց օրենքներ, որ կարգավորում են մարդկային հարաբերությունները, պատերազմը, ամուսնությունը, հասարակությունը, քաղաքականությունը, երկրպագումը և այլն: Նպատակ ունի ստեղծել մի կատարյալ հասարակություն, որը կձևավորի ու կկարգավորի մուսուլմանների կապն իրենց Տիրոջ հետ, հասարակությանը շրջապատի աշխարհի հետ կամ կլինեն մարդկային հասարակություններ կամ էլ բնության համար: Ամբողջ մարդկությունը չի կարող ստեղծել Իսլամի պես մի կրոն: Դա այնպիսի կատարյալության հավատք է, որ

պարունակում է ամեն ինչ ու պետք է այն ընդունել, մարդիկ կոչ լինեն դեպի դա և հետևեն դա սերնդե սերունդ փոխանցմանը և ոչ թե թշնամաբար ընդունեն:

Իսլամն ու հասարակությունը

Իսլամը պատուիրում է բոլորին հոգ տանել միջավայրի պահպանության համար և արգելում է այն աղտոտելը: Դրան հասնելու համար Իսլամը օգտագործում է հետևյալ միջոցները.

- Իսլամը ոգևորում է ծառ կամ նմանատիպ օգտակար բույս տնկելուն:

Մուհամեդ մարգարեն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

«Եթե մուսուլմանը ծառ կամ բույս տնկի, որի պտուղը ուտելու է թռչունների, մարդկանց կամ այլ կենդանիների համար, դա պարգևի պատճառ է, քանի որ հաշվի է առնվում որպես ողորմություն տալու արարք»:

(Ալ-Բուխարի)

- Իսլամը նվիրատրություն է խոստանում նրան՝ ով ճանապարհից կհանի առարկան, որը խանգառում է մյուսներին կամ միջավայրի համար վտանգ է ներկայացնում:

Մարգարեն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

«Ճանապարհից վնասակար առարկա հեռացնելը դա ողորմություն տալու արարք է»:

(Ալ-Բուխարի)

- Մարդու կյանքի համար վտանգավոր վարագային հիվանդությունների հայտնվելու դեպքում Իսլամը հրում է կատարել կարանտինային ձեռնարկություններ, որպեսզի պահպանվի բարեկեցիկ թաղամասերում ապրող մարդկանց կյանքն ու առողջությունը:

Մարգարեն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է. **«Եթե լսեք, որ ինչ-որ տեղ վիրուսային հիվանդություն է առաջացել, ապա մի մեկնեք այնտեղ: Եթե դա լինի այն տեղը, որտեղ դուք եք գտնվում, դուրս մի եկեք այդ տեղից»:**

(ԱլԲուխարի)

- Իսլամը արգելում է կենդանիների աննպատակ սպանությունը:

Ալլահի առաքյալն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

«Եթե ինչ-որ մեկը առանց նպատակի ճնճղուկ սպանի, ապա Դատաստանի Օրը այդ թռչունը կդիմի Ալլահին. «Ով Ալլահ: Այն մարդը առանց պատճառի ինձ զրկել է կյանքից, և իմ մահը նրան ոչ մի օգուտ չտվեց»»:

(Իբն Հիբբան)

 Իսլամը խիստ արգելում է մարդկանց անհարմարություններ ստեղծելը, մարդկանց աշխատելու կամ հանգստանալու տարածքները աղտոտելու հետևանքով:

Ալլահ առաքյալն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

«Զեռնպահ մնացեք երկու արարքներից, որոնց արդյունքում մարդիկ անիծում են մյուսներին» (Նրա հետևորդները) հարցրեցին. «Իսկ այդ ի՞նչ արարքներ են, որոնց համար մարդիկ անիծում են իրար, ով Ալլահի առաքյալ»: Նա պատասխանեց. «Կարիքը հոգալը, այն վայրերում, որտեղով անցնում են մարդիկ, կամ այն տեղերում, որտեղ մարդը արևից թաքնվում է»:

(Մուսլիմ)

Իսլամն ու մաքրությունը

Իսլամը մաքրության կրոն է:

Ալլահն ասում է.

«Ով, Ադամի որդիներ: Զարդարվեք (մաքուր ու լավ հագուստ կրեք) ամեն անգամ մզկիթ գնալուց և կերեք ու խմեք, սակայն մի վատնեք, քանի որ Ալլահը չի սիրում վատնողներին»:

(Ղուրան 7:31)

Այն ջինջության կրոն է:

Ալլահն ասում է.

« Ալլահը սիրում է մեղանչողներին ու մաքուրներին (նրանց, ովքեր լվացվելիս անում են *Իգտիսալ* ու *Ուդու* իրենց աղոթքի համար)»:

(Ղուրան 2:222)

Առյուծների բակը Ալ-Համրա պալատում, Անդալուզիայում Այժմյան Իսպանիայում:

Ջինջությունը դա այն պայմաններից մեկն է, որով աղոթքը կհամարվի ընդունված գործողություն, երկրպագման մի գործողություն, որը մուսուլմանը կատարում է օրեկան հինգ անգամ: Նաև Իսլամը պահանջում է լվացվել սեռական ակտից հետո:

Ալլահը Սուրբ Ղուրանում ասում է.

«Ով դուք, հավատացողներդ: Աղոթքից սկսելուց առաջ լվացեք ձեր երեսներն ու ձեռքերը մինչև արմունկները, անց կացրեք ձեր (թրջված) ձեռքերը մազերի մեջով ու (լվացեք) ոտքերը մինչև կոճերը: Եթե Ջունուբի մեջ եք (այսինքն երբ սեռական ակտ էիք արել), ապա լվացեք (ամբողջ մարմինը Իղտիսալ անելով): եթե հիվանդ եք կամ ճամփորդում եք կամ ձեզանից մեկը գալիս է պետքարանից կամ կնոջ հետ եք եղել (այսինքն, սեռական կապի) և ջուր չեք գտնում, ապա Տայամում արեք (այսինքն, խփեք ձեր ձեռքերը մաքուր ավազի կամ հողի և անց կացրեք ձեռքերը ձեր երեսով և հետո ձեռքերը իրար շփեք): Ալլահը չի ցանկանում ձեր համար դժվարություններ ստեղծել, այլ ուզում է մաքրել ձեզ և ընդհանրացնի իր ձեզ տրվող բարությունը, հնարավոր է դուք շնորհակալ լինեք»:

(Ղուրան 5:6)

Իսլամը պահանջում է նաև լվանալ ձեռքերն ու երեսը ուտելուց առաջ և հետո:

Իսլամի առաքյալ Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Ոպրեսզի սնունդը օրհնված լինի, պետք է լվացվել սնունդը ընդունելուց առաջ»:

(Ատ-Տիրմիդի)

Նաև ասել է.

«Եթե չվախենայի, որ դա ծանր բեռ լինի իմ հետևորդների համար, ապա ես անպայման կհրամայեի նրանց, որ Սոակով մաքրեն ատամները ամեն աղոտքից առաջ»:

(Ալ-Բուխարի)



Սոակ

Հանձնարարում է մարդկանց մաքրել այն տեղերը (մարմնի) որոնք կարող են լինել միկրոբներ բերողներ: Իսլամի առաքյալ Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Հինգն են այն գործողությունները, որոնք առաջանում են բնույթից ելնելով, որոնց համաձայն Ալլահը ստեղծեց մարդկանց. թլփատումը, թևատակերի մազերը հեռացնելը, կտրումը, մորուքի (շրթունքների վերևի) կտրումն ու եղունգները կտրելը»:

(Ալ-Բուխարի)

Իսլամն ու գիտելիքը

Իսլամը մարդկանց հրում է գիտելիքներ ձեռք բերելուն և թույլ չի տալիս ու նախազգուշացնում է, որ չլինեն անգրագետ:

Ալլահն ասում է.

«Ալլահը բարձրացնում է մակարդակներով ձեզանից նրանց՝ ովքեր հավատում են և նրանց՝ ում գիտելիք ունեն»:

(Ղուրան 58:11)

Այս նկարում ցուցադրվում է նորագույն տեխնոլոգիայի ուղղություններից մեկը: Ժամանակակից տեխնոլոգիան չէր ունենա այսպիսի զարգացում, եթե չլիներ իսլամական քաղաքակրթությունը:

Իսլամը համարում է, որ գիտելիքների ձեռք բերումն ու դասավանդելը Ջաննա (Դրախտ) գնալու միջոցներ են:Իսլամի մարգարե Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

«Եթե ինչ-որ մեկը (անկեղծորեն, հանուն Ալլահի) կանգնի գիտելիքների որոնման (և ձեռքբերման) ճանապարհին, ապա Ալլահը դրա համար կհեշտացնի նրան դրախտ տանող ճանապարհը»:

(Աբու Դաուդ)

Իսլամը արգելում է գիտելիքներ թաքցնելը և համարում է, որ ամեն ոք պատրավոր է փնտրել դրանք: Մարգարեն (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ասել է.

«Նա՝ ով գիտելիք թաքցնի, դատաստանի օրը կտանջվի կրակից հանված խցանով»:

(Իբն Հիբբան)

Իսլամը գիտնականներին, և մանավանդ աստվածաբանների տալիս է հատուկ հարգանքի տեղ, և պատուիրում է մուսուլմանների վերաբերվել նրանց համապատասխանող հարգանքով: Մուհամեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է.

«Իմ հետևորդներից չի նա՝ ով չի հարգում իր մեծերին, բարի չի փոքրերի հանդեպ ու չի հարգում գիտնականներին արժանի հարգանքով»:

(Ահմադ)

Մարգարեն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) մեզ տեղեկացրեց հասարակության մեջ գիտունի տեղի մասին.

«Գիտունի և մի երկրպագողի տարբերությունը նման է իմ ու ձեզանից ամենացածրի տարբերությանը»:

(Ատ-Տիրմիդի)

Իսլամական քաղաքակրթության ազդեցությունը ժամանակակից գիտությունների վրա

Հետաքրքրացեր հետազոտողը, որը ցանկանում է հասկանալ նոր տեխնոլոգիաների ու գիտության անսովոր արագ զարգացման պատճառը, անկասկած կհամաձայնի, որ այդ երևույթը անմիջականորեն կապված է իսլամական քաղաքակրթության ազդեցության հետ: Հենց դա դառավ մի շարք գիտական կարգուկանոնների և ուղղությունների օրրանն ու լույսի բերեց շատ հայտնի գիտնականներ:

Չ.Հ. Հակինսը (Չարլզ Հակինս Հոմեր, 1870-1937, աներիկացի պատմաբան, միջնադարի պատմության հայտնի մասնագետ) գրել է. «Ունեցած փաստերը վկայում են, որ Իսպանիայի արաբներն էին վերածնունդի ժամանակաշրջանի արևմտյան Եվրոպայի քաղաքակրթության ոլորտի բացահայտումների գլխավոր աղբյուրները»: Մուսուլմանները սկիզբ դրեցին այն ֆունդամենտալ հետազոտությունների սկիզբը, որոնք դառան ժամանակակից գիտության հիմքը: Եթե դուք նայեք «աստղագիտության տեխնիկական տերմինների բառարանը», ապա կտեսնեք, որ այնտեղ նկարագրված աստղերի 60 տոկոսը ունեն արաբական ծագում (Wiliam H.Allen, editor, Diktionary of Technical Terms for Aerospace Use, First Edition, National Aeronautiks and Space Administration, Washington, D.C., NASA SP-7,1384H (1965G.) (5,6).):

Երկար ժամանակ շուտվա մուսուլման գիտնականների աշխատանքները մնում էին գիտական իմացությունների հիմնական աղբյուրները, որից տվյալներ էր կորզում ամբողջ արևմտյան աշխարհը և մասամբ վերածննդի ժամանակաշրջանի Եվրոպան: Այդ աշխատանքներից շատերը հիմք դառան եվրոպական համալսարանների ուսումնական ծրագրերի համար:

Արեգակնային համակարգի մոդել: 12րդ դար, Բաղդադ:

Մարքիզ Դաֆֆերինը գրել է. «Միջնադարի խավարից իր վերածնունդի համար Եվրոպան մեծամասամբ պարտական է մուսուլմանական գիտությանը, մուսուլմանական արվեստին ու գրականությանը...» (Speeches Delivered in India, London 1890, f.24).



Մուսուլմանական գիտնականները հետազոտել են գիտական գիտելիքները, որոնք լույսի են դուրս բերվել Հնդկաստանում, Չինաստանում, Հին Հունաստանում, այնուհետև թարգմանել են դրանք, բարելավել ու ավելացրել են իսլամական աշխարհի տարբեր գիտական կենտրոններում: Այդտեղից դրանք վերցրել է արևմտյան Եվրոպան: Բացի այդ մուսուլման գիտնականները եղել են որոշ գիտական նոր ուղղությունների նախահայրերը:

Աստրոլյաբիա (հուն. Աստրոն-աստղ և լաբեին-վերցնել): Աստղագիտական գործիք, որը հայտնագործված է մուսուլմանների կողմից, երկնային մարմինների դիրքերը որոշելու համար (Արդեն միջնադարում լայն օգտագործվել է աշխարհագրական կոորդինատները որոշելու համար): Գործիքը, որը պատկերված է նկարում գտնվում է «Ուիպլի» Քեմբրիջի գիտական իմացությունների թանգարանում:

Ջ.Հ. Դենիսոնը գրել է.

«Վեցերորդ ու յոթերորդ հարյուրամյակում ժամանակակից աշխարհը գտնվում էր քաոսի սահմանին: Հին քաղաքակրթությունը, որը կյանք է տվել քաղաքակրթությանը, մարդկանց միության զգացմունք նվիրելով, և նրանց հարգանքը կառավարիչների նկատմամբ, փլուզվել էր, և նրան համարժեք ոչինչ չգտնվեց, ինչը կկարողանար փոխարինել նրան: Թվում էր, թե քաղաքակրթությունը, որը ստեղծվում էր չորս հազարամյակների ընթացքում գտնվում է փլուզման եզրին կանգնած, և մարդկությունը պատրաստ է վերադառնալ բարբարոսների ժամանակաշրջան, երբ բոլոր ցեղերն ու ժողովուրդները պատերազմում էին իրար դեմ, իսկ օրենք ու կարգ հասկացողությունները գոյություն չունեին: Եղած պատիժները, որոնց վրա կառուցվում էին ցեղերի միջև հարաբերությունները կորցրել էին իրենց ուժը: Իսկ արդեն նորերը, որ բերվել էին քրիստոնեության որոք, չէին արդարացնում հույսերը, և մարդկանց միավորելու և կարգուկանոնի ստեղծման տեղը առաջացնում էին միայն քաոս ու պառակտում: Դա այն ժամանակն էր, երբ աշխարհը մտնում էր մարդկային վշտի մեջ: Քաղաքակրթությունը նմանվել էր հսկայական ծառի, որի տերևների զարդարանքը փաթաթել էր ամբողջ աշխարհը և ինչի ճյուղերը զարդարեցին հիասքանչ պտուղները, իրենց մեջ մարմնավորած արվեստի, գիտության ու գրականության նվաճումները, պատրաստ էր ընկնելու: Ունե՞ր գոյություն այդ ժամանակ ինչ-որ մշակույթ, որը կկարողանար ևս մի անգամ համախմբել մարդկությունն ու փրկել քաղաքակրթությունը... Եվ հենց այդ պայմաններում (այդ

մարդկանց մեջ) ծնվեց մարդ՝ Մուհամեդը, ով պետք է միացներ այդ ժամանակաշրջանի ամբողջ հայտնի աշխարհը...» (Emotions as the Basis of Civilization, London, 1928, էջ. 265, 269.

Մուսուլմանները հասան մեծ արդյունքների տեխնիկայի, գիտության, ինչպես նաև ինտելեկտուալ զարգացման բոլոր ասպարեզներում:

Ավելի ներքև մենք կմեջբերենք որոշ հայտնի մուսուլման գիտնականների անուններ:

- Ալ-Խաուարիզմի, (780-850): Գիտնական-մաթեմաթիկոս, հանրահաշիվի և մաթեմաթիկայի որոշ ուղղությունների հիմնադիր, թվաբանության առաջին ղեկավարության հեղինակ, որը հիմնավորված է պոզիցիոն հիմունքների վրա: Գրել է հանրահաշիվի և օրացույցի մասին տրակտատներ, ինչպես նաև «Հատաբ-ուլ-Ջաբր ուա-ալ-Մուքաբալա», «քիրք վերականգնումի և հակադրման մասին» (նվիրված քառակուսային և սովորական հավասարումների լուծմանը) հանրահայտ գրքերը, վերջինիս անունից ծագեց «հանրահաշիվ» բառը: Հանրահաշվի մասին տրակտատը իր մեջ ունի նաև երկրաչափության գլուխը, եռանկյանաչափական աղյուսակը և քաղաքների երկարությունների ու լայնությունների աղյուսակներ: Որոշ հետազոտողների կարծիքով Ալ-Հորեմզին հանդիսանում է բոլոր ժամանակների ամենամեծ մաթեմաթիկոսը:

- Ալ-Բիրունի, Ռեիհան Մուհամեդ իբն Ահմադ Ալ-Բիրունի (4,10,973-13,12,1048, այլ տվյալներով 1050-ից հետո), միջին Ասիական գիտնական-հանրագիտարանագետ: Նրա շարադրությունները վերաբերվում են մաթեմաթիկային, աստղագիտությանը, ֆիզիկային, բուսաբանությանը,աշխարհագրությանը, ընդհանուր երկրաբանությանը, հանքաբանությանը, ազգագրությանը, պատմությանն ու ժամանակագրությանը: Նա առաջ տարավ երկրի իր շուրջ պտտվելու թեորեմը և արևի շուրջ պտտվելու թեորեմը Գալիլեյից շուրջ վեց դար առաջ: Որոշեց երկրի չափերը:

  Գերմանացի օրիենտալիստ E. Sachau Բիրունի մասին ասել է. «Նա ամբողջ մարդկության պատմության անենամեծ ինտելեկտուալն էր»:

- Իբն Ռուշդ (լատ. Averroes 1126-11198). Անդալուզացի (իսպանացի) փիլիսոփա և բժիշկ, մաթեմաթիկայի ու իսլամական իրավունքի մասնագետ:

- Իբն Ան-Նաֆիս (1213-1288): Բժշկության, իսլամական իրավունքի, բանականության և արաբական բանասիրության ոլորտների մեծ գիտնական: Նրան անվանում էին իր ժամանակի գիտությունների հայր: Նրա ավելի հայտնի աշխատանքը բժշկության ոլորտում հանդիսանում է «Աշ-Շամիլ ֆիտ-Թաբ» գիրքը, որը իրավացիորեն համարվում է բժշկության հանրագիտարան: Նա նաև հանդիսանում է փոքր կամ թոքային արյան շրջանառության թեորեմի հեղինակը, որը այդ ժամանակ լիովին տարբերվեց այդ ժամանակ տարածված Քալենի ու Ավիցեննի կարծիքներից, և

փաստորեն սկիզբ դրեց Ուիլյամ Հարվիի ու Միգել սերվետտոյի բացահայտմանը (արյան շրջանառության թեմայով), գերազանցելով նրանց մի-քանի դար:

- Աամմար իբն Ալի ալ-Մաուսիլի իբն Իսա ալ-Քահհալ (10-րդ դար), կահիրեցի մեծ գիտնական ակնաբուժության ոլորտում: Նրանով մշակված վիրահատությունը, որի ընթացքում տեղադրվում էր բյուրեղային տեսապակին (աչքի ոսպնյակ) նրա կողմից հայտնագործված ասեղով, մեծ հաջողություն ունեցավ և ստացավ «Աամմարի վիրահատություն» անվանումը:

Դեղորայք ստանալու ընթացակարգը: Սա հնության դեղագետ մուսուլման գիտնականների գրքում հայտնաբերված նկարի կրկնապատկերն է:

Աչքի կազմվածքը: Նկարը հայտնաբերվել է բժիշկ-մուսուլմանի հին գրքում:

- Ալ-Հասան իբն Ալ-Հայթամ (965-1040): Տաղանդավոր մաթեմաթիկոս, ֆիզիկոս, աստղագետ և բժիշկ: Համարվում է գիտության փորձառարական մեթոդի հիմնադիրներից մեկը: Եվրոպայում իբն ալ-Հասանը հայտնի է որպես «Ալ-Հազեն» (Alhazen). Նրա աշխատանքներից հատուկ տեղ է գրավում «օպտիկայի գիրքը» (Քիթաբ-ուլ-Մանազիր): Ալ-Հասանը հետազոտել է աչքի կազմվածքը, ապացուցելով Պլատոնի ու Էվկլիդեյի մարդկային տեսողության մասին մտքերի անբավարարությունը: Նա հայտնագործել է բինոկուլյար տեսողության (տեսողություն երկու աչքերով) համադրություն և առաջինն է բացատրել տեսողության երևույթը, որպես գործողություն, որում ոբյեկտիվից աչք մտնող ճառաքայթները ոսպնյակի մեջ պատկեր են ձևավորում: 1572 թվականին «օպտիկայի գիրքը» թարգմանվեց լատիներեն, այդ թարգմանության շնորհիվ Յոհանն Կեպլերը ծանոթացավ օպտիկայի խնդիրների հետ: Իբն ալ-Հայսամը գիտական շրջանառության նեջ մցրեց օդի հասկանալի քաշեր, կապեց օդի խտությունը բարձրության հետ: Նրանից հետո գիտնականները սկսեցին զբաղվել լույսի բեկման խնդիրների հետ:

- Աբու Բակր Ար-Ռազին ու Ալ-Մանսուրի, հանրահայտ ու բանագետ բժիշկներ: Մեծ և երկար ժամանակ ազդեցություն ունեցան նրանց կատարած աշխատանքները բժշկական գիտությունների և փիլիսոփայության համար:

- Աբդուլ-Լատիֆ ալ-Բագդադի, Մուվաֆֆակ ադ-Դին Աբու Մուհամեդ բին Յուսուֆ Աբդուլ-Լատիֆ ալ-Բագդադի (1162-1231) և Աբդուլ-Քասիմ Խալիֆ իբն Աբբաս ազ-Զահրավի: Երկու տաղանդավոր գիտնականներ ստոմատոլոգիայի ոլորտում: Ատամնաբուժական պրակտիկայի մասին գիտաշխատությունների և վիրաբուժական գործիքների ու նրանց օգտագործման մասին մի քանի հայտնի գրքերի հեղինակներ:

- Շարիֆ Ալ-Իդրիսի, (1100 - 1165): Գիտնական - աշխարհագետ, ճանապարհորդ և հայտնի աշխարհի քարտեզների կազմող: Զարգացրել է լույսի յոթ մասերի թեորեմը, հայտնագործել է նավիգացիոն սարքեր: այցելել է Անդալուզիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Հիջազի, Եգիպտոսի, Փոքր Ասիայի և Հունաստանի տարածքներում գտնվող քաղաքներ: Դա ընդամենը մի մասն է մուսուլմանական հոյակապ գիտնականների անունների մեծ բազմության, որոնք գիտության և տեխնիկայի մեջ ներդրեցին անվիճելի ավանդ: Նրանցից շատերը անարժանիոներ մոռացվել էին, նրանց ավանդը չի գնահատվել կամ նրանց աշխատանքները դրվեցին ուրիշների անունների տակ:



Մարդու մարմնի ներքին օրգաններն ու արյան շրջանառությունը: Հին մուսուլման բժշկի գրքից:

Արթուր Գլեն Լեոնարդը գրել է. «Ադրյո՞ք մենք չպետք է իրենց գագաթների նվաճողներ համարողներին, որոնց անցյալ քաղաքակրթությունները չգիտեն, ընդունենք այն փաստը, որին համաձայն, Եվրոպան մինչ այսօր կգտնվեր անբարոյության խավարում, եթե չլիներ արաբների զարգացած քաղաքակրթության ազդեցությունը, նրանց ինտելեկտուալ հզորությունը... Եվ կարծիքների առողջ համակարգը»: (<<Islam-Her Moral and Spiritual Value>>, London, 1927, էջ. 20-21.

Աշխարհի քարտեզ: Նկարը հայտնաբերված է մի աշխարհագրության գիտնական մուսուլմանի գրքում:

Իսլամական քաղաքակրթության արժանիքները

 Դեպի գիտելիքներ ձգտումը հանդիսանում է ամեն մուսուլմանի և մուսուլմանուհու կրոնական պարտականություն:

 Ըստ Իսլամի գիտության զարգացման հիմնական նպատակը դա մարդկանց սրտերում Ալլահի հավատը ամրապնդելն է, որն էլ կլինի նրա նշանների ուսումնասիրման հետևանքը: Այնժամ՝ երբ ժամանակակից գիտնականները օգտագործում են դա մարդկանց կրոնից հեռացնելու համար:

 Իսլամը հրում է գիտնականներին օգտագործել իրենց գիտելիքները բարի նպատակներով. Անցյալի մուսուլման գիտնականները ամուր հենվում էին այդ սկզբունքին: Ժամանակակից գիտնականները մեծ մասը օգտագործում են իրենց գիտելիքները դուրս գալով շահի դրդապատճառներից, ինչը հաճախ վնասում է շրջապատը:

 Անցյալի մուսուլման գիտնականները տարածում էին իրենց գիտելիքները ամենուրեք, որպեսզի մարդկանց հնարավորինս մեծ քանակ կարողանա օգտագործել դրանք: Ժամանակակից գիտնականների մեծ մասը որևէ հայտնագործում անելով փորձում է քչացնել դա օգտագործողների քանակը:

 Անցյալի մուսուլման գիտնականները զբաղվում էին գիտությամբ, հույս ունենալով արժանանալ Ալլահի ողորմությանն ու պարգևատրմանը: Ժամանակակից գիտնականների մեծ մասը անց կացնելով գիտական աշխատանքներ հետևում են միայն նյութական շահեր ունենալու ճանապարհին:

Գիտական բացարտություն

Գիտական տվյալներ Ղուրանի որոշ այաթներում (բանաստեղծություններում)

«Ճշմարիտ, երկրի ու երկնքի արարման, գիշերի և ցերեկի փոխարինման, նավերում, որոնք լողում են ծովերում, մարդկանց օգուտ բերելով, ջրում, որը Ալլահն է ուղարկել երկնքից, վերակենդանացնելով մահվանից հետո երկիրը, և բոլոր տեսակի էակներին, որ բնակեցրեց երկրում և նրանք քայլում են երկրով, և քամիների շրջանառությունը, և ամպերը, որ պահվում են երկրի և երկնքի միջև (որ ծառայեն մեզ), գոյություն ունեն այաթներ (նշաններ) այդ մասին հասկացողների համար»:

(Ղուրան 2:164)

Նկարում պտկերված է երկիր մոլորակի աստղային համակարգը:

Ղուրանը ուղարկված է կարդալ և գրել չիմացող Մուհամեդին (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան), և նրա ժողովրդի մեծ մասը անտառաճանաչ էր: Այդպիսով, կարո՞ղ էր արդյոք այդպիսի մարդը ինքնորույնորենեն ստեղծել Գրությունը, որը զարմացրեց իր կատարելությամբ լավագույն բանաստեղծներին և ճառի վարպետներին:



Ալլահը ձեռնոց նետեց բոլոր խելացի արարածներին, կոչ անելով Ղուրանի պես գիրք ստեղծեն: Իմացեք, որ այս Սուրբ Գրքի ամենակարճ սուրան պարունակում է ընդամենը տաս բառ:

Ալլահն ասում է.

«Ասա. «Եթե մարդիկ ու ջիները միանային, որպեսզի Ղուրանի նման բան ստեղծեն, նրանց չի հաջողվի, նույնիսկ եթե իրար մեկը լինի մյուսի օգնականը»»:

(Ղուրան 17:88)

Ինչպես մենք արդեն ասել ենք մարգարե Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) և նրա հետևորդները անտառաճանաչ են եղել, սակայն նա կարդացել է նրանց որոշ այաթներ, որտեղ եղել են գիտական տվյալներ: Ղուրանի ուղարկվելուց ավելի քան 1400 տարի հետո ժամանակակից գիտությունը հայտնագործել է այդ տվյալները ժամանակակից տեխնիկայի օգնությամբ:

Թոմաս Կարլալն ասել է.

«Տեսե՞լ եք, որ մի սուտասան ստեղծի զարմանալի կրոն: Չէ որ նա նույնիսկ իր համար տուն չէր կատող պատրաստել քարերից: Նա չիմանալով գիպսի, կավի և այլ հումքերի հատկությունները բացի շինանյութի բլուրից ուրիշ ոչինչ չէր կարող պատրաստել, և ալվելին, այն չէր կարող կանգուն լինել 12 դար, որով ապրում են ավելի քան 200 միլիոն մարդ, ավելին, նրա սյուները պիտի քանդվեին ու փլուզվեին, ասես եղած էլ չլինեին»:

Ինչ է ասում Ղուրանը աշխարհի սկզբի մասին

Ալլահն ասում է.

«Ալլահը սկսում է արարումը (ոչինչից) և հետո կրկնում է, և ի վերջո բոլորդ էլ Նրան կվերադառնաք»:

(Ղուրան 30:11)

Այս այաթը ակնհայտ ցույց է տալիս, որ Ալլահը Մեծ Արարիչ է, որ ստեղծել է տիեզերքն ու այնտեղ գտնվող ամեն ինչը, ոչինչից: Ալլահը Ղուրանում նկարագրում է արարման սկիզբը հետևյալ կերպով.

«Նա երկնքի և երկրի Արարիչն է: Երբ նա ցանկանում է որևէ բան լինի, ապա ասում է դրան. «Եղիր», և դա իրականանում է»:

(Ղուրան 2:117)

Միջաստղային նյութից ձևավորված աստղի լուսանկար:

Մարդկային ինտելեկտը չի կարող հասկանալ սկզբնական նյութի էությունը, որից ստեղծվեց առաջին արարվածը: Մարդիկ կարող են միայն դատողություններ անել այդպիսի բաների մասին, հիմնավորվելով նախադրություններին ու կռահումներին: Ալլահն ասում է.

«Ես նրանց չարեցի վկա (Սատանային ու նրա հետնորդներին (ում որ լսում էիք), ոչ էլ նրանց օգնությունը ստացա) երկնքի, երկրի և նրանց արարմանը, ոչ էլ նրանց արարմանը, և օգնական չեմ վերցնի նրանց՝ ովքեր մյուսներին շփոթմունքների մեջ են գցում»:

(Ղուրան 18:51)

Ալլահն ասում է.

«Մի՞թե չհավատացողները չեն տեսնում (հասկանում), որ երկիրն ու երկինքը մի ամբողջություն էին, և, որ Մենք առանձնացրեցինք (երկու մասի) դրանք ու արարեցինք բոլոր կենդանի էակներին ջրից: Մի՞թե նրանք չեն հավատա»:

(Ղուրան 21:30)

Գիտնականները համարում են, այս այաթը անմիջականորեն ցույց է տալիս, որ Ալլահը ստեղծել է աշխարհը մի ամբողջությունից, հետո նա հրամայել է նրանց առանձնանալ:

Ալլահն ասում է.

«Ասա. «Մի՞թե դուք չեք հավատում Նրան՝ Ով ստեղծել է աշխարհը երկու օրում, և Նրան հակառակորդներ եք արել (սուտ աստվածներին): Չէ որ նա աշխարհների Տերն է: Նա կանգնացրել է երկրի վրա անսասան լեռներ, օրհնել է նրան և կարգավորել է երկրում սնունդը չորս ամբողջ օրվա ընթացքում, հարցնողների (արարման մասին) համար: Հետո նա դիմել է երկնքին, որը ծուխ էր, և ասաց նրան ու երկրին. «Եկեք, կամա կամ ակամա»: Նրանք ասացին. «Մենք կգանք կամովին»: Նա յոթ երկինք արեց նրանց երկու օրվա մեջ և ներշնչեց (որոշեց) ամեն երկնքին իր կամքը: Մենք զարդարեցինք լուսավոր աստղերով ներքևի երկինքը և արել ենք դրանք (լուսավոր աստղերը) որպես պաշտպանություն (գաղտնալսող հրեշներից): Այդպիսին է Ամենակարողի, ամենագետի կարգավորումը»»:

(Ղուրան 41:9-12)

Ժամանակակից աստղաֆիզիկոսները նույնպես հայտարարում են, որ ամբողջ տիեզերքը առաջացել է մի ամբողջական նյութից, այսպես կոչված «Մեծ Պայթյունից» հետո: (G. Lemaitre (1927). «Un Univers homogene de masse constant et de rayon croissant rendant compte de la vitesse radiale des nebuleuses extragalaciques». Annals of the Scientific Society of Brussels 47A: 41. (Translated in 1931) «A homogeneus universe of constant mass and growing radius accounting for the redial velocity of extragalactic nebuale». Astronomy and Cosmanagy, Sir James H. Jeans, p. 15.

Ալլահն ասում է.

«Հետո ուղղվել է երկնքին, որը ծուխ էր, և ասաց նրան ու երկրին. «Եկեք միասին (լսեք իմ Որոշումը), կամա, թե ակամա»: Նրանք ասացին. «Մենք կգանք կամովին»:

(Ղուրան 41:11)

Գիտնականների կարծիքով այս այաթը ցույց է տալիս, որ երկինքը իր ձևավորման սկզբնական փուլում նման էր ծխի, ինչը նույնպես հաստատվում է ժամանակակից գիտությունով:

Ջեյմս Հ. Ջինզը (Սեր Ջեյմս Հոպվուլդ Ջինզ (11.09.1887-16.09.1946), հայտնի անգլիացի աստղագետ, ֆիզիկոս և մաթեմաթիկոս) Գրել է. «Մենք եկանք այն եզրակացությանը, որ ինչպես որ առաջին անգամ ենթադրում էր Նյուտոնը, զանգվածը, որ կազմված է քառսային շարժում կատարող գազից, փաստորեն միատեսակ խտությամբ և սփռված մեծ տարածքով, իրենից կներկայացի դինամիկորեն

փոփոխական ձևավորում: Այդ գազանման զանգվածի մեջ կձևավորվեն ատոմներ, որոնց շուրջ վերջին հաշվով կսկսի հավաքվել նյութը...» (Astronomy and Cosmonogy, Sir James H. Jeans, էջ.15):

Աստղի պայթման լուսանկար:

Ինչ է ասում Ղուրանը տիեզերքի ընդլայնվելու մասին

Ալլահն ասում է.

«Մենք կառուցեցինք երկինքը ուժով շնորհիվ, և ճշմարիտ, Մենք անդադար ընդլայնում ենք այն»:

(Ղուրան 51:47)

Ալլահն ասել է.

«Այդ օրը Մենք կծալենք երկինքը, ինչպես ծալվում է գիրքը: Մենք կվերաստեղծենք արարածները, ինչպես սկսեցին արարել առաջին անգամ: Այդպես խոստացված էր Մեզանից: Ճշմարիտ, Մենք կանենք դա»:

(Ղուրան 21:104)



Տիեզերքը ընդլայնվելը ցույց տվող նկար:

«Այդ օրը երկիրը փոխարինված կլինի ուրիշով, նույնն էլ երկինքներն ու (մարդիկ) դուրս կգան իրենց գերեզմաններից հավասար և կկանգնեն Ալլահի առաջ, Միակի, Ամենազորի»:

(Ղուրան 14:48)

Որոշ գիտնականներ համարում են, որ այս այաթներից առաջինը անմիջականորեն ցույց է տալիս, որ տիեզերքը անընդմեջ ընդլայնվում է տարաղության մեջ: Նրանք կարծում են, որ մաբողջ տիեզերքը ստեղծվել է մի ամբողջական նախնական նյութից: Հետո այն պայթեց Ալլահի հրամանով և դառավ ծխի ամպ, որից ձևավորվեց երկինքը: Գիտնականները հաստատում են, որ տվյալները, որոնց ցույց են տալիս վերը ասված այաթները հաստատվում են ժամանակակից գիտությամբ:

Իսկապես շատ աստղագետներ այսօր համարում են, որ տիեզերքը գտնվում է անդադար շարժման մեջ և ընդլայնվում է: Այդ աշխարհայացքը առաջ է բերված գալակտիկաների և հեռու երկնային մարմիններ ուսումնասիրելուց հետո: Ամերիկացի աստղագետ Վեստո Մ. Սլիֆերը ուսումնադիտելով գալակտիկաների միջակայքը, նկատեց, որ իրարից փոքր հեռավորության վրա գտնվող համակարգերից որոշների միջակայքային ուղիղները խառնված են ուղղված են միջակայքային տարածքի կողմ մեծ երկարությամբ: Այդ տեսակի շարժումը նրա կարծիքով ցույց է տալիս, որ գալակտիկաների մեծամասնությունը հեռանում են իրարից մի քանի կ/վ արագությամբ: (Վ.Սլիֆեր, ամերիկական աստղագետների միությանը տրված զեկույցում (1915):

Ուրիշ ամերիկացի աստղագետ Էդվին Հաբլը (Էդվին Պաուէլ Հաբլ (անգլ. Edwin Hubble, 20 նոյեմբեր 1889-18 սեպտեմբեր 1953)-վաստակավոր ամերիկացի աստղագետ) հաստատեց, որ տիեզերքը ընդլայնվում է, և որ ինչքան հեռու է գտնվում գալակտիկան, այնքան մեծ է արագությունը, որով նա հեռանում է: Այդ արագությունը

ուղիղ համեմատական է հեռավորությանը: (Edwin Hubble (1929). «A relation between distance and radial velocity among extra-galactic nebulae». Proc. Nat. Acad. Sci. 15:168-173.)

Այդպիսով մենք տեսնում ենք, որ շատ ժամանակակից աստղագետներ հաստատում են տիեզերքի արագացված ընդլայնման թեորեմը: Գիտնականների կարծիքով այդ ընդլայնումը կշարունակվի մինչև գալակտիկաների խմբերի, գալակտիկաների, համակարգերի, մոլորակների իրարից բաժանվելը...



Նկարներում երևում է, որ գալակտիկաների միջև տարածությունը անընդմեջ մեծանում է: Գիտնականների կարծիքով դա տիեզերքի ընդլայնվելու վկայությունն է:

Ալլահն ասում է.

«Երբ երկինքը երկու մասի լինի, և երբ աստղերը ցրվեն ու ընկնեն»:

(Ղուրան 82:1-2)

Ինչ է ասում Ղուրանը երկնային մարմինների մասին

Ալլահն ասում է.

«Ալլահն է երկինքները առանց սյուների բարձրացնողը ինչպես տեսնում եք»:

(Ղուրան 13:2)

Տիեզերքի հետազոտությունները ցույց տվեցին, որ այն կազմող երկնային մարմինների նյութերի մեջ ընդգրկված է հսկայական էներգիա և որ բոլոր ֆիզիկական երևույթները փոքր կամ մեծ մակարդակներում բացատրվում են տարրական

մասնիկների միջև փոխազդեցությամբ: Ժամանակակից գիտնականները առանձնացնում են տարրական մասնիկների միջև փոխազդեցության չորս տեսակ և դրանք անվանում են հիմնական: («Հիմնական փոխազդեցություններ», Ի.Լ.Բուհբինդեր (Տոմսկի պետական համալսարան), հրատարակված է Սորոսովի ուսուցանական ամսագրում N 5: 168-173).

- **Ուժեղ փոխազդեցություն** (ատոմային փոխազդեցություն): Այն գործում է ատոմային կորիզի ծավալով և ավելի թույլ, պատասխանելով ձգողության համար կորիզների մեջի պրոտոնների, նեյտրոնների և էլեկտրոնների միջև:
- **Էլեկտրոմագնիտական փոխազդեցություն:** Այն որոշում է ատոմների և մեջի կորիզների և էլեկտրոնների միջև փոխազդեցությունը, այդ պատճառով էլեկտրոմագնիսական փոխազդեցութանն է տրվում ուժերի մեծամասնությունը, որոնք երևում են մակրոսկոպիկ երևույթների ընթացքում՝ առաձգականության ուժ, շփում, քիմիական կապ և այլն: Էլեկտրոմագնիսական փոխազդեցությունը նաև բերում է էլեկտրոմագնիսական ալիքների ճառագայթման:
- **Թույլ փոխազդեցություններ, կամ թույլ ատոմային թոխազդեցություններ:** Այն պատասխանատու է, մասնավորապես, կորիզի բետա-փլուզման համար: Թույլ փոխազդեցությունը հանդիսանում է կարճ գործունեություն ունեցող՝ այն երևում է ատոմի կորիզի հեռավորություններից կարճ տարածության մեջ:
- **Գրավիտացիոն փոխազդեցություն:** Հիմնականներից ամենաթույլը, սակայն հանդիսանում է ունիվերսալ, այսինքն ներկա է բոլոր տեսակի նյութերում և ունի ձգողական բնույթ:

Ալլահն ասում է.

«Նա է գիշերն ու ցերեկը, արևն ու լուսինը արարողը: Բոլոր երկնային մարմինները լողում են իրենք իրենց, ամեն մեկն իր շրջանաձև ուղեծրերով»:

(Ղուրան 21:33)

Ալլահն ասում է.

«Եվ արևը գնում է մի հաստատուն ուղեծրով: Այդպես է Ամենազոր, Ամենագետի կանխորոշումը: Մենք լուսնի համար դրություններ (լուսնային օրացույց) կանխորոշեցինք, մինչ նա կրկին դառնա հին պալմայի նման (երբ փոքրանա): Արևը երբեք չի հասնի լուսնին, և գիշերը չի հասնում ցերեկին: Յուրաքանչյուրը լողում է ուղեծրով»:

(Ղուրան 36:38-40)

Ջրապտույտ (M51, NGC 5194/5195)- «Գոնչի Շների» աստղաբույլի գալակտոկան երկրից 37մլն լուսային տարի հեռավորության վրա: Գալակտիկայի տրամագիծը կազմում է մոտ 100 հազ. Լուսային տարի: Այն կազմված է մեծ սպիռալաձև գալակտիկայից NGC5194, ճյուղերից մեկի վրա գտնվում է գալակտիկա-ընկրակից NGC5195-ը:

Գիտնականները գտնում են Ալլահի այս այաթներում մի ցուցում, որն ասում է արեգակի ինչ-որ ուղղությամբ շարժվելու մասին: Հնում, իսկ մասնավորապես մինչ Ղուրանի ուղարկվելը համարվում էր, որ այն հանդիսանում է անշարժ երկնային մարմին:

Ժամանակակից տիեզերաբանությունն ու աստղագիտությունը մի ձայնով հաստատում են, որ արեգակը իսկապես շարժվում է որոշ ուղղությամբ: Եվ արեգակնային համակարգի բոլոր մոլորակները նույնպես տեղաշարժվում են: Այն ճանապարհը, որը կատարում է մեր Երկիր մոլորակը արեգակի շուրջ, նրա երկնային ոլորտի ձևը կոչվում է Էկլիպտիկա, և ունի էլիպսի ձև:

Ալլահն ասում է.

«(երդվում եմ) և *խուրոկների* երկնքով»:

(Ղուրան 51:7)

<u>Արաբական «խուրոկ» բառը ունի տարբեր իմաստներ:</u>

- **Կատարյալությունը ստեղծելուց:** Աստղագետները համարում են, որ գոյություն ունի մոտ երկու հարյուր միլիարդ գալակտիկա և յոթանասուն միլիարդ տրիլիոն աստղ (http//www.esa.int/esaSC/SEM75BS1VED_extreme0.html): Ամեն գալակտիկա տարբերվում է չափսով, ձևով, խտությամբ, իր շուրջ պտտվելու արագությամբ, մեր ու մյուս գալակտիկաներից հեռավորությամբ, զարգացման փուլով, աստղերի քանակով և այլն:

- **Ասվում է նաև մի բանի մասին, որում ամեն ինչ զարմանալիորեն միաչափ և հավասարակշռված է:** Վերն ասված թվի մեջ մտնող Գալակտիկային համակարգի մեզ հայտնի գալակտիկաներն ու աստղերը կազմում են ամբողջ տիեզերքի միայն մեկ տասներորդ մասը: Ուրեմն պետք է գոյություն ունենա մի ուժ, որը պահում է այդ ամենը միասին, այլապես տիեզերքը կփլուզվի:

Ալլահն ասում է.

«Ճշմարիտ, Ալլահը պահում է երկինքն ու երկիրը, որպեսզի նրանք չշարժվեն իրենց տեղերից: Իսկ եթե դրանք շարժվեն, ապա Նրանից բացի ոչ ոք դրանք չի պահի: Ճշմարիտ, Նա Խալիմ (Զուսպ), Գաֆուռ (ամեն ինչ ներող) է»:

(Ղուրան 35:41)

- **Երկնային մարմինների ուղեծրերը:**

Ղուրանի այաթներից մեկում Ալլահն ասում է.

«Նա է արեգակին փայլուն աղբյուր դարձնողը և լուսնին որպես լույս (անդրադարձնող) և տարբեր փուլեր կանխորոշելով, որպեսզի դուք կարողանաք հաշվել տարիներն ու իմանաք հաշիվը: Այդ ամենը Ալլահը ստեղծել է ճշմարտությամբ և արդարադատությամբ: Նա բացատրում է այաթները(փաստերը, ապացույցները, նշանները և այլն) իմացող մարդկանց համար»:

(Ղուրան 10:5)

Գիտնականները համարում են, որ Մուհամեդին (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) տասնչորս դարից ավել առաջ ուղարկված այս այաթը, նշում է լույսի բնույթը, որը դուրս է գալիս երկու երկնային մարմիններից՝ արեգակից և լուսնից: Արեգակը ճառագայթում է լույսը, որը ինքն է ստեղծում, այդպիսով, հանդիսանալով տաք ու մարմնով տաքություն տվող: Իսկ լուսինը հանդիսանում է սառը օբյեկտ, հետևաբար միայն փոխանցում է այդ լույսը: Այդպիսի տեղեկությունը չէր կարող հայտնի լինել Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ժամանակաշրջանի մարդուն: Դա ևս մի անգամ հաստատում է, որ Ղուրանի այաթները Աստծո խոսք են հանդիսանում:

Ինչ է ասում Ղուրանը մթնոլորտային ճնշման մասին

Ալլահը Ղուրանում ասում է.

«Ում որ Ալլահը ցանկանում է դնել հարթ ճանապարհի վրա, նրան էլ բացում է Իսլամի կուրծքը, իսկ ում ցանկանում է մոլորության մեջ գցել, ապա ուժեղ ճզմում է

նրա կուրծքը, կարծես նա երկինք բարձրանա: Այդպես Ալլահը ուղարկում է պատիժը նրանց՝ ովքեր չեն հավատում»:

(Ղուրան 6:125)

Գիտնականները համարում են, որ այս այաթում պարունակվում է պարզ ցուցում, որ ինչքան մարդ շատ բարձրանա, այնքան կդժվարանա շնչել: Դա լինում է մթնոլորտային ճնշման իջացման պատճառով և օդում թթվածնի պարունակության քչացման հետևանքով: Այդ փաստը իր հաստատումը ստացավ միայն նրանից հետո, երբ մարդիկ հայտնաբերեցին բարձր թռնել թույլ տվող սարքեր: Այդ երևույթի էությունը կայանում է նրանում, որ 8 կմ. բարձրության վրա գտնվող մարդը սկսում է խնդիրներ ունենալ շնչառության հետ ցածր մթնոլորտային ճնշումի և թթվածնի պակասի պատճառով: Նրա օրգանները ստանում են անբավարար քանակությամբ թթվածին, և առաջանում է հիպոքսիա: Այլ խնդիր, որը կարող է հանդիպել մարդը այդ բարձրության վրա դա դիսբարիզմն է կամ աէրոէմբոլիան՝ սիմպտոմների կոմպլեքս, որը առաջանում է չափազանց ցածր կամ արագ ցածրացող մթնոլորտային ճնշումից (Մալկին Վ.Բ. և Չերնյակով Ի.Ն., Բարձրության հիպոկսիա, ավիացիոն բժշկություն, բեդ. պոդ. Ն.Մ. Ռուդնովի և ուրիշների, ս.25, Մ., 1986.): Այդպիսով այդ երկու հիվանդությունները խոչնդոտում են մարդկային օրգանիզմի նորմալ գործելուն, առաջացնելով կրծքի սեղման սինդրոմ և շնչառության դժվարացում, ինչը լրիվ էությամբ հանդիսանում է կենդանի օրգանիզմի ինքնապաշտպանության եղանակներից մեկը:

Տիեզերագնացները օգտագործում են յուրահատուկ սարքեր, որոնք ապահովում են նորմալ շնչառություն մեծ բարձրությունների վրա:

Ինչ է ասում Ղուրանը տիեզերական խավարի և տիեզերքի վերին ոլորտների մասին

Ալլահը Ղուրանում ասում է.

«Եվ եթե նույնիսկ Մենք նրանց համար դեպի երկինք տանող մի դուռ բացեինք և անհավատները շարունակեին բարձրանան այնտեղ, նրանք կրկին կասեին. «Մեր

հայացքները մառախուղով են պատված (ի վիճակի չեն տեսնել), իսկ մենք ինքներս կախարդված մարդիկ ենք»»:

(Ղուրան 15:14)



Այս նկարը, որը պատկերում է արեգակը խավարման պահին, հաստատում է, որ տիեզերքը պատված է խավարով:

Գիտնականները համարում են, որ այս այաթը ցույց է տալիս այն փաստը, որը հայտնի դարձավ քսաներորդ հարյուրամյակի 60-ականներին տիեզերական հետազոտությունների սկզբից՝ ամբողջ տիեզերքը սյուզված է խավարում: Երկրի վրա տեսանելի լույսը ընդունվում է մինչև 200կմ բարձրությունից, դրանից բարձր արեգակը կհայտնվի որպես կապույտ սկավառակ: Տիեզերական խավարը սփռվում է բոլոր ուղղություններով, տարածությունում ջրի ատոմների քիչ պարունակման պատճառով:

Այս նկարում ներկայացված է օրվա ծածկույթի բարակությունը, երբ երկրի նմացած մասը երևում է ամբողջությամբ սյուզված խավարի մեջ:

Ինչ է ասում Ղուրանը ատոմի մասին

Ալլահն ասում է.

«Երկրում ու երկնքում ոչինչ թաքնված չէ քո Աստծուց, լինի ամենափոքր զանգվածը, կամ փոքր դրանից, կամ դրանից մեծ: Այդ ամենը պարզ գրության մեջ են (գրված)»:

(Ղուրան 10:61)

Այս այաթում Ալլահը հաղորդում է, որ Նրանից ոչինչ թաքցված չի այս աշխարհում, ինչքան էլ չնչին լինի դա: Դեռ անցյալ դարում համարվում էր, որ ատոմը աշխարհի ամենափոքր մասնիկն է: Սակայն մարդիկ ատոմը կտորներ անել սովորելուց հետո գտան ավելի փոքր մասնիկներ՝ դրական լիցք ունեցող պրոտոններն ու բացասական լիցք ունեցող էլեկտրոնները:

1939 թվականին գերմանացի գիտնականներ Օտտո Հանն ու Ֆրինց Ստրասմանը Բերլինի Համալսարանում իրագործեցին ուրանի ատոմի բաժանումը: Ապագայում, գիտության զարգացմանն առնթեր կհայտնաբերվեն ավելի փոքր մասնիկներ:

Ժամանակակից աշխարհում տեխնիկայի զարգացումն ու գիտության պրոգրեսը փոխելով մարդու ապրելակերպը հասել են անսովոր բարձրությունների: Սակայն գիտական մտքերտը դրանում կանգ չեն առնի, և անկասկած կշարունակվեն մինչև Դատաստանի Օրը: Ինչ բարձրությունների էլ, որ հասնի մարդկությունը ամբողջ զարգացման ընթացքում, այն երբեք չի կարողանա լիովին տիրանալ կամ գոնե մոտենալ Մեծն Ալլահի իմացությանն ու նրա կարողություններին:

Ալլահն ասել է.

«Նրանք (անհավատները) քեզ հարցնում են Ռուխի (հոգու) մասին: Ասա. «Հոգին (նրա գիտելիքը) պատկանում է միայն Ալլահին: Ով մարդիկ, քիչ եք ստացել գիտելիքից»»:

(Ղուրան 17:85)

Ալահի իմացությունն ու նրա ամենակարողությունը անսահման են: Անցյալ այաթում Ալլահը ևս մի անգամ մեզ օրինակ է բերում նրա կատարյալ իմացությունների ու մեր սահմանափակ իմացությունների տարբերության մեծությունը:

Ինչ է ասում Ղուրանը մարդկային սաղմի զարգացման փուլերի մասին

Ամենազոր Ալլահը նկարագրում է մարդու ստեղծումը հետևյալ այաթում.

«Ճշմարիտ, Մենք արարեցինք մարդուն (Ադամին) ամբողջ երկրից հավաքած կավից: Հետո նրան (Ադամի հետնորդներին) տեղադրեցինք նրան կաթիլի վիճակով ապահով տեղում: Հետո Մենք կաթիլից լյարդացած արյուն ստեղծեցինք, հետո լյարդացած արյունից ծամված մսի կտորի պես բան ստեղծեցինք, հետո այդ մսի կտորից ոսկորներ ստեղծեցինք, և հետո այդ ոսկորները պատեցինք մսով: Հետո Մենք դրանից մի նոր էակ ձևավորեցինք (հոգի ներշնչեցինք): Թող օրհնված լինի Ալլահը՝ արարիչների Լավագույնը»:

(Ղուրան 23:12-14)

Մարդու սաղմի զարգացման սկիզբը

- **Կավից ստեղծումը:** Ադամը՝ (խաղաղություն նրան) մարդկության նախահայրը, համաձայն այս այաթին ստեղծված էր կավից: Վկայում է, որ մարդը ստեղծված է անկախ այլ արարածներից, ինչը հակասում է ժամանակակից մարդու էվոլուցիայի պրոցեսում այլ տեսակներից առաջանալու տեսությանը:

Ինչպես նաև որոշ գիտնականներ այդ այաթում դիտարկում են մարդու սաղմի զարգացման փուլային ցուցումներ, ներառյալ կոցեպցիայի փուլը:

- **Կաթիլ (սպերմա):** Այդ փուլում արական սեռական տարանջատումները գնում են իգականի արգանդ, որի արդյունքում, Ալլահի կամքով, արական սեռական բջիջը՝ սպերմատոզոիդը, կարող է խառնվել իգական սեռական բջջի հետ՝ ձվարաններում:

Ալլահն ասում է.

«Մենք մարդուն ստեղծեցինք Նուտֆայից (կաթիլներից) տարբեր արտազատություններից (երկու սեռերի), և փորձում ենք նրան (արդյոք կհետևի Ալլահի ճանապարհին, թե ոչ), և նրան տեսնելու ու լսելու ունակություն ենք տվել (որ տեսնի ապացույցներն ու լսի Ալլահի խոսքը)»:

(Ղուրան 76:2)



Սաղմնավորումը ցուցադրող սխեմա, փուլերի հերթականությունը, սկսած սպերմատոզոիդի երկրորդ կարգի (ձվաբջջի) օոցիտի ցիտոպլազմայի կեղևի և ի վերջ մայրական ու հայրական քրոմասոմների միացումը զիգոտի առաջին մեյոտիկային բաժանումով: Երկրորդ կարգի օոցիտը շրջափակված է մի քանի սպերմատոզոիդներով, որոնցից երկուսը ներթափանցել են ճառագայթային թագ: (Դոկտոր Քեյթ Մուրի «մարդու զարգացումը» աշխատանքից», էջ 34, 7-րդ հրատարակում):

Սպերմատոզոիդի և ձվաբջջի միացումից հետո տեղի է ունենում նրանց գենետիկ նյութերի միացում և ձևավորվում է նոր բջիջ՝ զիգոտան: Զիգոտան իրենից ներկայացնում է մի բջիջ, սկսում է կիսվել սերմնավորումից անմիջապես հետո:

Սկզբում նրանից ձևավորվում են երկու բջիջներ, այնուհետև՝ չորս, ութ և այլն: Արդյունքում ստեղծվում է բջիջների խումբ՝ մորուլա: Սերմնավորումից 3-4 օր հետո մորուլան անցնում է արգանդի մեջ: Այդ պահից դա կոչվում է բլաստոցիստա: Այնուհետև Ալլահի կամքով, բլաստոցիստան գնում է արգանդի պատի մոտ, անցնելով հաջորդ փուլին, որը այաթում նկարագրվում է որպես ալակա (տզրուկ, լյարդացած արյան մասնիկ), քանի որ բլաստացիստան այդ ժամանակ նման է տզրուկի, որը կպել է արգանդի պատին:

Ալլահն ասում է.

«Ով մարդիկ: Եթե դուք կասկածում եք հարությանը, չէ որ Մենք ձեզ արարել ենք հողից, հետո կաթիլից, հետո լյարդացած արյունից, հետո մսի ծամված կտորից, ձևավորված կամ չձևավորված, որ ձեզ ապացուցենք (Մեր ուժը): Եվ արգանդում ենք թողում ում ցանկանում ենք, մի որոշված ժամանակի ընթացքում: Հետո Մենք ձեզ որպես նորածին ենք դուրս հանում, որպեսզի հետո դուք կարողանաք հասնել հասուն ուժի տարիքի: Ձեզանից որոշները մահանում են և որոշներին թույլ ենք տալիս ապրել մինչև խոր ծերություն, որում, չնայած սովորել էին, ոչինչ չեն իմանա: Եվ տեսնում ես

երկիրը մահվանից հետո, երբ նրա վրա ջուր Ենք լցնում դղրդում է (կյանքից), և ուռչի ու սերմեր դուրս հանի զույգերով ամեն գեղեցիկ բույսեր»:

(Ղուրան 22:5)



- **Լյարդացած արյան կախված մասնիկ:** Նկարագրվում է այդ ձևով , քանի որ կախված է արգանդից և նման է տզրուկի որը սնվում է այլ օրգանիզմների արյունից:



Ա. Սաղմի կողաձին կազմվածքը (24-25 օրվա): Բ. «այլակի արյան լյարդացած մաս» փուլի էմբրիոնի և տզրուկի նմանության նմանության գոյություն ունենալը հաստատող նկար: (Քեյթ Մուրի «Մարդու զարգացումը» աշխատանքից, էջ 71. 7-րդ հրատարակում):



Սաղմի սրտապանակային սիստեմ պրիմորդիալական (առաջնային) համակարգում, մոտ 21 օր տարիքում, տեսքը ձախից: Ուշադրություն դարձրեք զույգային սիմետրիկ պանակների ընփացային փուլին (Քեյթ Մուր): Էմբրիոնի արտաքին տեսքը և նրա ծնած պարկերը նրան նմանացնում են լյարդացած արյան մասի արյան բավականին մեծ քանակի ներկայության հետևանքով:



Սաղմի արգանդի պատին կպած լինելու ցուցադրումը (մոտ. 21-րդ օր): Այս սխեմայում մենք կարող ենք տեսնել, որ սաղմը նման է տզրուկի, որը կպել է արգանդի պատին: «ալյակի, լյարդացած արյան մաս» փուլում:

- Ծամված կտորը: Նկարագրվում է այդպես, քանի որ սաղմը այդ փուլում արտաքին տեսքով նման է ծամված նյութի մասնիկի:



Մարդկային սաղմի մակրոսկոպիկ նկարահանում (չորս ու կես շաբաթական) (Քեյթ Մուր): Իրական չափն է 4,5մմ:



Աջակողմյան նկարը: Սաղմը այս փուլում նման է ծամած կտորի հետ, քանի որ սաղմի հետևի մասը հիշացնում է ատամների սեղմվածք:

Ձախակողմյան նկարը: Նայեք նաստակի կտորի և սաղմի նկարի նմանությանը: Ինչպե՞ս կարող էր պարզվեր, որ 14 դար առաջ ապրող մարդը ներկայացրեց այդպիսի տեղեկություններ սաղմի մասին: Ճշմարիտ, դա աստվածային հայտնություն է:

- Ատամնահետքերի ձևավորումը
- Ոսկորների մսով պատվելը
- Սաղմի նոր ձև ստանալը, որում մարմինը դառնում է համաչափ և նրա մեջ կյանք է ներշնչվում:

Մարդկային սաղմը ձևավորում է մի քանի փուլերով՝ երեխ «խավարների» ներքո, ինչպես ասում է Ալլահը.

«Նա ձեզ (բոլորիդ) մի հոգուց (Ադամից) ստեղծեց: Նա նրանից կին արարեց նրա կնոջը (Եվային, արաբերենում՝ Խաուա) և ձեզ ուղարկեց (դեպի երկրիր) ութ ընտանեկան (կենդանի) զույգեր: Ձեզ ստեղծում է ձեր մայրերի արգանդներում, արարում (փուլ) արարումից (փուլից) հետո, մթության երեք ծածկույթներում: Նա է Ալլահը՝ ձեր Տերը: Նրան է պատկանում իշխանությունը, Ալլահից բացի այլ աստված չկա: Ուրեմն ինչպե՞ս հեռացաք Նրա Ճանապարհից ու Երկրպագությունից»:

(Ղուրան 39:6)

Որոշ գիտնականների կարծիքով այս այաթը ցույց է տալիս, որ սաղմը ծածկված է երեք ծածկություններով, որոնք ասվում են տառացիորեն «խավարներ», քանի որ նրանց մեջով չի անցնում ոչ լույս, ոչ ջուր, ոչ էլ օդ: Նաև դրանք չի կարելի տեսնել անզեն աչքով:

Դոկտոր Մորիս Բուկայը իր «Աստվածաշունչը, Ղուրանն ու գիտությունը» գրքում գրել է.

«Ժամանակակից Գիտնականները փորձելով մեկնաբանել Ղուրանը դիտարկեցին այդ այաթում երեք բնական շերտեր, որոնք հղիության ընթացքում պաշտպանում են սաղմը. Որովայնային պատը, արգանդը և պտղի շրջապատը (պլացենտա, սաղմնային մեմբրաբբեր, պտղի մոտի հեղուկ)»:

Ինչպես նաև սաղմը տեղավորվում է ապահով տեղում:



Արգանդի սագիտալ չափսի նկարը չորրորդ ամսվա հղիության ժամանակ, որը ցույց է տալիս նորածնի դեցեդուալ թաղանթի ու նորածնի մեմբրանտների իրար նման լինելը:

Մեծն Ալլահն ասում է.

«Մի՞թե (ով անհավատներ) Մենք ձեզ չստեղծեցինք ջրից (սպերմայից) աննշան: Եվ տեղավորեցի՞նք դա ապահով տեղում (արգանդում) որոշված ժամանակ (հղիության տևողություն): Եվ մենք կարողացանք (ստեղծել դա, ձևավորել դա և մոր արգանդից ողջ վիճակով դուրս հանել), Մենք ամենակարողն ենք դրանում»:

(77:20-23)

Դոկտոր Հարրի Միլլերը իր «Զարմանալի Ղուրանը» գրքում գրել է.

«Մի անգամ մի լրագրող հարցրեց պրոֆեսոր Քեյթ Մուրին (Պրոֆեսոր Քեյթ Մուր, համաշխարհային ճանաչում ունեցող սաղմնաբան: Կանադայի վիրաբանների միության նախկին նախագահ, Տորոնտոյի Համալսարանի «Անատոմիայի և բջջային կենսաբանության» ամբիոնի վարիչ). «Ի՞նչ եք կարծում, Կարո՞ղ էին արդյոք արաբները այդ հին ժամանակներում իմանալ սաղմի արտաքին տեսքի և նրա զարգացման փուլերի պես բաներ: Ենթադրենք, որ նրանք գիտնականներ չէին, կարո՞ղ էին

իրականացնել հասարակ վիրաբուժական վիրահատություններ՝ կտրել մարդու ներքին օրգաններն ու հետազոտել դրանք»:

Պրոֆեսորը անմիջապես այդ լրագրողի ուշադրությանը դարձրեց մի կարևոր պահ: Սաղմի նկարների բոլոր պատկերները ստացված էին նկարահանումներից, որոնք արվել էին ժամանակակից տեխնիկայի օգնությամբ: Նա ասաց հետևյալը. «Նույնիսկ եթե ասենք, թե մեկը որոշել է տասնչորս դար առաջ հետազոտություններ անել կապված սաղմի հետ, նա ոչինչ չէր կարող տեսնել»:

Ղուրանի այաթներում ասված սաղմը չափազանց փոքր է, որպեսզի հնարավոր լինի տեսնել անզեն աչքով, այդ պատճառով այն դիտարկելու համար անհրաժեշտ է մանրադիտակ: Իսկ ինչպես հայտնի է, այդ սարքը հայտնագործվել է մոտ երկու հարյուր տարի առաջ: Այնուհետև դոկտոր Մուրը էրոնիայի մասնիկներ ունենալով ձայնում շարունակեց. «Իսկ հնարավոր է այդ ժամանակ՝ տասնչորս դար առաջ գոյություն ուներ մեկը՝ ում ենթակայության տակ մանրադիտակ էր հայտնվել: Նա իրականացնում է այդ բարդ հետազոտությունը, ընդ որում թույլ չի տալիս ոչ մի սխալ, Իսկ այնուհետև հանձնում է իր գիտելիքները Մուհամեդին և համոզում նրան պատմել այդ հետազոտության արդյունքների մասին Ղուրանում: Որից հետո այդ «մեկը» վերացնում է սարքը, պահպանելով իր գաղտնիքները դարեր շարունակ: Կհավատա՞ք այդ պատմությանը: Դժվար թե, քանի որ որպեսզի ապացուցվի այդ ծիծաղ առաջացնող տեսությունը, ստիպված կլինենք ունենալ համոզիչ ապացույցներ»:

Երբ նրան հարցրեցին. «Այդ ժամանակ Ինչպե՞ս կբացատրեք, որ այդ տվյալը հայտնվեց Ղուրանում»: Դոկտոր Մուռը պատասխանեց. «Դա կարող է ունենալ միայն մի բացատրություն. Ղուրանը հանդիսանում է աստվածային հայտնություն»:

Դոկտոր Ջերալդ Գոէրինգերն ասել է.

«Այդ նկարագրությունը շատ դարերով գերազանցեց սովորույթային գիտական գրականությանը ներկայացված սաղմի զարգացման տարբեր փուլերի հետազոտությունների արդյունքներին»:

http://www.youtube.com/watch?v=rFsq_UJeBEA)

Ինչ է ասում Ղուրանը օվկիանոսների մասին

Ինչ է ասում Ղուրանը ծովերի միջև պատնեշի մասին

Ալլահն ասել է.

«Նա իրար մոտ (տարբեր ջրերով) երկու ծով դնողն է. Մեկում (ջուրը) խմելու է՝ հաճելի (համ ունի), իսկ մյուսում աղի է, դառը: Նա դրանց միջև անհաղթահարելի, չքանդվող պատնեշ դրեց»:

(Ղուրան 25:53)



Ջրի հանքայնության աստիճանից կախված գոյություն ունեն ափամերձ ջրերի երեք հիմնական հիդրոլոգական ռեժիմներ՝ ստրատիֆիկացված, մասամբ խառնված, լրիվ խառնված:

Այն փաստը, որ ծովերի ու օվկիանոսների ջրերը իրար չեն խառնվում, հայտնաբերվեց օվկիանոսագիտությունում վերջերս: Այդ երևույթը գիտնականները բացատրում են «մակերևույթային լարվածությամբ» , որի պատճառներից մեկը հանդիսանում է շոշափող մարմինների տարբեր խտությունը: Մակերևույթային լարվածությունի թույլ չի տալիս ջրերի երկկողմ խառնվելուն, նրանց միջև անհաղթահարելի պատնեշի գոյություն ունենալու էֆֆեկտ ստեղծելով: Օրինակ՝ Ամազոնի ջրերը թափվում են Ատլանտյան օվկիանոս և պահպանում են իրենց հատկությունները նույնիսկ ափից մինչև 200 մ հեռավորության վրա:

Ինչ է ասում Ղուրանը ծովերի խավարի ու ներքին ալիքների մասին

Ալլահն ասում է.

« ... (անհավատների արարքները) նման են ծովային անդունդների խորքի խավարին որ փռված է ալիքներով, որոնց վրա կան այլ ալիքներ, որոնց վրա էլ ամպերն են գտնվում: Խորը խավարներ՝ մեկը մյուսի վրա, որտեղ տարածած ձեռքը չի գրեթե երևում (եթե որևէ մեկը ձեռքը տանի այնտեղ, ապա գրեթե չի տեսնի): Ում Ալլահը լույս չի շնորհել, նա լույս չի ունենա»:

(Ղուրան 24:40)



Այս սխեմայում ցուցադրվում է մաքուր օվկիանոսային ջրում լուսային ճառագայթների ներթափանցման խորությունը: Ավելի ինտենսիվորեն քաշում է կարմիր լույսը, և այդ պատճառով այն ունի ամենաքիչ ներթափանցային խորությունը, այնժամ՝ երբ կապույտ լույսը կարող է ներթափանցել 200մ ից ավելի խորություն (կիրառական օպտիկա, մաս 20 (177), Սմիթ Ռ.Կ. և Բեյկեր Կ.Ս., 1981թ. Կամ http://daac.gsfc.nasa.gov/oceancolor/scifocus/oceanColor/oceanblue.shtml):

Ժամանակակից գիտությունը հաստատում է, որ մեծ խորություններում գերիշխում է մի սաստիկ խավար, քանի որ արևի ճառագայթը չի կարողանում անցնել ջրի զանգվածներ, որոնց լայնությունը տատանվում է մի քանի հարյուր մետրից մինչև 11կմ: Այդ փաստը չէր կարող հայտնի լինել Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ժամանակաշրջանում, քանի որ այդ փուլում մարդկությունը չուներ Ծովային խորությունները ուսումնասիրելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

Այդ երևույթը նկատելի է դառնում 200մ խորությունում: Այդտեղ լույսը հասնում է մեծ վարությամբ, իսկ ավելի ցածր՝ 1000մ-ում լիովին բացակայում է: Այդպիսով լուսային ճառագայթների մեծ մասը կլանվում է ջրի կողմից 100մ խորության վրա, 1 տոկոսը հասնում է մինչև 150մ, և միայն չնչին մասն է՝ 0,01 տոկոսը հասնում 200մ (Oceans, Elder & Pernetta, p. 27. Ինչպես նաև Oceans, Day, Trevor, p. 46-47):

Օզոնի շերտը իր վրա է վերցնում տիեզերքից եկող նյութերի մեծ մասը, այն ժամ, երբ ամպերը կարող են փակել մոտավորապես 30%-ը: Ամպերի գոյության ժամանակ հասնում է միայն լույսի 51%-ը , որից 3-30%-ը իր վրա է վերցնում ծովի մակերևույթը:Ավելի մեծ խորություններում ծիածանի բոլոր 7 գույները իրար հետևից խամրում են մինչև 200 մ , բացի տեղին համապատասխան գույնից:

Ինչ է ասում Ղուրանը ներքին ալիքների մասին

Գիտնականները վերջերս են հայտնաբերել, որ գոյություն ունեն ներքին ալիքներ որոնք նկատվում են տարբեր խտություն ունեցող ջրերի շերտերի միջև: Ներքին ալիքները նկատվում են ծովերի և օվկիանոսների խորքերում, քանի որ խորքի ջրերը ավելի մեծ խտություն ունեն քան վերին շերտերի ջրերը: (Կիրառական ֆիզիկայի համալսարանի (Ռ.Ա.Ն.) հետազոտությունից, http://www.iapras.ru/science/din_vo2.html): Ներքին ալիքները շարժվում են վերին ալիքների պես: Ներքին ալիքները մարդու համար անտեսանելի են՝ կարող են հայտնաբերվել միայն տեղի ջրի աղիությունն ու այլ պարագաները ուսումնասիրման դեպքում:



Ներքին ալիքներն ու նրանց մասնակցությունը օվկիանոսային ջրերի խառնվելու մեջ: («Օվկիանոսագիտություն», Կրիս Գառռետտ: Նայեք նաև

http://www.nature.com/nature/journal/v422/n693/full/422477a.html):



Նկարում պատկերված են ներքին ալիքները, որոնք գտնվում են երկու տարբեր խտություն ունեցող ջրային հարթությունների միջև: Ալիքների ներքևի մասը տարբերվում է մեծ խտությամբ, վերինը՝ փոքր: («Օվկիանոսագրություն», Գոռսս, էջ 204):

Կբերենք հետևյալ օրինակը՝ Միջերկրական ծովի ջուրը տաք է, աղի և համեմատած ոչ խիտ, ի տարբերություն Ատլանտյան օվկիանոսի: Միջերկրական ջովի ջրի հոսքը լցվելով Ատլանտյան օվկիանոս Ջիբլարթարի նեղուցից, շարժվում է օվկիանոսի հատակի մի քանի հարյուր մ. Խորությունով, մոտ 1000 մ., ընդ որում պահպանելով իր հիմնական հատկությունները (ջերմաստիճան, աղիություն, խտություն): Այդպիսով Միջերկրական ջովի ջրի հատկությունները մնում են անփոփոխ, չնայած ովկիանոսում առաջացող մեծ ալիքներին ու այնտեղ եղած ուժեղ հոսանքներին ու ջրի տվյալներին:



Օվկիանոսում հիմնական ջրային մասերը տարբերվոխմ են ջերմաստիճանով և աղայինության աստիճանով: Այդ երկու բնությգրերը որոշում են համապատասխան ջրային մասերի խտությունը, որն էլ իր հերթին որոշիչ դեր է խաղում օվկիանոսի տենմոհալինային շրջանառության մեջ: ՀԱՀՋ-հյուսիսամերիկյան հատակային ջուր: ԱԴՋ-Ատլանտյան դոննային ջուր: Դոկտոր Սթիվ Հովանի մորերլիզացված սխեմա, Ինդիանայի Համալսարան, Պենսիլվանիա:

Այդ ալիքների երկու տեսակն էլ կարող են բաժանվել ավելի փոքր մասերի և մնում են նույն բաղկացությամբ: Ներքին հոսանքները մարդկային աչքի համար անտեսանելի են և հայտնաբերվում են ջրի ջերմաստիճանի փոփոխության կամ որոշ մասի աղայինության հետազոտման միջոցով:

Ինչ է ասում Ղուրանը Անձրևի ու ամպերի ձևավորման մասին

Ալլահն ասում է.

«Նա է, որ ուղարկում է քամիներին ասես լինեն Նրա Գթասրտության ավետը, մինչև տանեն անձրևով լի ամպեր, և այդ ժամանակ ուղղում ենք դեպի մի մահացած երկիր, և այնտեղ անձրև ուղարկեցինք, որպեսզի դուրս գա պտուղի ամեն տեսակ: Այդպես ենք հարություն տալիս մահացածներին, գուցե դուք հաշվի կառնեք (հարության համար Ալլահի ուժը)»:

(Ղուրան 7:57)

Ալլահն ասում է.

«Եվ ուղարկեցինք սերմավորող քամիները (որ ամպերը ջրով լցնեն) և այնպես արեցինք, որ ջուրն ընկնի երկնքից: Ձեզ տվեցինք, որ խմեք և չեք կարող պահեստավորել այն»:

(Ղուրան 15:22)

Գիտնականները համարում են, որ վերն ասված Ղուրանի այաթները ցույց են տալիս ժամանակակից գիտության կողմից հաստատված փաստերը: Քամիները մթմոլորտում տեղափոխում են աղով սնուցված ջրի մասնիկներ, որոնք կոչվում են «աէրոզոլներ», որոնք գործում են ջրային թակարդների պես և ձևավորում են անձրևային կաթիլներ, իրենց շուրջ ջրային բուդ հավաքելով: Այդպիսով ամպերը ձևավորվում են ջրային բղից, որը թանձրանում է օդում աղի բյուրեղիկների կամ փոշու մասնիկների վրա: Քանի որ ձևավորված կաթիլները չափազանց փոքր են (0,01-0,02 մմ. Տրամագծով), ամպերը հեշտությամբ տեղափոխվում են օդով («Earth Science», Tarbuck, Edward J., Lutgens, Frederick J, էջ 509-525. Ինչպես նաև «Moutain Meteorolagy», Whiteman, David C., էջ 100-116:



Մթնոլորտի լուսանկար: Պարզ երևում են ամպերն ու քամիների ուղղությունը:

Եվ հենց այդ գործողությանն ենք մենք հետևում, երբ տեսնում ենք երկինքը ամպերով ծածկվելիս: Ջրային մասնիկները, որոնք հավաքվում են աղի բյուրեղիկների կամ փոշու հատիկների վրա, խտանում են և դառնում ջրի կաթիլներ: Երբ այդ կաթիլները դառնում են օդից էլ ծանր, լքում են ամպերն ու ընկնում երկրի վրա անձրևի տեսքով:

Ալլահն ասում է.

«Մի՞թե չես տեսնում, որ Ալլահը հրում է ամպերը, հետո միացնում, հետո դարձնում է ամպերի խումբ, և դու տեսնում ես թե ինչպես է նրա ճեղքվածքներից անձրև դուրս գալիս: Եվ երկնքից կարկուտ է ցած ուղարկում (ասես) լեռներ (կամ երկնքում կարկտե լեռներ կան, որոնցից Ալլահը կարկուտ է ցած ուղարկում) և տալիս է ում, որ ցանկանում է, և հեռացնում է դրանից ում, որ ցանկանում է: Քիչ էր մնում, որ կուրացներ աչքը կածակի զիլ փայլը (որ ուղեկցում է ամպերը)»:

(Ղուրան 24:43)



Խմբային ամպեր: Այս լուսանկարը կատարված է ՆԱՍԱ-ի արբանյակից: Լուսանկարում երևում է, թե ինչպես են հավաքվում ամպերը մի տեղում, ասես նրանց այդտեղ է քշում մի անտեսանելի ձեռք:

Անձրևային ամպերի առաջացման և ձևավորման գործնթացը տեղի է ունենում հատուկ սցենարով, փուլերով:

Ավելի ներքևում մենք կտեսնենք այդպիսի ամպերի մի տեսակի ձևավորման փուլերը, որին մասնագետները անվանում են խմբանձրևային ամպ:



1) Դրեյֆ: Բոլոր ամպերը միասին տեղափոխվում են քամու շնորհիվ:

2) Միաձուլում: Մանր (խմբային) ամպերը քամուց քշվելով միաձուլվում են և ստեղծում մեծ ամպ:

3) Խտանալը: Մեծ ամպի ձևավորված հոսքում ուժեղանում են ներհոսքները՝ մեջանում է ջրային բրի քանակը, որը բարձրանում է ցածր ոլորտներից, որն էլ իր հրթին մեծացնում է խտացման էներգիան: Այդ գործողությունները ուժեղացնում են վեր բարձրացող օդային հոսքը, թույլ են տալիս նրա ուղղահայաց աճին: Օդի հոսանքները շատ ուժեղ են ամպի մեջտեղում, և թուլ նրա ծայրերում, ինչը բերում է տարածքային

խտության տարբերությանը: Ուղղահայց աճի հետևանքով ամպը հասնում է մթնոլորտի սառը ոլորտներին, որտեղ դանդաղորեն սկսում են ձևավորվել և սկսում են մեծ չափսեր ձեռք բերել ջրի կաթիլներն ու կարկուտի բյուրեղները: Եվ երբ օդի գալացող հոսքը էլ չի կարողանում պահել ծանրացած ջրի կաթիլներն ու կարկուտի բյուրեղները, սկսվում է նրանց երկիր ընկնելու գործնթացը տարբեր պեղումների տեսքով:

Երբ կարկուտի մասնիկները անցնում են տարածքի մեջով, որը ունի սառեցնող ջրի կաթիլներ և սառուցի բյուրեղներ, տեղի է ունենում ամպի հոսանքավորում: Սառուցի մասնիկներին կպնելով ջրի կաթիլները սառում են, դուրս հանելով լետանետ տաքություն, որի շնորհիվ սառուցի մասնիկները ստանում են ավելի մեծ տաքություն:

Երբ սառցե կտոտները կպնում են սառցե բյուրեղներին տեղի է ունենում կարևոր երևույթ. Էլեկտրոնները մի սառը օբյեկտից անցնում են մյուսին՝ ավելի քիչ սառին: Այդպիսով սառցէ մասնիկները ունենում են բացասական լիցք: Այդ նույն էֆեկտն էլ դիտարկվում է, երբ շատ սառեցված կաթիլները կպմում են տվող կարկուտներին. Դրա ընթացքում տեղի է ունենում սառցե փոքր կտոտների պոկում, որոնք լիցքավորված են դրական լիցքով: այդ դրական լիցք ունեցող թեթև սառցե կտորները այնուհետև տարվում են ամպի վերին մաս մտնող հոսքերով:

Կարկուտը ցած ընկնելով, ամպի նետքևի մասին տալիս է բացասական լիցք, որը հավաքվելով ստեղծում է աստիճանային լիցք-լիդեր: Ինչպես տեսնում ենք կարկուտը խաղում է կայծակի ստեղծման հիմնական դերը (''The Atmosphere''. Anthes, Richard A., John J. Cahir, Alistair B. Fraser, Hans A. Panofsky, c. 269. Cm. takje: “The Elements of Meteorology”, Miller & Thompson, c. 141-142. Cm takje: Earth Science Today, Murphy, Brendan, Nance, Damian, c. 346.)

Ալլահն ասել է.

«Կայծակի ձայնը նույնիսկ Նրան փառավորում է, ինչպես և հրեշտակները Նրա դիմաց վախից ու հարգանքից: Նա կայծակներ է ուղարկում և խփում դրանցով ում ցանկանում է, սակայն անհավատները կասկածում են Ալլահին, որը շատ խիստ է իր պատիժը կիրառելուց»:

(Ղուրան 13:13)



Երկրային կայծակի փուլաձին ձևավորումը: (ա) բացասական լիցք, որը հավաքված է ամպի ներքին մասում, դառնում է չափազանց մեծ, որ հաղթահարի օդի հակազդեցությունը և նախաձեռնում է իոնացված ալիքի հայտնվելը, որը ստացել է երկրի մակերևույթին ուղղված կայծակի աստիճանավոր լիդերի անվանումը: (բ) Լիդերի դեպի մակերևույթ շարժման չափումով նրա վերջում լարումը մեծանում է և նրա ազդեցության տակ երկրի մակերևույթից նրան ընդդիմացող առարկաներից դուրս է գալիս լիցքերի պատասխան թելը, ստրիմեր, որը միանում է լիդերին: (գ) Վերջնական փուլում լիդերի իոնացված ալիքին հետևում է դեպի հետ, կամ կայծակի հիմնական լիցքը, որը բնութագրվում է տասնյալներից մինչև հարյուրավոր հազար ամպեր էլեկտրականությամբ, փայլով, որը նկատելիորեն գերազանցում է լիդերի փայլին, և տեղաշարժման մեծ արագությամբ:

Ինչ է ասում Ղուրանը կենդանիների մասին

Ալլահն ասում է.

«Ճշմարիտ, Կենդանիներից (որ կերակրում եք) մի խրատ ունեք՝ ձեզ տալիս ենք, որ ուտեք և խմեք նրանց օրգաններից, որ կան արյան ու գեղձերի միջև՝ ջինջ և համեղ կաթ է դուրս գալիս այն խմողների համար»:

(Ղուրան 16:66)

Մորիս Բուկայն ասել է.

«Որպեսզի հասկացվի այս այաթի ինաստը գիտական մոտեցմամբ, մենք պետք է օգտագործենք գիտության հիմքը կազմող գիտելիքներից, որը ուսումնասիրում է կենդանի օրգանիզմում տեղի ունեցող գործողությունները: Օրգանիզմին անհրաժեշտ կուցող նյութերի ձևավորումը տեղի է ունեում մարսողության ամբողջ գործողության ընթացքում բարդ քիմիական ձևավորումների արդյունքում: Մնունդի մարսողության վերջին գործողությունը տեղի է ունենում բարակ աղիքում: Այդտեղից ստամոքսից ներծծման գործողության արդյունքում դրանք ընկնում է արյունատար համակարգ:

Դա տեղի է ունենում երկու ճանապարհներով: Լամֆիկ կապիլյարներից և արյունատար կապիլյարներից, որոնք հանդիսանում են արյան տեղափոխման համակարգի մաս:

Դարպասային երակից անհրաժեշտ սնունդ պարունակող արյունը անցնելով լյարդի մեջով, որտեղ ստանում է որոշ փոփոխություններ, վերադարնում է արյունատար հանակարգ: Այդպիսով օրգանիզմի ապրելու բոլոր կարևոր նյութերը անցնում են օրգանիզմի արյունատար համակարգ:

Կաթի պարունակող նյութերը վերամշակվում են կաթնային եերկաթներով: Բոլոր անհրաժեշտ սնուցող նյութերը, որոնք ճանապարհով հանդիսանում են մարսողության մթերքներ, տարվում են կաթնային երկաթների մոտ արյան համակարգի շնորհիվ: Հետևաբար արյունը հանդիսանում է սննդի պահպանման ու տեղափոխման եղանակ: Նա տալիս է սննդանյութեր ոչ միայն կաթնային երկաթներին, որոնք դրա շնորհիվ կարող են կաթ մշակել, այլ նաև մնացած օրգաններին:

Այդպիսով կարևոր պահը, որը կանխորաշել է պրոցեսների ամբողջ հերթականությունը՝ որոնք ուղարկված են օրգանները սնունդով ապահովելու համար, հանդիսանում է արյան ու սնուցող նյութերի կարողությունը: Այդ հայտնագործությունը հնարավոր դառավ ժամանակակից քիմիայի ու ֆիզիոլոգիայի ձերքբերումների շնորհիվ: Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) ժամանակ այդպիսի փաստերը մարդկությանն անհայտ էին: Ես համարում են, որ գիտական նշանը, որը գրված է այդ այաթում չի կարող լինել մարդկային ուղեղից, հաշվի առնելով այն գիտական ու տեխնիկական զարգացման մակարդակը, այն ժամանակ երբ Ղուրանը ուղարկվում էր (Մորիս Բուկայ «Աստվածաշունչը, Ղուրանն ու գիտությունը»):

Ինչ է ասում Ղուրանը լեռների մասին

Ալլահն ասում է.

«Մի՞թե մենք երկիրը պատրաստ չենք արել ձեր բնակվելու համար, և լեռները՝ փշեր»:

(Ղուրան 78:6-7)



Իզոստազիան հայտնաբերելու մեթոդներից մեկը- ծանրության շեղման դիտարկումը, ինչպես ցուցադրված է այս նկարում: (ա)-ծանրության ուղղահայաց դիրքը: Եթե լեռները ուղղակի ծանրություն լինեին, լիների երկրի մակերևույթին հավասար, ապա նրանք կկարողանային տեղաշարժվել: (գ)- Սակայն նրանց խորը «արմատ» ունենալու պատճառով դիտարկվում է շեղում մինչև (բ) դրությունը: Building Planet Earth, էջ 35: Նկարը մեջբերված է թողարկողի թույլտվությամբ:

Գիտնականները հաստատում են, որ լեռների ձևը նման է «փշերի». Ժամանակակից սարքերի շնորհիվ հայտնի դառավ, որ ամեն լեռ իր տակը «արմատ» ունի, որը ստաբիլացնում է երկրի մակերևույթը տակի հարթություններով... Լեռները նման են մեխերին, որոնցով կպցնում են փայտե տարբեր իրեր (“Earth”, Press and Siever, էջ. 435. Cm. takje “Earth Science”, Tarbuck and Lutgens, էջ. 157. Cm. takje : “Earth Science Today”, Murphy, Brendan, Nance, Damian, էջ. 107.)

Լեռների արմատային համակարգ ունենալու փաստը կապում են իզոստազիայի երևույթի կամ իզոստազիոն հավասարակշռության հետ. «Ինչքան շատ է լեռան բարձրությունը, այնքան խորը «արմատ» ունի»:



Նկարում պատկերված են լեռների «արմատները»: Այդպիսի արմատներից որոշները կարող են երկրի ընդերքում սփռված լինել 60կմ:

Ալլահն ասում է.

«Եվ (Նա) անսասան լեռներ տեղադրեց երկրի վրա, որ նա չտատանվի ձեր հետ, նաև գետեր ու ճանապարհներ, գուցե գնաք ճիշտ ճանապարհով»:

(Ղուրան 16:15)

Ժամանակակից գիտնականները գտել են, որ լեռները երկրի վրա դրված են հավասարաչափ ողջ աշխարհում: Դրանք հանդիսանում են երկիրը ստաբիլացնող իրերից: Հիմնականում դա վերաբերվում է այսպես կոչված լեռնաշղթաներին, որոնց կարելի է տեսնել բոլոր մայրցամաքներում («The Geologikal Concept of Mountians in the in the Qur'an», El-Naggar, c. 5. Cm. takje: "World of Earth Science", Tom "Mountain Chains".)

Այդպիսով, կարդալ ու գրել չիմացող մարդը ինչպե՞ս կարող էր ունենալ այդպիսի գիտելիքներ:

Ինչ է ասում Ղուրանը ջրի ու կյանքի մասին

Ալլահն ասում է.

«Մի՞թե չեն տեսնում (անհավատները), որ երկինքն ու երկիրը մի ամբողջություն էին, և Մենք առանձնացրեցինք դրանք (երկու մասի) ու արարեցինք ամեն ապրողի ջրից: Մի՞թե նրանք չեն հավատա»:

(Ղուրան 21:30)

Ժամանակակից գիտությունը հաստատում է, որ ջուրը հանդիսանում է կյանքի հիմնական աղբյուր, որից բջիջ է ձևավորվում: Ինչպես ապացուցեցին քիմիկոսները. Ջուրը դա անհրաժեշտ և ակտիվ գործոն է, որը մասնակցում է բոլոր ռեակցիաներում ու փոփոխություններում, որոնք լինում են օրգանիզմում: Այդպիսով այն հանդիսանում է հեղուկների միակ տեսակը, որի կարիքը ունեն բոլոր կենդանի էակները, անկախ նրանց չափերից՝ սկսած միկրոօրգանիզմներից և վերջացած կենդանի աշխարհի ամենամեծ ներկայացուցչով:

Այժմ ջուրը ծածկում է երկրագնդի 71 տոկոսը, իսկ մնացած 29-ը զբաղեցնում է ցամաքը:

Ջուրը դա մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքի հիմնական աղբյուրն է: Ժամանակակից գիտական հետազոտությունները հաստատում են, որ չափահաս մարդու օրգանիցմի 71 տոկոսը ջուր է, իսկ երեխայի օրգանիզմում 93 տոկոսն է ջուր: Դա նշանակում է, որ օրգանիզմում շրջանառվող հեղուկի 80 տոկոսը կազմում է ջուր, իսկ մնացած 20 տոկոսը արյուն է: Կենդանիների օրգանիզմներում, բույսերում ջրի պարունակությունը կազմում է 90 տոկոս:

Ովքեր են թշնամություն անում Իսլամին

Նայելով մեզ շրջապատող աշխարհին, անկասկած կնկատենք, որ բազում մարդիկ ատում են Իսլամը: Ինչո՞վ է կապված նրանց այդ վերաբերմունքը այդ կրոնին: Եթե մենք փորձենք դասակարգել այդ մարդկանց ըստ խմբերի, ապա կտեսնենք, որ նրանց կարելի է բաժանել հետևյալ դասերի:

1)Բազմաստվածներ ու անգրագետներ: Նրանք ատում են Իսլամը, քանի որ այն արգելում է բազմաստվածությունն ու Ալլահից բացի այլ մեկին երկրպագելը: Ալլահն ասում է.

«Ասա (ով Մուհամեդ (բազմաստվածներին)). «Մի՞թե դուք հրամայում եք ինձ երկրպագել Ալլահից բացի նաև այլ մեկին, ով անմիտներ»:

(Ղուրան 39:64)

2)Նրանք՝ ում բնածին կամ բնական ունակությունները այս կամ այն պատճառներով փոխված պարզվեցին: Նրանք չեն սիրում Իսլամը, քանի որ այդ կրոնի դրույթները չեն համապատասխանում նրանց անբարոյական էությանը:

Ալլահն ասում է.

«Երեսդ կրոնին դարձրու անկեղծությամբ ու հաստատակամ և նվիրվածությամբ միայն դեպի Ալլահը: Դա (Միաստվածությունն է՝ Իսլամը) Բնության աշխարհը, որով Ալլահը ստեղծեց մարդկանց: Մի՛ փոխեք Ալլահի կրոնը (Միաստվածությունը, որ

բնական աշխարհն է, որով ձեզ ստեղծելէ Ալլահը, մի փոխարինեք դա բազմաստվածությունով ու անհավատությունով): Դա է օրինակելի կրոնը, սակայն մարդկության մեծամասնությունը չգիտի (դա)»:

(Ղուրան 30:30)

3)Անարդարները: Անարդարության և նենգության մեջ մտած մարդիկ չեն սիրում Իսլամը, քանի որ այն բոլորին կոչում է հավասարության ու արդարության:

Ալլահն ասում է.

«Ալլահը հրամայում է արդար լինել, բարին կատարել, մոտ հարաբերություններ ունենալ ու օգնել բարեկամներին և արգելում է ամեն վատ արարք, իսլամական օրենքին հակառակ արարք, անդուրությունները: Նա ձեզ խորհուրդ է տալիս, որ դուք լրջորեն հաշվի առնեք»:

(Ղուրան 16:90)

4)նրանք՝ ովքեր ձգտում են տարածել անարդարությունն ու խարդախությունը:

Նրանց դուր չի գալիս, որ Իսլամը կոչ է անում բարեգործության ու արդարության:

Ալլահն ասում է.

«Նրանք (անհավատները) ձգտում են չարիք տարածել երկրում, սակայն Ալլահը չի սիրում չարագործներին»:

(Ղուրան 5:64)

5)Մյուսների համբերությունը չարաշահողները: Նրանք ատում են Իսլամը, քանի որ դա արդարության կրոնն է:

Ալլահն ասում է.

«Պայքարեք Ալլահի ճանապարհին նրանց հետ՝ ովքեր պայքարում են ձեր դեմ, սակայն ձեզ թույլատրվածի սահմանները մի անցեք (այսինքն՝ մի սպանեք անզեն քաղաքացիներին, կանանց, ծերերին, երեխաներին, կենդանիներին, ծառերին և այլն) (կամ դուք մի եղեք առաջին հարձակվողները), քանի որ Ալլահը հարձակվողներին չի սիրում»:

(Ղուրան 2:190)

6)Ֆանատիկներն ու էքստրիմիստնետը նույնպես չեն սիրում Իսլամը, քանի որ դա խաղաղասեր կրոն է, որը դատապարտում է քանատիզմին:

Ալլահն ասում է.

«Այսպես ձեզ արդար ժողովուրդ արեցինք, որպեսզի դուք վկա լինեք ամբողջ մարդկությանը, իսկ առաքյալը՝ ձեզ»:

(Ղուրան 2:143)

7)Վայրենի ու սատանայական բնազդի մարդիկ: Նրանք ընդդիմանում են Իսլամին, քանի որ դա մաքրության կրոն է:

Ալլահն ասում է.

«Մի մոտեցեք անօրինական սեռական հարաբերություններին, քանի որ այն անդուր արարք է, որ դժողք է տանում»:

(Ղուրան 17:32)

8) Աշխարհիկ բարիքների ստրուկ դառած մարդիկ: Նրանք ընդդիմանում են Իսլամին, քանի որ այն մարդասիրության ու փոխօգնության կրոն է, և այդ պատճառով արգելում է և թույլ չի տալիս մարդկային թուլությունների ու կարիքների առիթից օգտվելը:

Ալլահն ասում է.

«Եվ անարդարորեն մի խժռեք ուրիշի ունեցվածքը և մի օգտագործեք դա, որ կաշառեք կառավարիչներին կամ դատավորներին, որպեսզի խժռեք մարդկանց ունեցվածքի որևէ մասը, մտածված և անարդար կերպով»:

(Ղուրան 2:188)

9)Նրանք՝ ովքեր իրենց ընտրյալ են համարում և անհարգալից են վերաբերվում մյուսներին: Նրանք չեն սիրում Իսլամը, քանի որ դա հավասարության կրոն է, որը պայքարում է անհավասարության ու ռասիզմի դեմ:

Ալլահն ասում է.

«Ով մարդիկ: Մենք ձեզ ստեղծեցինք տղամարդուց և կնոջից և ազգեր ու ցեղեր արեցինք ձեզ, որպեսզի դուք ճանաչեք միմյանց և ձեզանից Ալլահի ամենահարգելին դա անենաբաաստվածավախն է»:

(Ղուրան 49:13)

Իսլամ ընդունելու դրական կողմերը.

Շատ մարդիկ Իսլամ են ընդունում հետևյալ պատճառներով.

 Իսլամը Աստվածային վերջին կրոնն է, որը ուղարկված է մարդկությանը:

 Իսլամը ճանաչում է Ալլահի նախկին հայտնությունները, այնժամ, երբ հրեաները չեն ընդունում Հիսուսին, իսկ քրիստոնեաները չեն ընդունում Մուհամեդին (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան): Իսկ մուսուլմանները ճանաչում են Մովսեսին, Հիսուսին և Ալլահի բոլոր մնացած մարգարեներին, խաղաղություն նրանց բոլորին:

 Իսլամում մարդը ամբնդհատ կապված է իր Տիրոջ հետ բոլոր թեմաների ու դեպքերի մեջ:

 Իսլամը դա մի կրոն է, որը երբեք չի անհետանա կամ փոփոխվի: Հարրի Գ. Դորմանը գրել է. «Նա (Ղուրանը) հանդիսանում է Աստծո բառացի հայտտնությունը, որը թելադրել է Մուհամեդին Գաբրիելը, և այն կատարյալ է իր ամեն տառի մեջ: Դա հավիտենական անփոփոխ հրաշք է, որը վկայում է ինքն իր մասին ու Ալլահի առաքյալ Մուհամեդի մարգարեության մասին: Ղուրանի աստվածայինությունը ցուցադրվում է նրա յուրահատուկ և բարձրաճաշակ ոճում, որ ոչ մարդիկ ոչ ջիները չէին կարող լույսի բերել նրա ոչ մի այաթի պես բան, ուր նրա մեջի տեղեկություններից որևէ բան գրել ու կարդալ չիմացող Մուհամեդը չէր կարող մենակով հավաքեր»: (“Towards Understanding Islam”, էջ. 3.)

 Իսլամը կրոն է, որը իր մեջ է ընկալում մարդու ինչպես նյութական այնպես էլ հոգեբանական կյանքի ձևը: Այն ղեկավարում է ամեն մանրուք: Աբրուր-Ռահման իբն Զեյդը պատմել է, որ մի անգամ մեկը Սալմանին հարցրեց. **«Ձեր մարգարեն ձեզ ամեն ինչ սովորացրե՞ց, նույնիսկ կարիք հոգա՞լը»: Սալմանը պատասխանեց. «Իհարկե: Նա մեզ արգելեց ուղղվել դեմքով դեպի Քիբլը (այսինքն դեպի Քաբբա) կարիքը հոգալու ժամանակ, մաքրվել աջ ձեռքով, երեք քարից քիչ օգտագործել կամ օգտագործել ոսկորներ կամ չորացած թրիքներ (կարիքը հոգալուց հետո մաքրվելու համար)»:**

(Մուսլիմ):

Հնդիկ բանաստեղծ Sorojini Naidu-ն ասել է. «Արդարության զգացմունքը Իսլամի ամենահոյակապ իդեալներից մեկն է: Այդ կրոնում ես իսկապես հայտնաբերեցի այն գործող կյանքի սկզբունքները, որոնց մասին խոսվում է Ղուրանում: Եվ այդ սկզբունքները ոչ թե ձևական, այլ ամենօրյա պրակտիկ օրենքներ են, որ պետքական են ամբողջ աշխարհին»:

 Իսլամը ընդհանուր առմամբ հավասարաչափ բավարարում է մարդու ֆիզիկական ու հոգեբանական կարիքները, միաժամանակ չխոչընդոտելով դրանցից որևէ կողմին:

Անգլիայի արքայազն Կառլոսն ասել է.

«Այսօր Իսլամը մեզ կարող է սովորացնել այս աշխարհի կյանքն ընկալելու մի ճանապարհ, որ նույն քրիստոնեությունը կորցրել է, մնալով ավելի աղքատ: Իսլամը ժխտում է առանձնացնել մարդուն բնությունից, կրոնը գիտությունից, հոգին առարկայից»:

- Իսլամը չի հակադրում մարդկային մտքին ու բնությանը:

- Իսլամը կրոն է բոլոր մարդկանց համար, անկախ նրանց կրթությունից, բնակավայրից ու ժամանակից՝ որում նրանք ապրում են: Դա առանձնացնում է Իսլամը նախորդ կրոններից, որոնք նախատեսված էին որոշ ազգերի համար և ուղարկվեցին որոշ ժամանակ: Օրինակ՝ հրեա կարող է լինել նա՝ ով ծնվել է հրեա: Իսկ ինչ վերաբերվում է քրիստոնեությանը, ապա Հիսուսն ասել է. «Ես ուղարկված էի Իսրայելի երեխաների կորած գառներին...»:

Ղուրանի հետևյալ կրկնօրինակը, որը արված է պապիրուսի վրա ոսկեջրված տառերով, վկայում է այն մասին, թե ինչ մեծ ուշադրություն էին դարձնում մուսուլմանները գրքի պահպանությանը:

Իսլամը ունիվերսալ կրոն է, որը պիտանի է բոլորի համար, անկախ նրա ապրելու ժամանակից, ցեղից ու լեզվից: Դրա ապացույցը գտնվում է հետևյալ խոսքում.

«Ով դու (Մարգարե), որ դու ծածկված ես (մի ծածկոցով): Ոտքի ելիր և նախազգուշացրու: Եվ Տիրոջդ փառաբանիր»:

(Ղուրան 74:1-3)

Այս այաթում Արարիչը հրամայում է Իր առաքյալին բացահայտորեն Իսլամ քարոզել, և Մուհամեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) կատարեց այդ հրամանը, կոչ անելով իր ժողովրդին երկրպագել միակ Աստծուն: Այդ ճանապարհին Ալլահի առաքյալը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) շատ դժվարություններ հանդիպեց, սակայն երբեք չէր տատանվում, ընդ որում միայն բարին էր կամենում: Նա այդ ժամանակվա մի քանի թագավորներին նամակ ուղարկեց, որոնցից էին Բյուզանդիայի իմպերատորը, Պարսկաստանի ու Եթովպիայի կառավարիչներին, և նրանց Իսլամի կոչեց: Եթե Մուհամեդի (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) կրոնը ունիվերսալ չլիներ, համընդհանուր, կկանչե՞ր նա մարդկանց որոնք ապրում են աշխարհի տարբեր մասերում: Ինչու՞ նա պետք է ռիսկի դիմեր, եթե Աստծո հրամանը չլիներ, որ այդ աստվածային առաքելությունը հասցվեր ամբողջ մարդկությանը: Մի մոռացեք, որ այդ կոչերը ստացող արքաներից յուրաքանչյուրը ուներ իշխանությունը և լավ պատրաստված ու զինված բազմաթիվ զորք:

Ալլահի առաքյալն ասել է.

«Ալլահ գթասիրտ, ողորմածի անունով: Ալլահի առաքյալ Մուհամեդից Նեգուսին՝ Եթովպիայի մեծ թագավորին: Խաղաղություն նրանց՝ ովքեր ճշմարիտ ճանապարհին են անցել: Օրհնում եմ Ալլահին՝ Միակ Աստծուն, որից բացի աստված չկա, և վկայում եմ, որ Մարիամի որդի Հիսուսը մի ոգուց բարձր ոչինչ չէր, որ ստեղծվեց Նրա կողմից և Նրա Խոսքից (Եղի՛ր, և եղավ), որ անց կացրեց Մարիամին՝ բարի, ջինջ օրիորդին, որպեսզի ընդունի Հիսուսին: Ալլահը նրան ստեղծեց Իր ոգուց, ինչպես ստեղծեց Ադամին Իր ձեռքով: Կոչ եմ անում քեզ ու քո մարտիկներին դեպի Ալլահի ուղղորդմանը: Վկայում եմ, որ փոխանցել եմ Ուղերձը: Կոչ եմ անում ձեզ լսել և ընդունել իմ խորհուրդը: Խաղաղություն նրանց՝ ովքեր ճշմարիտ ճանապարհին են անցել:

(Ահմադ)

Թարգմանություն.

«Ալլահ գթասիրտ, ողորմածի անունով: Աբդուլլայի որդի, Ալլահի առաքյալ Մուհամեդից Բյուզանդիայի կառավարիչ Հերակլիսին: Խաղաղություն նրանց՝ ովքեր եկել են ճշմարիտ ճանապարհի: Ես քեզ Իսլամի եմ կոչ անում: Ընդունիր Իսլամն ու դու կփրկվես՝ (կազատվես քո կատարած մեղքերից և Ալլահի պատժից ապագա կյանքում) Ալլահը քեզ կրկնակի նվիրատրություն կշնորհի (կրկնակի, քանի որ ընդունում է նա և նրան ենթարկվողները): Եթե ժխտես Ալլահի առաքելությունը, ապա պատասխանատու կլինես Արիոսի հետևորդների հետ եղածների համար. «Ասա. «Ով գրության մարդիկ: Եկեք մի արդար խոսքի գանք մեր և ձեր մեջ, որ չենք երկրպագելու ոչ ոքի բացի Ալլահից, Նրան ոչ մի գործնկեր չենք տալու և միմյանց տեր չենք համարելու, բացի Ալլահից»: Եթե նրանք ժխտեն, ապա ասեք. «Վկայեք, որ մենք մուսուլմաններ ենք»»:



Թարգմանություն.

«Ալլահ գթասիրտ, ողորմածի անունով: Ալլահի առաքյալ Մուհամեդից Եգիպտոսի քրիստոնյաների կառավարիչ Կիրոսին: Խաղաղություն լինի նրանց՝ ովքեր եկել են ճշմարիտ ճանապարհի: Ես քեզ Իսլամի եմ կոչում: Իսլամն ու դու կփրկվես՝ (կազատվես քո կատարած մեղքերից և Ալլահի պատժից ապագա կյանքում) Ալլահը քեզ կրկնակի նվիրատրություն կշնորհի (կրկնակի, քանի որ ընդունում է նա և նրան ենթարկվողները): «Ասա. «Ով գրության մարդիկ: Եկեք մի արդար խոսքի գանք մեր և ձեր մեջ, որ չենք երկրպագելու ոչ ոքի բացի Ալլահից, Նրան ոչ մի գործնկեր չենք տալու և միմյանց տեր չենք համարելու, բացի Ալլահից»: Եթե նրանք ժխտեն, ապա ասեք. «Վկայեք, որ մենք մուսուլմաններ ենք»»:



Ինչպե՞ս դառնալ մուսուլման

Մուսուլման դառնալու համար պետք չէ կատարել ինչ-որ անհասկանալի, մտախոհող ծիսակատարություններ, որոնք կատարվում են հատուկ տեղում կամ որոշ մարդկանց ներկայությամբ: Իսլամում մարդը դիմում է իր Աստծուն անմիջականորեն՝ առանց որևէ փոխանցողների: Այդպիսով Իսլամ ընդունողը ուղղակի վկայում է, որ չկա երկրպագման արժանի աստվածություն բացի Ալլահից, և որ Մուհամեդը Ալլահի առաքյալն է: Անկեղծությամբ հնչում է այդ վկայությունը- «Լյա իլահա իլլա Ալլահ, Մուհամմադ-ռասուլու Ալլահ», մարդը սկսում է նոր կյանք, և նրա անցյալի մեղքերը լվացվում են:

Ալլահը Սուրբ Ղուրանում ասում է.

«Բացի մեղանչող, հավատացող ու բարի գործեր անողներից, նրանց համար Ալլահը կփոխի նրանց Սահատները (արված մեղքերը) նվիրատրությամբ (ասես բարեգործություններ են արել) և Ալլահը Գաֆուր (ամեն ինչ ներող), Ռահիմ (Ողորմած)»:

(Ղուրան 25:70)

Ինչ վերաբերվում է Իսլամ ընդունած աստվածաշնչի մարդկանց, ապա Ալլահը նրանց համար պատրաստել է կրկնակի նվիրատրություն, նրա համար, որ նրանք հավատում էին իրենց առաքյալին, այնուհետև հավատացին մարգարե Մուհամեդին (խաղաղություն և Ալլահի օրհնանքը լինի նրան) և համբերատար ու անկեղծ էին ճշմարտության որոնումներում:

Ալլահն ասում է.

«Նրանք՝ ում մենք նախկինում գրություն (Աստվածաշունչ և Ավետարան) էինք շնորհում, մինչ (Ղուրանը), հավատում են դրան (Ղուրանին) (ուղղված է Մուհամեդի ժամանակաշրջանի Իսլամ ընդունած քրիստոնյաներին ու հրեաներին՝ինչպիսիք են Աբդուլլա իբն Սալլամն ու Սալման Ալ-Ֆարիսին): Երբ նրանց դիմաց ասվում է դա, նրանք ասում են. «Մենք հավատում ենք դրան, դա մեր աստծուց եկած հայտնությունն է: Ճշմարիտ, մենք և նախկինում մուսուլմաններ էինք»: Նրանք ստանում են իրենց պարգևատրությունը երկու անգամ (կրկնակի), նրանց համբերատար լինելու համար: Նրանք չարիքին բարիքով էին հեռացնում, և այն ամենից՝ ինչ տալիս ենք ծախսում են (խղճով)»:

(Ղուրան 28:52-54)

Բացի դրանից Ալլահը մաքրում է Իսլամ ընդունելուց առաջ կատարած բոլոր մեղքերը:

Մարգարեն ասել է.

«Իսլամը թողում է բոլոր նախկին մեղքերը»:

(Ալ-Մուսլիմ)

Եզրակացություն

Իսլամը լինելով վերջին Աստվածային կրոն կատարյալ է ամեն ինչում: Նա իրենից ներկայացնում է կատարյալ կանոնների հավաքածու, որոնք հսկում են իրական և ապագա կյանքերը: Դուք մուսուլամի պահվածքի մեջ կարող եք որևէ անբավարարություններ նկատել, բայց իմացեք, որ այդ անբավարարությունները Իսլամին չեն վերաբերվում: Այդ անբավարարությունների լինելու պատճառը կարող է լինել անբարյացակամությունը կամ հավատքի պակասը: Այդ պատճառով որպեսզի լինեք օբյեկտիվ Իսլամի մասին մի դատեք նրա հետևորդների բացասական կողմերին նայելով:

Կցանկանայի, որ այս ոչ մեծ աշխատանքը լինի ձեր ճշմարտությունը ճանաչելու բանալին: Միաժամանակ Իսլամը ուսումնասիրելու համար մենք առաջարկում ենք հետևյալը.

1 Ազատվեք հին մտածելակերպից:

2 Մտեք այդ ճանապարհ Իսլամը մաքուր հասկանալու համար, այլ ոչ թե անբավարարություններ փնտրելու:

3 Մտածեք օբյեկտիվորեն և կուրորեն մի հետևեք ուրիշների կարծիքներին, որոնք հաճախ շեղում են ճիշտ ճանապարհից:

Ամբողջ փառքը պատկանում է Ալլահին՝ աշխարհների Տիրոջը:

Ասել է Ալլահը պահպանի Իր առաքյալին ու նրա ընտանիքներին և պահպանի նրան ամեն ասվածից:

«Մենք նրանց ցույց կտանք Մեր նշանները ամբողջ տիեզերքով և նրանց ներսում, մինչ նրանց համար պարզ լինի, որ դա (Ղուրանը) է ճշմարտությունը: Մի՞թե հերիք չէ այն, որ քո Աստվածը ամեն ինչի վկան է:»

(Ղուրան, 41-53)

الحمد لله رب العالمين

والصلاة والسلام على أشرف المرسلين وعلى آله وصحبه وسلم

Օգտակար ինտերնետային կայքեր

www.islamland.org

www.islamhouse.com

www.sultan.org

www.islamreligion.com

www.islam-guide.com

www.missionislam.com

www.islamtoday.com

www.islamic-invitation.com